



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորր

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material




ՄԻՔ. ԱՎԵԿՏԵԼՈՒ

Ա Ր Ա Գ Ա Տ Ը
Կ Շ Ա Դ Կ Ի

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

891.99
U-27 University of U.
~~University of U.~~ 10.n.



ՄԻՔԱՅԵԼ ՄԱՆՎԵԼՅԱՆ

891.99
5-27

Ամսական է 1981 թ.

ԱՆԱՊԱՏԸ ԿԾԱՂԿԻ

A 28519



ՊԵՏՑՐԱՍ

1933

ՅԵՐԵՎԱՆ

Wrightsville

ԱՌԱԶԻՆ ՄԱՍ

1

Յերեք ձոր, հսկա վիշապների պես իրար սեղմված, դալար-
վելով իջել են Նիզետի սարի լանջից, գլուխները հանել են
հովտի վրա, ակնդեռ նայում են ցածում հոսող գետակին և ծա-
րավից պապակած, անկարող այլես առաջ սողալու, յերկարել են
վղերն ու քարացել:

Նրանց յերախից ժայթքող կիզիչ շունչն ե կարծես այդպես
այրել, տոչորել ամբողջ հովետը:

Ջորաբերանից մինչև ցածում հոսող գետը չոր ե ու ամայիչ

Հեղեղատը լցված ե մեծ ու փոքր գետաքարերով, վորոնց
դարնանային հեղեղներն այնպես առատորեն քշել, բերել են Նիզե-
տե և Գինդար սարերից:

Տեղաներ այդ քարքարուտի մեջ խղճուկ փշեր են բռւսել,
գետնից մի թիզ հաղիս բարձրացել ու անջուր չորացել են, սուր
փշերը ցցել ասեղների պես:

Գետը խորն ե ընկած, տասը քայլեց չի յերեւում: Նա կար-
ծես գիտմամբ չանդուտել ե հատակը, ավելի խորը գնացել, վոր
իր ջրից մի կաթիւ անզամ բաժին չհանի ծարավից պապակած
այդ հովտին:

Գարնան անձրեներից հետո, այլես վոչ մի կաթիւ ջուր չի
ընկնում այդ նորվված հովտի վրա, և կիզիչ արեի տակ խարկ-
վում են գեռ նոր ծլած ծաղկել ու խոտ:

Այդ հովտն ընկած ե անշարժ՝ մի հսկա լեշի պես:

Հարյուրավոր ոձեր, կարիճներ, խլուրդներ են վիտում այդ
ամայի տարածության վրա:

Հեռվում կապտին տռող լեռների միջից իմաստորեն վեր ե
ալացել Ողձասարը. նա իշխում ե այդ լեռների վրա: Այդ սարի
վրա յե գտնվում ոձերի արքան՝ փայլուն, ականակուռ թաղը
դլիսին: Այդտեղից ե նա հրամայում հպատակներին՝ հարձակվել
թշնամի ցեղերի վրա և անխնա ջարդել, վոչնչացնել նրանց:

Հարյուր տարին մի անգամ այդ լեռան ծոցից հաղարավոր
ոձեր են դալարվելով դուրս սողում և գետի պես սրբնթաց արշա-

վում դեպի կոխը՝ միապետի անողոք հրամանով, առանց խմանաւու զրա պատճառը։ Յեվ այդ կոխը լինում և ավելի վայրադ, սովորված գաժան, քան մարդկանց կոխը։

Այսուեղ, ուր յերկաւ թշնամի ցեղեր հանդիպում են իրար, ոճաղիյերից բլուրներ են կաղմվում, և բլուրներն այդ հովտում ոճակույտների յն նման։

Այդ լեռների քար ու աղասամների, ոճերի ու կարիճներից աշխարհում և դանվում Դ. գյուղը։

Նա կպել է Վոսկեձորի բերանին և նայում է հոսու կապտին ավող սարերին։

Իր մոայլ ըրջապատում այդ ձորը կարծես հեղնում, ծաղրում և գաժան բնությունը։

Զորը գալարվում է դեպի վեր, մինչև բարձրաբերձ սարերը, վորոնք ճոխ ճոխ բուսականությամբ են ոճնված։

Եերկու աղասամնոտ ձորերի մեջ ե սեղմված Վոսկեձորը։ Նա յուր ծոցում աճեցրել է հոկա չինարներ, ընկույզնիներ, վորոնք հուժկու թերքը հպարտութեն տարածել են չորս կողմը և իրենց հովանու տառկ առել ընդարձակ հրամարակներ։

Զորակի այդիները լիքն են անուշահամ, հոսավետ պատուղներով։ Խաղողի վողկույզներն այդ ձորում յերկու կելոյից ավելի են կշռում, դեղձն սպիտակ ե՝ բամբակի պես, փիրուն՝ շաքարի նման, տանձն ու խնձորը բռով չես բռնի, խել դեղին սալորի մեջ, ինչպես հստակ ջրերում, նշաճե կորիզն ե ցոլում։

Իրարից 3-4 մղոն հեռավորության վրա ցըլած են Վոսկեձուի գյուղերը։

Մի գյուղի այգիները վերջանում են, սկսվում են մյուսի այգիները։ Ամբողջ ձորը մի այգեստան ե, վորը չի ընդհատվում, մինչև սկսվում են լեռները — գրանիտե կարծր սպառաժներ, վորոնց վրա փուշ ել չի աճում։

Դ. գյուղի դիմաց, բարձրավանդակի վրա, հեղեղատից յերեք մղոն դեպի աջ, բարձրանում ե Ո. քաղաքը՝ թաղված կանչի մեջ։

Դ. գյուղում և արևելյան այդ փոքրիկ քաղաքում մետաքսաթելի գործարաններ կան, վորոնց շակների ձայնը, յերեկոյան զանգերից առաջ, շնչակտուր, հեվալով դուրս են պրծնում ողի մեջ, և լեռներն արձանագանքում են նրանց։

Վոսկեճորի գյուղացիները շերամապահությամբ են լրացնում իրենց ապրուստը։ Հողն ու ջուրը պահաս այդ ձորն ապրուստ չի տալիս գյուղացոն, և տղամարդիկ՝ թողնելով կին, յերեխա, զնում են՝ ոտարության մեջ ապրուստ ճարելու։

Յերկու, յերեք տարին մի անգամ նրանք տուն են զալիս՝ յերեխաներին տեսնելու, վորպեսզի մի ամսից ելի զնան, մինչև այնքան կապահովվեն իրանց, վոր կարողանան դաշ, հանգստանալ իրանց ընտանիքի զրկում, վայելել յերկար տարիների ճակատի քրանքի արդյունքը և մեռնել հարազատների մոտ, թարվել սարի լանջի զերեղմանոցում՝ հայրերի և պապերի կողքին։

Ցոթ աղքյուրների ջրերով և ջրվում Դ. գյուղի հանդն ու այդին, այդ ջրերով և պտտվում գյուղի փոքրիկ ջրաղացը՝ կկղած ուռիների հովանու տակ։

Դ. գյուղին ե պատկանում ձորաբերանից սկսած և մինչև հեռվում հոսող գետը ձգվող տարածությունը, վորն անջուր մնալով, ծարավից չորացել ե, ճաքճքել։

Յերկար տարիներ Ո. քաղաքը և Դ. գյուղը վեճի եյին, թե՝ ո՞ւմ են պատկանում այդ տարածությունը բոնող հողերը։ Իսկ թե դրանք ո՞ւմ եյին պետք, հայտնի չե, կարծես հենց այնպես՝ կովի, վեճի համար եր այդ պայքարը, քան իրական, շոշափելի ողտի։

Ճասնյակ տարիներ ե, վոր կա այդ վեճը։ Կովել են հայրերը, պապերը, թոռները։

Վերջապես Դ. գյուղը գտավ գնման թղթերը, վորտեղ առված եր՝ «այս ինչ թվին, այս ինչ խանը այդ հողերը ծախել ե Դ. գյուղի 14 անվանի մարդկանց», հաստատեց յուր իրավունքները և վեճը դադարեց։

Գյուղը վոգենորվեց, մարդիկ ուղարկվեցին քաղաք, վոր մասնագետներ բերեն, ջուր հանեն, բայց ջուր հացնել այդ հովտին անհնար յեղավ։

Վոչ ցածի գետից ջուր կարողացան բարձրացնել, վոչ ել ձորի դլսին հոսող գետերից մեկն ու մեկի ընթացքը փոխել, ծակել գյուղի աջ կողմում բարձրացող կոճղասարը և գետի ընթացքն ուղղելով այդ կողմը, ջրվեժ դարձրած թափել ցած։

Վոչ մեկը չիրականացավ։

Գյուղն անզոր եր այդ ծախսերի առաջ, իսկ կառավարության ել չա՞տ հոգն եր:

Յեկ անհապատն ընկած եր անկենդան, մի հոկտ լեշի պես:

Այդ լեռների մեջ աղբյուրները հստակ են ու պաղ՝ սառուցի պես: Արեւ թեժ կրտկի յե նման: Որու զիշեր աղբյուրների ջրերը բարակ առվաճներով թափվում են դյուզի մի քանի այդիներում շինված հստարակական ավաղանները:

Այդուղ են ամբարխում ջրերը:

Եհրը ավաղանը լցվում է, զրի տերն ուրախուրախ քարչ և տալիս ավաղանի ցածի գոնակը փակող յերկար փայտի ծայրը, հանում և ցնցութիւններից և ճահճախտաերից շինված խցանը, և ջուրը՝ կասազած արջի պես քրթմնջալով, կոհուկ-կոհուակ զուրո և ժայթքում ավաղանից և ուրախ խոխոջալով, զնում և վոսողելու այդ կենսարեր հեղուկին սովասող հանդն ու այգին:

Այդ ձորում ամեն մի կաթիլ ջուրը թանգ և զնահատվում: Ջրի համար մարդկի անքուն զիշերներ են անց կացնում՝ ավաղանների մոտ պահակ կանդնելով, վորպեսովի ճիշտ ժամին քանան ավաղանի լոյն բերանը, չմողնեն, վոր հերթի սովասողը ժամանակից մի վայրկան առաջ փակի ավաղանը:

Ամառվա ամիսներին այդիններով անցնող զետակը ցամաքում և վերին դյուզերից մինչեւ այդ ցածում ընկած դյուզ հասնելը և մնում և անհրապույր, չոր: Դ. դյուզին մնում և բավականանալ յոթ աղբյուրների վոչ առատ ջրերով:

Այդ ձորի դյուզերում մարդկի կամ ունեար են և մետաքսի, բամբակի առևտուր են անում մեծ քաղաքներում, կամ աղքատ, հողն ու ջուրը պակաս, վորոնք դրսից փող չեն ստանում և ստիպված են ծառա զառնալ հարուստներին. շատերն ել ուղղակի ընչաղուրկ են. Նրանք վաղուց հողը և ջրի ժամերի հերթը կարիքից ստիպված ծախել են հարուստներին, կամ պարտքի տոկոսների դիմաց տվել նրանց ու մնացել ելի պարտապան:

Նրանք որն ի բուն աշխատում են մի կտոր հացի համար, կամ իրանք ել զնում են քաղաքներում «հարստանալու», տվելի ճիշտ ժշակություն անելու, վոր հաց հասցնեն դյուզ՝ մի տուն վիզը քաղցած կին ու յերեխաններին:

Շատերը մնում են քաղաքում՝ բանվոր դառնում, վոմանք

կրկին դյուղ են դառնում՝ իրենց աղքատությունն իրենց ընտանիքների հետ տանելու:

Քչերին ել հաջողվում և խանութպան դառնալ և ընդունիքներն ել քաղաք տեղափոխել:

Զարգարենց Մուշեղը յերկու տարի յեւ, ինչ ունեցած փոքրիկ այդին պարտքի տեղ աղա Վոսկանին տվել, ինքը քաղաք և զնացել՝ տանը թողնելով պառավ մորը, կնոջը և յերեք յերեխաներին, վորոնցից մեծը օտարեկան աղջիկ եր, փոքրը՝ յերկուս ու կես: Առաջին տարին նամակ եր գալիս, փող եր դրկել, բայց ահա շուտով մի տարի կլինի, վոր վոչ նամակ եր դրկել, վոչ փող: Մայրը դլախն, ծնկներին և տալիս, յերազներ տեսնում, ուխրում և ուրախանում, դրացների մոտ գնում: Կաչաղակը յերբ նասում և իրենց փոքրիկ խարիսխած տան կտրին և կչկչում, կաչաղակի հետ նա յել՝

— Խե՛ր...խե՛ր...խե՛ր... անում, հավատալով, վոր կաչաղակն ուրախ լուր բերող և: Բայց որերն անցնումեյին որերի հետելից, իսկ լուր չկար ու չկար:

Կարիքից ու զարդից կուչ յեկած, մայրը սրանրա դռանը ըլացք եր անում, դրդնակ քաշում, խմոր անում... Բայց չորս հոգու հաց հասցնել չեր կարողանում:

Հարսը՝ Նոյեմը մի քանի անգամ ինդրել ե, վոր թողնի՝ ինքն ել զնա աղա Վոսկանի մետաքսաթելի գործարանում բանելու, բայց նա լսել անդամ չեր ուզում: Ի՞նչ կասի Մուշեղը. նա դեմ կլինի, վոր յուր կլինը զնա աղա Վոսկանի գործարանը, ուր զնում ելին ամենից ճար կտրածները:

— Նա իմ մինումարին չոլերը գցեց — մինումարի վրեն վատա...չե՛...չե՛...աստված վողորմած ե, նամակ ել կգա, փող ել կստանանք...

Բայց կարիքի տունը քանդվի, ինչքան ել «չե» ասաց, համառեց, վերջն ստիպված յեղակ թողնել, վոր գնա:

Եղ որը Մուշեղի մայրն առավոտը լուսածաղին խմոր անելու եր զնացել. Նոյեմն ել յերեխաների ձեռը մի մի կտոր հաց տվեց, պատվիրեց մեծին, վոր լավ նայի յերեխաներին ու գործարան շտապեց:

— Մամա՛, Հերիքնազ նանն ասում եր բաղ զնանք՝ թութ ու-
տելու, կթողնե՞ս, կանչեց մոր հետեւից մեծ աղջիկը:

— Լա՛վ, դժացե՛ք, — քիչ մտածելուց հետո՝ ասաց մայրը:
— Բայց զգո՞ւյշ, յերեխին լավ նայի՛ր... ավագանին չմոռե-
նա՛ք...

— Լա՛վ, լա՛վ, մայրիկ ջան, — ուրախացած բացականչեց
աղջիկը:

Արևն արդեն բավականին բարձրացել եր, յերբ Հերիքնազ
տատը քանզիմած պատի արանքից ձայն ավեց:

Մեծ աղջիկը զրկեց փոքրին, միջնակն ել առաջ ընկալ և
ուրախութափ վաղեց:

Թթի ժամանակն եր: Նա արդեն պատկերացնում էր իրեն
թթի շորը բռնած: Մասի վրայից մարդը վստով խփում և ճյուղին
և թութը կարկուտի պես թափալում և թթի շորի վրա՝ ցատկուել
լով: Ականջ մտուիները վախեցած, գես ու զեն են վաղվզում: Նա
ամեան պարզ պատկերացրեց զույգ աղոչանի ականջմտուիներին,
վոր վախեցած ձայնով հարցրեց.

— Ականջմտուին ականջ կմտնի...

— Զե՞ւ, անունն և եղածես, սկի ել ականջ չի մտնի, — պատաս-
խանեց հարևանի աղջիկը և ծիծաղեց:

Փոքրիկը հանգստացած ելի առաջ վաղեց:

Կեսոր եր:

Գործարանի շքակը հնչեց այնպես խղճուկ, վոր կարծես ա-
մաչում եր ինքն իբանից:

Բանվորները թողին գործը, և ամեն մեկը նստեց յուր չոր-
հացը կրծելու:

Նոյեմզարի միրտը հանկարծ այնպե՞ս տիրեց: Թաշկինակի
մեջ փաթաթած հացը բաց արեց, մի կտոր առավ, վոր բնբանը
տանի ու այլպես ել մնաց քարացած՝ հացի կտորը ձեռքին:

Սիրտն ինչ վոր վատ բան նախաղզաց, կարծես խկույն մեկը
գալու յե ասի՝ «Ել պըծա՞վ, ել զո՞ւր ես սպասում, ել հետ չի՞
գալու»: Նա ցնցվեց ամբողջ մարմնով, ձեռքը տարավ գեղի-
չլուխը, շիեց ճակատը, ցած դրեց ձեռքի հացը, վոտքի յելավ,
մոտեցավ աղբյուրին, սառը ջրից բուռ-բուռ խմեց, լվաց յերեսը:

Կարծես մի քիչ լայլ զզաց և ինքն իր վրա ծիծաղելով, դնաց, վոր հացն ուտի:

Նոր եր նստել, նոր մի կտոր հաց կուլ եր զնացել, վոր լեզապատառ ներս վաղեց միջնակ աղջիկը՝ մեռելի նման գունատ—մամա, —ճշաց ու ել վոչինչ չկարողանալով ասել, ընկալ մոր զիրիկը:

— Հը՛, ի՞նչ կա...ի՞նչ և պատահել.—ուժով բարձրացնելով աղջկա զլուխիը, հարցրեց վախեցած մայրը:

— Մամա'...մամ', —հեծկլտալով կմկմաց աղջիկը:

— Ի՞նչ և պատահել...շուտ ասա', սիրս ճաքեց:

— Սաթիկը...

— Ի՞նչ, ո՞ւր ե... ի՞նչ յեղալ...Բալա ջա՞ն, քոռանա' մերդ...

— Ջուրն ընկալ...

Մեռելի նման գունատ՝ Նոյեմզարը ցատկեց տեղից, չանգուեց դեմքը, պոկեց մաղերը՝ ատամներն իրար սեղմած, վոր ճայն դուրս չգա, մնչաց ու արագ դուրս վաղեց գործարանի մեծ դարպասից:

— Աղջի՛, աղջի՛,...եղ ո՞ւր...

Լսեց հետեւից, բայց ուշադրություն չդարձնելով, վագեց, աղջիկն ել նրա հետեւից:

Ուշադրաբի նման նա ներս մտավ այդին, աստիճաններով բարձրացավ ավաղանի զլուխիը: Այնտեղ մարդիկ եյին հավաքված: Բոլորի գեմքերը խառնվեցին իրար, վոչ վոքի չճանաչեց, աշքերը կանգ առան փոքրիկ, ուռած դիակի վրա, վորի մոտ մի թաց ձող եր ընկած: Մի քանի վայրէկյան լուսն քարացած հայացքով նայեց դվիսիկոր կանգնած մարդկանց ու — լուս դլորվեց դետին:

— Գետատա'ր լինես: Ենտեղ մարդդ, եստեղ՝ յերեխեղ... Բալքէ ճակատիդ եղ եր զրած: Փա՛ռք քեղ, աստվա՛ծ... Խեղճ լինես դու, —թևքերով աչքերը որբելով, ասաց Հերիքնաղ տատը, կոանալով ուշաթափ նոյեմի վրա:

Ես որ ծակ քար ազրյուրի ջուրը 14 ժամ աղա Վոսկանինն ե:

Դեռ յերեկ, զանգերից հետո, շուն Գալուստը, աղա Վոսկանի այգեպանը, խցկեց ավաղանի գռնակը և յերկու ձեռքով բոնած մի մեծ քարով այնքան հարվածեց իցանին ամբացրած փայտի

ծայրին, վոր վոչ մի՛ կաթիւ ջուր չանցնի փալասների և ճահճա-
խոտերի միջից :

Մութը գեռ լավ չեր ընկել, վոր պառկեց, վորովեսդի առա-
վոտյան մութը—մթին զնա այդին ջրի :

Լուսածաղին նա վոտները մինչև ծնկները քշեց, բահն ու-
մին զրեց և անեցիներին քնած թողած, զնաց :

Նա զուրս յեկավ դյուղի մեծ գարսասից, գերեզմանատան-
մափեց ծովեց գեղալի աջ ու ընկավ այդիների մեջ :

Ճահապարհը նեղ եր :

Տեղ—տեղ յերկու այդիների ծառերը դարս եցին հանել
դլուխները կալի ու քարտշար պատերի միջից և իրար փաթաթ-
վել կամ բնական կամուրջ չվնել՝ ևս արդուց են այդին անցնելու :

Ճահապարհի յերկու կողերում առու յեր փորած :

Բահն ուստին՝ շվշվացնելով դուռմ եր :

Ճահապարհին մարդ չհանդիպեց : Դեռ լույսը լավ չեր բաց-
վել, վոր նա հասավ աղաւ Վոսկանի այդու քարտշար ուստերին :
Եանդ առավ մեծ դարսասի առջև, դուռ միջից հանեց յերեք
տոտմանի հսկայական բանալին, միքանի վայրկյան պատեցրեց,
մինչև վոր փակը, թուժու յեկած հավի պես կլիստալով հետ զնաց
և դուռը կրնկի վրա բացվեց : Նա ներս մտավ ու հետեւց կրկին
փակեց դուռը : Բայց մի քանի քայլ հաղիվ եր արել, վոր կանդ
առավ, լարեց լսողությունը, ձգվեց ամբողջ հասակով, վորս
դուռ շան պես խլարեց և յերբ ել կասկած չմնաց, վոր լսողու-
թյունն իրան չի խարում, համարյա վաղելով, հասավ ավաղանին :

Ավաղանի դռնակը փակող արգելակը մի կողմ եր ընկած,
ցնցուակիների վրայից ջուր եր կաթում, իսկ ավաղանից ջուրը վա-
լորապառույտ դուս եր ցայտում նեղ անցքից և փրփրալից,
ուրախ—ուրախ թուշկուալով, մամուպատ քարերի վրայով հոսում
եր կանաչ խոտերի միջից, ծիծողելով՝ քնից նոր զարթնած ման-
կան նման :

— ե՛յ...

Մոնչաց նա ահոելի ձայնով, կատաղած՝ շուրջը նայեց, բայց
մարդ չտեսնելով, մի կողմ նետեց բահը և վորսի վրա հարձակ-
վող վարազի պես ընկավ արգելակի վրա, առավ ու առանց վայր-
կյան կորցնելու՝ վաղեց ավաղանի բերանը փակելու :

Նա յերկար չարչարվում եր, աշխատելով ջրի հոսանքի ա-
ռաջն առնել : Ավաղանից ուժովին թափով ժայթքող ջուրն ար-

դեւքի հանդիպելով, բարակ շիթերով դուրս եր պրծնում շատըր-
վանի պես, թրջում նրա զգեստները, դեմքը. էսկ նա ուշք չդարձ-
նելով, ճզնում եր արդելել հոսանքը, փակել դռնակը: Շատ չար-
չարվելուց հետո, վերջապես նրան հաջողվեց փակել, բայց ջու-
րը դու բարակ շիթերով պղղում եր խցանի արանքից:

Նա առաջ զլուխը հանեց, ապա ամբողջապես դուրս յեկավ,
մի մեծ քար վերցրեց ու յերկու ձեռքով սկսեց տնքալով ու փըն-
չալով հարվածել արդելակի հակառակ ծայրին, մինչև վոր այլես
վոչ մի կաթիլ չուր դուրս չեր դալիս աշականից:

Ապա մի կողմ նեսեց քարը, թիքով որբեց մաղերից դեմքին,
ուսերին կաթկաթող ջուրը...

— Եղ ի՞նչ բանի յես:

Նա բարձրացրեց զլուխը և տեսավ մի քանի քայլի վրա այ-
դու հաբեան Հարումենց Յեղիսյին, մերկ սրունքներով, բառն
ուսին, կատաղությունից կարմրած աչքերով:

Նա բնաղդորեն ձղվեց և անմիջապես պաշտպանողական դիրք
ընդունեց:

— Ես դո՞ւ յես բացել:

— Ցե՛ս:

— Ինչո՞ւ յես բացել:

— Ա՛չքդ ել եմ հանել:

— Դու ո՞ւմ շունն ես...

— Շունը դո՞ւ յես...

— Եղ քա՞նի զլանի յես, վոր աղա Վոսկանի ջուրն ես զո-
ղանում: Գիտե՞ս, վոր զլուխով աղցան կշնեմ, հարամզադա'...

— Հարամզադա յել ու մի բան ել ավելի: Բաղս չորանում
ե: Աղա Վոսկանի բաղը տասն որ չկա, ինչ ջրիկ ե, իմն ամսից
ավելի ե, ջրի յերես չի տեսել...ել հերիք ե:

— Ջուրը քոնը չի:

— Իմն ե, իմը չեմ—մեկ ե: Բաղս հո՞ չեմ թողնի վոր չորանա-
արյուն կանեմ, բայց կջրեմ, բողազի՛ս հասավ:

— Եղ ջուրն ել քոնը չի, հասկացիր: Աղան առել ե... վոր
ե ավել, չե՞...

— Առանց ջրի բաղ կլինի՞...

— Չտայիր...

— Ել չեմ իմանում, պետք ե ջրեմ...

— Մոտ չդա՛ս:

— Գալո՛ւստ, թող չնությունդ, հերիք հարումտների վոտ-

Ները լիղես . . . Հասկացիր՝ յերեխաներիս հացն ևս կտրում, խմանում ես. նրանց չոր հացը: Գիտես, վոր ջուրն խմն ե, աղա Վոսկանն անբրավ կերպով ե խլել:

- Յես ինչ անեմ:
- Դե՞ն, պետք ե բանամ . . .
- Տեղիցդ չշարժվե՞ս . . .
- Պիտի բանամ . . .
- Դե՛, բաց:
- Կրանամ:

Գոռաց նա և հարձակվեց Գալուստի վրա, վոր փակել եր ճանապարհը: Հրեց նրան յերկու ձեռքով:

Գալուստը, վոր այդ զբոհին չեր սպասում, որորվեց, մի քանի քայլ հետ-հետ դնաց, հավասարակշռությունը կորցրեց և կընկներ, յեթե զեմ չառներ ավաղանի պատի մոտ բուսած ինձու բենուն:

- Շո՞ւմ, չամ վորդի:

Ուշքի գալով, գոռաց Գալուստը և հարձակվեց Յեղիայի վրա, վորն արդեն մոտեցել եր դռնակին ու աշխատում եր դուրս քաշել արգելակը:

Գալուստը բռնեց նրա վոտից և սկսեց քարչ տալ զեսպի դուրս:

Յեղիան յերեսի վրա փուլեց զետին, բայց ճարպկորեն վոտի յելազ, ելի յետ մոտեցավ դռնառին:

Գալուստը զեսպի դուրս եր քարչ տալիս, Յեղիան դեսպի ներս:

Յեղիան տեսնելով, վոր չի լինում, դուրս յեկավ:

Մի քանի բոպե արջերի նման իրար փաթաթված, նրանք աշխատում եյին իրար մեջք վոլորել, բայց վոչ մեկը չեր ընկ-ճպում:

Հանկարծ բաց թողին իրար, մի քանի քայլ հետ-հետ դնացին՝ ավելի մեծ թափով հարձակվելու համար . . .

Անսպասելի կերպով Հարումենց Յեղիան գետնից մի մեծ քար առաջ և մինչև Գալուստն ուշքի կգար, ամբողջ ուժով հասցրեց: Գալուստը ճարպկորեն մի կողմ ցատկեց: Քարը կպավ ավաղանի պատին, փոշի հանեց և ընկառ ավաղանի բերանի մոտ լճացած ցեխախառն ջրի մեջ՝ ցեխ սրսկելով շուրջը:

Լուռ, առանց մի ծպտուն հանելու, Գալուստն առավ կողքին ընկած բահը, կայծակի արագությամբ վազեց ու ամբողջ թափով իջեցրեց բահի կողը Յեղիայի դլիսին: Բայց բահը, փոխանակ դլիսին առնելու, ուսին առավ:

Յեղիան հարսվածի ուժից մի բոպե շշմեց, ապա ցավից մռնաց, արյունակալած աչքերով հարձակվեց և բռունցքով հացըրեց հակառակորդի քիթ ու մոթին:

Արյունը դուրս ցայտեց Գալուստի քթից և առվակի պետականը հոսել, ներկն յիրեսն ու շապիկը:

Նա ամբողջ մարմնով կծկվեց, ցավից տնքաց, աչքերը մթնեցին, բայց իրեն չկորցրեց, մի վոստյունով հարձակվեց հակառակորդի վրա և հետ-հետ մզելով՝ դեմ տվեց պատին, բռնեց կոկորդից, ու ջլուտ ձեռքն աքցանի պես սեղմեց Յեղիայի կոկորդը: Խեղճի աչքերը դուրս պրծան, նա ճիգ եր անում աղատվելու, վոտքով քացահարում եր, ձեռներով աշխատում եր հառնել նրան, բայց ձեռներն ոդի մեջ աննպատակ շարժումներ ելին անում և չեր հասնում Գալուստին:

Ատամներն իրար սեղմած, նա չեր կարողանում ձայն հառնել, մռնչում եր՝ վոտները կապած յեղան նման:

Արյունը ներկում եր Գալուստի շապիկի թեր, վոր կեղտից մոխրապույն եր դարձել:

Գալուստի աչքերը վոր ընկան Յեղիայի վրա, վախեցած, ուզեց բաց թողնել նրա կոկորդը, բայց կարծես ելեքտրական հոսանք եր անցնում կռնով և անկարող եր, իրանից չեր կափած բաց թողնելը... նա մեքենարար սեղմում եր. կարծես ինքը չեր, յուր յեղունվները չեյին այնպես վայրագործն միրճվել հակառակորդի մսերի մեջ:

Գալուստն ուշքի յեկավ, յերբ զգաց, վոր հակառակորդը դադարեց դիմադրել: Անդիտակցարար նրա ձեռքը հետ քաշվեց ու ինքը հետ-հետ զնաց:

Յեղիան պատի վրայից սահելով, ընկավ թաց գետնին...

— Վա՛յ, ամա՛ն...

Լսվեց մի կանացի սուր ճիչ...

— Քոռա՛նաս դու, ա՛յ Գալուստ, բալաներիդ վրա վայտաս... Յեղիա՛... Յեղիա՛... Ես ի՞նչ ես արել, սարի՛ արջ... Այս հարա՛յ, ողնեցե՛ք, եստեղ մարդ են սպանում:

— Զե՞նդ, լաչառ, ... մի վախենա, չի սատկի... տեսնում ես, ուշքի յեղալիս ... վոր ուշքի զա, ասա, վոր մեկ ել բռնել եմ, քոսոտ զլուխն ավազանի դռնակն եմ կոխելու՝ խցանի տեղ...

Նա բահն ուսին դրեց ու արյունլվա՝ իջավ ցած:

Յեղիայի կինը լալով, ոխտը պորամ անիծելով, ուշքի բերեց ամուսնուն ու նստեց կողքին՝ աչքերը չհեռացնելով նրանից:

— ԱՇ ԺԱՐԴ...

Յեղիան մեկ շշմածի պես կնոջն եր նայում, մեկ իրան, մեկ դեռ ու դեն, զլուխը չեր մնում ուսերի վրա, կասես պիտի ցաւընկներ՝ թաղը մեռած ճմերուկի պես:

Կինն ինչքան խոսեցնում եր, նու պրատասխան չեր տալիս ու արագ-արագ հևում եր:

Կինը թացացրեց Յեղիայի դլուխը, յերեսին ջուր ցանեց, մինչև վոր նա կտմաց-կտմաց իրան դառավ, ծանր տնքաց, խոր շունչ քաշեց ու մնաց զլուխը կախ:

— ԱՇ ԺԱՐԴ, Ես ի՞նչ հալի յես...

— Կա՛ց, թող մնա՛... յես նրան ցույց կտամ:

— Ի՞նչ պիտի անես եղ չոլի արջին:

— Կտեսնե՛ն...

— Եսոր մեր ջրի ո՞րն ե:

— Զգիտեմ... արտո, բաղս չորանում ե... յերեխեքիս ապրուստը կարվում, բա յես ի՞նչ հողը տամ դլմիս... Զրիս ժամեւը պարտքի տոկոսների տեղ առաջ ձեռքիցս, ակի առաջ հերիք չեր անում, հիմա ութ ժամ աղաս Վոսկանը սեփականացրեց, յես ի՞նչ սմեմ առանց ջրի... Առանց ջրի բաղը քա՞նի դրոշ արժե... ես ոյի՞ն ե... Աղաս Վոսկանի բաղը յերկու շաբաթ չկա, ջրվել ե, իսկ իմը գեղնել ե, կապտել. բա ես ասուլած վեր կտոնի՞, թե՞ քոռացել ե:

— Վե՛ր կաց, հենց եղաքես վեր կաց, մելիքի մոտ դնանք:

— Զե՛, չե՛. նրա դատաստանը յես իմ ճեռքով պիտի անեմ, վոր սիրոս հովանա, դու հա կաց, ինձ Յեղիա կասեն, — եժան չե՞մ նստացնի:

Մելիքն ի՞նչ պիտի անի, ելի նրա կողմն ե բռնելու: Աղա Վոսկանի ջրի որն ե, եղ յես վո՞նց եմ համարձակվել... Մելիքն ի՞նչ պիտ անի. աղին թողած, հո մեր կողմը չի՞ պահելու: Մեղամբը ները միշտ ել չքամբոներն են, բա չզիտե՞ս...

Նա որորվելով, վոտքի կանզնեց, մոտեցավ առվին, վոր լճացած ջրում լվանա յերեսը, կինը բռնեց թել.

— Ի՞նչ ես անում:

— Թող մի յերես-մերեսս բվանամ, ամոթ ե գյուղով անցնել:

— Գետք չե, հենց եսակա ել արնակոլոլ դնանք, թող տեսնեն:

— Ո՞վ, մելիքը, — քմծիծաղ տվեց Յեղիան. — Շունը՝ չնից, յերկուսն ել մի տնից... Բայց յես ել լավ հասցրի քիթ ու մոթին թող վորտեղ իրանը կասի, ենտեղ ել՝ իմը:

— Ախար եղ ինչպե՞ս յեղավ, վոր կպաք:

— Դե՛, յես ինչ գիտեմ, ջուրը բաց եյի թողել, խիարի բոստանի կեսը հաղիս եյի ջրել, ջուրը բարակեց ու կտրվեց: Գամ տեսնեմ՝ եղ հարամդադաշուն Դալուստը...նա՝ ինձ, ես՝ նրան, զե՝ —ակսվեց...

— Ասացի ել — չանես, խաթա կղա, ամա քո հախից ո՞վ կղա, մի բան վոր մտալ վլուխդ, ել պրծա՞վ: Ա՛յ, տեսա՞ր, փոխանակ բաղդ ջրելու, քեզ են արյունով ջրել:

— Վոչի՞նչ, յես ել նրա պակաս տեղը չթողի...

— Գնա՞նք...վե՛ր կաց:

Յեղիան վեր կացավ, վերցրեց բահը և բահի վրա հենված՝ որորվելով, կնոջ հետ զնաց զեղի դյուզ:

3

Կամաբարակապ, հաստ սյուներով, սպիտակ գալած տունը, վոր ամելի շուտ հեքիաթային դդյակի յէ նման, քան մի դյուզական տան, շրջապատված և բարձր պարիսպներով և յուր մեջ և տուել տունը, խոհանոցը, գոմը, թոնրատունը:

Մեծ-մեծ, որուրս պրծած գամերով նախշած դարպասը փակ և, յերկաթե ծանր մուրճը վրան կախ:

Դեպի տուն տանող աստիճաններից յերկու քայլ հեռու, պատից բղխող աղբյուրը գիշեր-ցերեկ կարկաչելով թափվում և և բարակ առվակով հոսում բակի կենտրոնի քարե ավաղանը, վորի բեջ լողում են ճկույթի մեծությունից մինչև բազկի մեծության արծաթ ձկներ:

Խաղողի միքանի հանդուզն վորդեր պինդ-պինդ դքկել սպիտակ սյուները, վեր են մաղլցել մինչև յերկրորդ հարկի պատը-դամբը:

Ավաղանի շուրջը վարդենիները պճնվել են ալ կարմիր վարդերով: Մարգերում ծաղիկների տասնյակ տեսակներ են ժպտում, աչքով անում, շոյում մարդու նյարդերը:

Բակում ծառեր քիչ կան: Մի խառթութի ծերացած ծառ՝ խոհանոցի առջև, վոր բարձրացել և ու կռացել, ինչպես զառամյալ ծերուկ, թեք և ընկել կտուրին՝ հանգստանալու: Տեղ-տեղ ընտիր դեղձենիներ, մի կեռասենի և մի տաճճենի՝ ծոմը-ված բնովի:

Աղա Վոսկանի տանը կողած և նրա և ընկերության մետաքսթելի դործարանը, ուր բացառապես կահայք են աշխատում :

Մի հարկանի մեծ-մեծ պատուհաններով ընդարձակ սենյակ և գործարանը, ուր լուսարացից մինչեւ յերեկոյան զանգերը լովում եւ իլիկների վժժոցը, իսկ պատուհաններից դուրս և թափվում խաշած բուժութից բարձրացող դոլորչին :

Փողոցից, դոլորշու շղարշի միջից յերեսում են կահայք, փոքրիկ աղջիկներ, վորոնք՝ վիստում են կաթուանների շուրջը, իլիկների մոտ : Իլիկների ճայնին միանում են կանանց ճայները և այդ ընդհանուր ժխորի միջից՝ յերեմն Մակիչի իշխող ճայնը :

Փոքրիկ աղջիկներ՝ հաղիվ 12 տարեկան և պառագի կահայք 20–40 կոպեկով աշխատում են այդ բոժոժահոտի ու խոնավության մեջ :

Սարգի վստայնի նման բարակ մետաքսը փաթաթվում և իլիկներին՝ միալար վժժոցով :

Գործարանի մյուս մասում տղամարդիկ են — թուրք ու հայ խառը :

Գործարանին կից կա մի ընդարձակ սենյակ, վորը և զրասենյակ և և կցուատուն : Այդտեղ իրար վրա դարսված են մետաքսաթելի հակերը՝ պատրաստ քաղաք անզավոխելու . դեռ հակերի մեջ չեղմված՝ անկյուններում իրար վրա թափված են մետաքսի սպիտակ, բաց-դեղին քուլանները :

Այդ սենյակում մի քանի տղամարդիկ թել են կշռում, հակեր կապում : Թե՛ գործարանի և թե՛ այդտեղի արթուն պահապանն և աղա Վոսկանի կառավարիչ պ. Մակիչը :

Ամեն բան կախված է նրանից . նա՛ յե աշխատավորներ վարձում, նա՛ յե արձակում, յեթե մեկն ու մեկը համարձակվում է հակառակել կամ ուղղակի չի աշխատում հաճոյանալ . նա՛ յե կազմակերպում բոժոժահաղթաքը, նա՛ յե սակարկում, վոր նշանակված դնից խարեւով մի բան պակասով առնի, նա՛ յե շան նման հոտոտելով ամենից առաջ խմանում՝ ի՞նչ են անում, ի՞նչ խոսում գյուղում, ով ո՞ւմ աղջիկն եւ ուղում, ո՞ւմ են մերժել, ո՞վ և կնկանը ծեծել, ի՞նչի՞ համար և այլն :

Հաճախ նա Ո. քաղաք և գնում, ուր պտնվում և թահիմ աղայի թելի գործարանը, վորպեսզի տեղիկանա՝ ի՞նչ կա, դորձերն ինչպես են . . .

Մակիչն աղա Վոսկանի հեռու ազգականն ե, նրա աջ թել .

Հավատարիմ շունը։ Աղա Վոսկանի մոտ և մարդ դառել, դիրք ստեղծելու ու կարողություն ձեռք բերել։

Բնդհանուր զեկավարությունը գտնվում և աղա Վոսկանի ձեռքին։ Նա յե տանում զրադրությունը, նա յե հաշիվը պահում, նա յե զեկուցում ընկերությանը՝ գործի մասին, նա յե աղա Ռահիմի հետ սակադին նշանակում և անհողդողդ մնում այդ դնի վրա։

Աղա Վոսկանը Ռահիմին և ցույց տալիս, աղա Ռահիմը Վոսկանին և մատնացուց անում և դյուլացիք ճարահատված՝ նրանց նշանակած չնչին դնով են ծախում իրենց դառն աշխատանքի պառուղները, իսկ աղա Վոսկանը և աղա Ռահիմը գույնը գույնը մետաքս են ուղարկում ուղարկի քարավաններով ու ֆուրդոններով։

Աղա Վոսկանի յերեք յեղբայրները գտնվում եյին զանաղան քաղաքներում, նրանց ընտանիքներն ել իրենց հետ եյին։

Թափրիդ, Թեհրան, Ռեշտ, Մինչև Մոսկվա եյին տարածել նրանք իրենց թաթերն, այդ հաղիով գրագետ մարդիկ։ Ուղտերով, ձիյերով, փոստային սայլակներով Կարյուրավոր մղոններ եյին կտրում, անասելի տանջանքներ կրում՝ հարստանալու անհաղ տենչով բռնված։

Տունքը լիքն եր ամեն տեսակ բարիքներով։ Ոտարության մեջ ինչ դուր եր գալիս, ծանրոցներով դյուզ եր ուղարկվում— հօր տունը պետք և շենացնել։

Գյուղի տունը, գա — նրանց հանդրվաճն ե։ Քաղաքներում պետք ե աշխատել, դյուզ դնալ՝ վայելելու... Ամեն ինչ արվում ե դյուզի տան համար։

Տարիներն անցնում եյին, նրանց կարողությունն աճում եր, բայց նրանք շարունակում եյին ավելի ու ավելի կուտակել։ Փողի ծարավը փողով չեն հաղեցնի, ինչքան շատ հալաքնս, այնքան կրբուվի ախորժակդ։

Աղա Վոսկանը միքանի տարի մնաց քաղաքում։ այդ ժամանակ միջնակ յեղբայրն եր գյուղում։ Բայց կնոջ մահվանից հետո աղա Վոսկանը գյուղ յեկալ ու վեց տարի յե, վոր ել քաղաք չի գնացել։ Յերկրորդ անգամ ամուսնացավ և սկսեց ատել կնոջն ու հալածել... Դուրս կաներ, կրամանվեր, բայց վախենում եր կնոջ աղջականներից, մանավանդ հորից, վորի հետ առևտրական էապեր ուներ։

Առաջին կնոջից նա յերկու յերեխա ուներ։ Մեծը՝ տղան, Մ. Մանվիլյան—Մնապատը կծաղկե

Մոսկվա երև և իրր թե սովորում եր, իսկ աղջիկն արդեն տասնվեց տարեկան եր, բայց յերես առած յերեխայի պես իր ասածի քմահամ:

Բարձրահասակ եր՝ Հոր նման, աչքերը սե, նշանձեւ ճեղքվածքով՝ մոր աչքերի նման։ Յերկու հաստ հյուսերը մինչեւ ծնկներն եյին հասնում։ Ճկուն եր ու նաղելի, մորթը ճերմակ։ Մաղերի և աչքերի սկսությունն ավելի եյին շեշտում մորթի ճերմակությունը։ Նա թեև 16 տարեկան եր, բայց շատ ասաջարկություններն եյին յեղել։ Նա մերժել եր բոլոր առաջարկություն անողներին։ Հայրն ել նրան արժանի մարգ չեր դանում վոչ միայն զյուղում, այլև քաղաքներից ամառը դյուզ յեկած հարատաշուծ յերխուատրդների մեջ։

Նա խանդում եր և չեր կարսդանում հաշտվել այն մտքի հետ, թե ինչպես մի որ տունը կմնա առանց նրան և ել չի լսվի նրա ծիծաղը, վոր առվի նման կարկաչերով՝ թափվում եր, վոր ամենամուայլ բռպեներին անդամ։ Հալեցնում եր իր սրտի սառուցը։

Աղջիկը, հենց առաջին առանց գալու որից, առեց խորթ մորը և յերեք չուղեց մտերմանալ, չնայելով, վոր վերջինիս կողմեց շատ փորձեր յեղան, մանավանդ, վոր նա յել մենակ եր այդ տանն ու իրենց տարրիքի միջև ել մեծ տարբերություն չկար։ Խորթ մայրը նրա համար աղախին եր, քան տանտիկին։

Աղա Վոսկանն ինքն ել չգիտեր ինչու չսիրեց յերկորդ կնոջը։ Իսկ յերր չարաբաստիկ հաղն ել վրա հասավ, կինն սկսեց նիկարել, մինչև վոր անկողին ընկալ։ Անկողնից վեր կենալուց Հետո նա ել չկազզուրիեց. դեմքն այլանդակվեց, չերմը, մշտական հազը պոկ չեկան նրանից։ Զուրկ սիրուց, փաղաքշանքից, նա թառամում եր աղա Վոսկանի դղյակում։

Աղա Վոսկանն ուրիշ տեղ եր փնտում յուր վայելքների հագուրդը։ Մակիչը ւ նրա հավատարիմ շունը, նրա կոմվատը յերբեք չեր թողնում աղա Վոսկանին տիրել։

Ամբողջ շրջակայքն աղա Վոսկանի ճեռքին եր։ Գյուղում նատած, նա յուր շոշափուկները տարածել եր ամեն կողմ. ու ծծոնմ եր։

Աղա Վոսկանը վերին հարկի պատշգամբում խալաթը հագին թիկն եր ավել թախտին գարսած մութաքաներին ու նիրհում եր կուշա ճաշից հետո։

Տահը բոլորը վոտքի ծայրերի վրա և յին քայնելում, վորովեսպի շվրդովին աղայի նիրհը:

Ըեկեղեցու զանգերի ծայնից նա առանց տեղից շարժվելու բացեց աչքերը, մի բովկե անմիտ հայացքով նայեց ու ելի խսկույն զմակեց:

Զանդերի ծայնից քիչ անց, լսվեց չչակի ծայնը, վորը բարակ և զիլ ճշաց, կարծես ողնություն եր կանչում, մի քանի վայրելան անընդհատ հնչեց այդ ծայնը, ապա աստիճանաբար կտրվեց, կոսես ուժերն սպասվեցին:

Մի քանի բովկե անց՝ փողոցից լսվեց գործարանից՝ դուրս թափուող կանանց ձայները: Շուտով այդ ծայներն ել անցան ու կրկնեա տիրեց լուսություն: Յեվ այդ լուսության մեջ ավելի պարզ հնչեցին միլիոնավոր ճոկեների ծայները:

Աղա Վոսկանը նստեց տեղում, հորանջեց, մեծ, բայց դեմքին վայելուչ արծվային քթի ոռունգերը լայնացան ու նեղացան, խորը շունչ քաշեց. հետո ձեռքը տարավ, բարձի տակից առանց շտապելու դուրս քաշեց արծաթե վոսկեջրած քթախոտի ամանը, մի քանի անդամ ցուցամատով խփեց տուփի կողքերին և բաց արակ, մի պտղունց առավ անուշահոտ արտասահմանյան մարկայի արթունից, վորը նրա համար հատուկ ուղարկում ելին թհհանից և աղահորեն ներս քաշեց քիթը:

— Ո՞վ կա...

Դուն մեջ յերեաց նիհար, հիվանդուտ դեմքով մի կին, վորը կարծես դռան հետեւ թաղնված, վաղուց ծայնի յեր սպասում, վոր ներս մտնի: Դա աղա Վոսկանի յերկորդ կինն եր:

— Իերե՞մ... մեղմ, վախկոտ ձայնով շնչաց, առանց աշքերը բարձրացնելու դեանից:

— Հա' :

Կինը շուռ յեկավ, վոր դնա, բայց մարդու ծայնի վրա կանգ առավի:

— Վարսիկն ո՞ւր ե:

— Կանչե՞մ... բակումն ե:

— Չե', պետք չե:

Կինը լուռ դուրս գնաց ու քիչ անց՝ մատուցարանի վրա բերեց մի բաժակ մուղ թեյ, մի պնակի մեջ հօրց, մեղք ու միրք, դբնց թախտի վրա և ձեռները փորի վրա ծալած՝ լուռ հրամանի եր սպասում:

Աղա Վոսկանը ձեռքի մեջ բոնած քթախոտի ամանից մի

ոլողունց վերցրեց, հետո քաշեց ու ցած դրեց քթախոսի առաջը = Գրպանից հանեց մի մեծ զումավոր թաշկինակ, որբեց մասները, քիթը և առանց դեթ մի անդամ նայելու ամուսնու կողմը, կարծես չեր ել զգում նրա ներկայությունը, սկսեց համբեռութառնել թեյը...

— Մեղք քսե՞մ :

— Թո՛ղ, հարկավոր չե :

Կինը, վոր կոացել եր, վորպեսզի մեղք քսի վարունդի վրա, թողեց ու մի քայլ հետ գնաց :

— Կանչի՛ր են աղջկանը ...

Կինն արագ, կարծես վախենալով, վոր յեթե մի վայրէցամբ ուշանա՝ մեծ հանցանք դրբած կլինի, խաղողի տերեների արտնքից կոացավ ու ձայն տվեց .

— Վարսի՛կ, ...Վարսի՛կ....

— Ի՞վ ե... ի՞նչ ես ուզում...

— Հայրդ կանչում ե :

— Լա՛վ :

— Դաշիս ե, —ասաց ու մի քանի բոսկ լուռ մնալուց հետո, կամացուկ մրմնչաց — բան չե՞ս ուզում...

— ԶԵ՛... Գնա՛:

Կինը գլուխը կախ՝ հեռացավ :

Այդ բոսկեցին լսվեց դուն մուրճի հարվածների ձայնը, վարը բակում մի քանի տեղից արձադանքեց :

Աղա՝ Վոսկանը կարծես չմսեց : Նա խորասուղված եր մտքերի մեջ, սառած հայացքով նայում եր մի կետի :

— Պատա՛... — Լավեց ցածից աղջկա ձայնը :

Աղա՝ Վոսկանը սթափվեց, բարձրացրեց գլուխը, ճակաալ կնճիռները, հարթվեցին, ժպիտը ծոեց նրա շրթումքները :

— Պատա՛, նամակ :

Մի նամակ ձեռքին՝ ներս վաղեց Վարսիկը, վորի այտեղը վառվում եյին՝ աստիճանները վաղելով բարձրանալուց և կուրծքըն արարդ բարձր ու ցածր եր անում : Նա ժպտալով ուղուած եր մի բան ասել, բայց շունչը կտրվում եր և ծիծաղի միջից՝ չշնորհառող, չեմ կարող եր կրկնում :

— Աղջի՛, ի՞նչ ե յեղել, գժվել ես, ի՞նչ ե : Ինչո՞ւ յես մազելով գալիս տե՛ս, սիրտդ ինչպես ե խիում :

Նա վեր կացավ, կոացավ աղջկա վրա, գրկեց նրա գլուխը,

Հոքեց ասթի ակես սև ալիքաձեւ մաղերը, աչքերի մեջ նայելով՝
հարցը եց.

— Ի՞նչ կա, Վարսիկ, վոր թուլացել ես:

— Հայրիկ, հայրիկ վոր տեսնեյի՛ր, — և ելի ծիծաղեց:

— Ի՞նչ, ո՞ւմ:

— Յերբ դուռը բաղմեցին, վաղեցի տեսնեմ՝ փոստատար
Մուրատն եւ նամակը վերցրի, տեսնեմ՝ վերնից չորս ծիավոր են
դալիս, վոտից-զլուխ զինված, զլիսարկները ծուռ դրած...
դեռի ցած զնացին: Առաջի սպիտակ ձիավորը ծուռ-ծուռ նայեց
ինձ, զնում եր՝ հետ մտիկ տալիս, զնում եր՝ ելի հետ նայում...
Այնքան ծիծաղելի յեր... Վերջին անդամ վոր հետ նայեց, յես
գեղօւ ցույց ավի...»

— Աղջի՛...

— Բա ինչո՞ւ յե նայում... Յեխերը սրած՝ մկան պոչերի
այնու՝ Համեարծ լրջանալով հարցրեց: — Ովքե՞ր են... Դրանք
շա՞տ քաջ են:

— Անզեն մարդկանց մոտ՝ շատ:

— Ովքե՞ր են:

— Յես ինչ դիտեմ:

— Ենպես ծուռ-մուռ եր նայում:

— Շատ զալա՛թ եր անում...

— Հա՛, պատպա՛, նամակը ումնի՞ց ե:

— Թողի՞ր, վոր նայեմ:

— Դե՛, տե՛ս:

Աղա Վոսկանը վերցրեց թախտի վրա ընկած նամակը, յեր-
կու ձեռքով բարձրացրեց, մի քանի վայրկյան նայեց փակ ծրա-
բը միջից ու բացեց:

— Մերգուշի՞ց ե:

Մի քանի վայրկյան աչքերը հառած հորը, Վարսիկը լուս
նայում եր:

— Հը՛, — ի՞նչ ե գրում:

— Ի՞նչ պիտի գրի—ելի փող ե ուղում: Ամեն նամակում՝
Քող: Ի՞նչ ե անում եղքան փողը, չեմ հասկանում:

— Գյուղում չի ապրում, ե՛... Մոսկովում.... Ենպես դող-
ողալով ես փող ուղարկում վոր...

— Աղջի՛, նոր չե՞ր գրեցի պ. Հարությունին, վոր տա:

— Տակին ել յերնի ավելացրիր՝ «Հոկի, վոր շառլատանու-
թյուն չանի, հուպ տուր». դե՛, նա ել, ինչ ասել կուզի, հուպ ե

տալիս . . . ինչքան ուղղում ե՞ւ տուր, ի՞նչ ես խնայում — , Շավիչ
մի շերեփ ջուր վոր վերցնես, չի պակասի:

— Այ դու խելտու: Ախար շերեփներով չե, զդաւ-զգալ, կա-
բիւ-կաթիւ ենք հավաքել, ամեն մի կողեկի համար հարյուր ան-
դամ հոգի յենք ծախել, սուտ ու զարթ տուել: Իսկ նա անհաշիմ
քամուն և տալիս, ինչպես չորացած ծառի տերեները:

— Թեյ բեր քու ձեռքով, որանից բան չհասկացաւ:

Աղջիկը վերցրեց բաժակը:

— Իսկ մենք յերբ ենք քաղաք դնալու: Ել չեմ կորող ես
քանդվածում ապրել:

— Բա առանց քեզ յես ի՞նչ անեմ . . . առանց իմ յեղնիկի:

— Դու ել յեկ:

— Ե՛, վատ ժամանակ ե, բարաման չուտով կոկունե քաղնիւ,
դործի թունե ժամանակն ե:

— Իսկ յերբ բոժոժը հավաքե՞ք:

— Բա զավո՞ղը:

— Դե՛, ասա յերեք ել չենք զնա, ելի՞ . . . — Նա խոռվ բա-
ժակը ցած դրեց և նստեց թախտի ծայրին:

— Գնալու յենք, Վարսիկ ջան, անպատճառ: Այ, զրեմ հոր-
յեղբայրդ գա, դործը չի կարելի յերեսի վրա թողնել, Մակիչէ
ումուղին: Ինչքան ել վոր հավատարիմ լինի, ելի մարդ ե, փողի
հետ գործ ունենալն ուրիշ ե. մարդ ես, կդայթակղիւն: Այ,

Հորեղբայրդ զա . . .

— Կդրե՞ս:

Կդրեմ: Նա առանց այն ել դալու յե: Պետք ե պատկին, Հա-
մնվերջ ամուրի չի՞ մնալու:

— Հարսանի՞ք ե լինելու:

— Են ել ի՞նչ հարսանիք, յոթն որ, յոթ դիշեր:

— Դրանից հետո ել մենք կդնանք. ջա՞ն, ջա՞ն:

Աղջիկը դրկեց հորն ու համբուրեց, արագ առավ բաժակն ու
վաղեց: Աղա Վուկանը մի քանի վայրկյան հիացմունքով նայեց
աղջկա հետեւից, ժպտալով շարժեց դլուխը, բայց հիշելով ձեռ-
քում թռնած նամակը, ժպիտը փախարի. մի քանի վայրկյան լուս
նայեց նամակին ու տմտմբացրեց պլուխը.

— Ի՞նչ ե դուրս գալու սրանից — չդիտեմ. փուչէ ե, միմաշ:

Կրկին հնչեց դուն մուրճի ձայնը: Վարսիկը թեյի բաժակը
դրեց հոր առաջ, կոացավ դեպի ցած ու կանչեց.

— Ո՞վ ե:

— Յես եմ, Մակիչը ... Աղան տա՞նն ե:

— Տանն ե:

— Թող դա՛:

— Վերի արի:

— Պապա՛, մեղ մոտ ել խմբապետ ե դալո՞ւ:

— Ի՞նչ խմբապետ:

— Դաշնակցական: Են ձիավորները կարծեմ դաշնակցականներ եյին ... Վերին գյուղումն են, կազմակերպվում են:

— Քեզ ո՞վ ասաց:

— Աղջկերքը: Ասում են, իջել են Նիտղենց տանը: Պապա՛, վոր մեր գյուղը դան, մեղ մոտ կիջնեն, չե՞:

— Թող կորչե՞ն:

— Ի՞նչո՞ւ: Նրանք վոր չլինեն, թուրքերը մեղ կթալանեն, կերտորեն. Նրանք են մեղ պահում: Զավոդի աղջկներն եսպես բաներ են ասում...

— Դու եղ զավոդի աղջիկների հետ քիչ ընկիր:

— Ի՞նչո՞ւ, ի՞նչ կլինի վոր:

— Բան չի լինի, բայց գրանցեց լավ բան չես սովորի: Դու բան զործ ունես եղ կեղտուտ, գջլտված, սովածների հետ:

— Աղա Վոսկան, — դուան միջից լսվէց Մակիչի կանացի ճըղ-ճըղան ձայնը:

— Մակիչը:

— Յես եմ:

— Ներս արի՛: Վարսիկ ջան, դու զնա, մորդ ասա՝ Մակիչի համար թեյ բերի:

— Ելի՞:

— Դե լա՛վ, դնա՛, յես Մակիչի հետ առանձին զործ ունեմ:

— Ել չասես՝ «մորդ»:

— Զեմ ասի, — զնա:

Մի քանի վայրկյան աղա Վոսկանը ժպտալով նայեց աղջկա հետեից ու դարձավ Մակիչին:

— Հը՞ ... Մակիչի:

— Փառք ասոծու:

— Ի՞նչ կա, ի՞նչ չկա:

— Մի պետք ե Ո. գնալ, Աղա Ռահիմի մոտ: Վախենում եմ մաղանդեն ... Ախար ասում են 35 մանեթից պակաս չեն ուզում աւալ:

— Խամ ես, Մակիչ, կտան: Ի՞նչ պետք ե ասեն, վոր չտան:

Ես յերկու որս զնամ Ռահիմի մոտ, խոսեմ։ Մի քոռ կողել ել շենք ավելացնի։ Հերու 25 եր, չե՞։

— Զա՛, աղա Վոսկան, 30։

— Ա՛յ մարդ, 25 եր։

— 30 եր, աղա՛ Վոսկան։

— Ես ատրի պետք ե աշխատենք, վոր 25 լինի։ Մոսկովից դրում են, վոր զներն ընկել են, կամի վախ կա։

— Հա՞։

— Դու մի շտապիր. ամեն տեղ ասա, վոր զները շատ են ընկել, կոխվ ե սպասվում։ Դե՛, զու գիտես, վոր շուտ շտան՝ կթեթևնա, ելի պահեն թրթուուը կծակիր. խամ հո չե՞ս։ Առաջ նազ կանեն, 35 կասն, 40 ել կասեն. հետո՝ 30 կղարձնեն ու վերջը 25-ով կառնենք։ Դու սկի մի վախենա, եղ հին նազլ ե, յես իմ բանը լավ զիտեմ, մի Ռահիմին ել տեսնեմ։

— Հա՛, աղա Վոսկան, արդեն քաղն սկսվում ե, պետք ե շտապել։

— Դատարկ բան ե։ Հա՛, դե ի՞նչ նոր մարդիկ են յերեքացներ գյուղում։ Վարսիկն ի՞նչ վոր ճիավորներ ե տեսել, մեր վաղոցից ցած են զնացել։

— Մարդիկ ։ Հա՛, իմացա, խմբալետ Վաղդենն ե իր տղերքով։

— Մեր կողմերում են մնալո՞ւ։

— Հա՛, մնալու յեն։

— Պետք ե մի ատամի տալ, թե ի՞նչ պառուղներ են։

— Տվել եմ, լավ տղերք են, լավ քեֆչի։

— Հա՞։

— Վալլա՛հ։

— Բա են բանն ի՞նչպես յեղալ, իմացա՞ր։

— Իմացա՛։

— Մոտ արի։

Մակիչը բոլորովին մոտեցավ և աղա Վոսկանի ուսի վրայից իսփառ ականջին։

— Պրծած բան ե ։ մարդն յերկու տարի յե, չկա ։ Առաջին տարին նամակ, վող գալիս եր, մի տարի յե — հեջ լուր չկա ։ յոխ ե յեղել. բայց տանը չզիտեն։

— Հատամուտ։

— Հա՛, ելի, Փուրդոնչի Մինասը թաղմանը յեղել ե։

Աղա Վոսկանի դեմքը մոայլվեց։ Մակիչը հետ-հետ զնաց,

կողավ բարկոնի սյունին ու կեղծ ժաղիտը դեմքին՝ խոր դլուխ տալով, մշմչաց.

— Բարև տեսանք քույրս, ինչպես ես, հո լավ ես...

— Շնորհակալ եմ, — կարճ պատասխանեց Վոսկանի կինը և, թողնելով մատուցարանը թախտի վրա, դուրս գնաց:

Աղա Վոսկանը խեթ-խեթ նայեց նրա հետեւից, քթով փնչացրեց տանելությամբ:

— Զի՞ ել սատկում:

— Ե՞ւ, լավ, աղա Վոսկան, խեղճ կին ե, թող ապրի, քեզ ի՞նչ և անում:

— Ամեն տեսնելիս մաղճս ե շարժվում: Հա՛, Մակիչ, եղ դարբին Ռւանը դրանց ի՞նչն ե, բարեկամ-բա՞ն ե:

— Սկի, ինչը: Հարեաններ են:

— Դրանից զգույշ պետք ե լինել, աղքատ ու հպարտ ե:

— Քանի՞ հոգի յեն տանը:

— Մարդու պառավ մերն ե, յերկու յերեխա, լափ պստիլին ել մոտ ժամանակներս դյուլումը խեղդվել ե: Ապրուստի միակ միջնոր՝ քո տված 40 կոպեկն ե, պառավն ել մեկմեծեկ սրա, նրա համար խմոր ե անում, յա լվացքի գնում: Են վախտ ակեսուրը շատ չեմ ու չում արավ, չեր ուղում, վոր հարսը զավողը գնա, բայց յեկավ: Են ել չի ուղենա, բայց ինչքան ել չեմ ու չում անի, կղա մաս դու ինձ թող:

— Դե՛ւ, քեզ տեսնեմ, խալաթ ունես:

— Ասաված յերկար կյանք տա. դե՛, մենք ել քո չվաքի տակին ենք ապրում:

— Եգուց մի բան ավելի տուր մաս քածը լսավ ապրանք ե ... Աչքերը կասես մարալի աչքեր լինեն ... մի քիչ վոր լավ դրվիկ ունենա, ել նրան մին չի հասնի: Դեյրացու տուր, յերեսաների համար կտոր-մտոր, ասա, յես եմ ասել, վոր տաս ... Ասա շատ մեղքս ե գալիս ... վոր եղքան չարչարպում ե ... Ասա, թե չի ուղում քյարիսանումը, թող տուն գա ...

— Հա՛, եղ շատ լավ կլինի:

— Թե փողի նեղություն ունի, ասա, թող գա մոտս ... Հա՛, Մակիչ, չասես թե մարդու մասին բան դիտես:

— Գեհա՞ս, հո չեմ դժվել:

— Դե՛, քեզ տեսնեմ ... Զավոդն ի՞նչ հալի յե:

— Բոլորի աշխատավարձն ել 30 կոպեկ դարձրի, գործը քիչ է: Ասացի, վոր բարաման հավաքվի, ելի կավելացնեմ: Մի քիչ

ճղճզացին, բայց ի՞նչ կարան անել, ենքան քաղցած ոթայլեցի
 պարտիկներ կան: Մի քանիուր թե՛ չենք դա... առի կրտնիներդ
 դեսր, հի՛—հի՛—հի՛. կղան, բան չեն ասի:
 — Լավ, ել Հո բան չունե՞ս, ասելու:
 — Զե՛, բան չկա:
 — Լավ, գնա՛, յես ել դործ ունեմ, նամակներ պիտի դրեմ:
 Փոստատարին կասես, նամակներ կան:
 — Աչքի՛ս վրա:
 — Են, չմոռանաս, հա՛:
 — Իյա, ի՞նչ ես առում, աղա Վոսկան, ի՞նչողես կմոռա-
 նամ ... հի, հի, հի ... բարի գիշե՛ր:
 — Քեզ լո՛ւյս բարի:
 Նա դնաց, բայց դռներին չհասած, ելի հետ յեկալ:
 — Հա՛, մոռացա. Են նալլանողն եսոր զեղամիջում համողաւմ
 եր դյուզացիներին, վոր 35-ից պակաս չտան. լեզուն շատ ե յիր-
 կարացրել:
 — Յերկարել ե, կիտրենք:
 — Քվոր աղջկա միջոցով դավլոդի կանանց դոդում ե, ի՞նչ
 վոր վոր բաներ ե մտցնում նրանց գլուխը, նրանք ել աներես են
 զառնում:
 — Դու նրան մի ահ տուր:
 — Տվի, ինձ ել «աղեքանց չուն» ասաց:
 — Բա դու ի՞նչ արիր:
 — Ակի, ինչ: Նրան ուրիշ կերպ կպատժեմ, սուս ու փուս:
 Եդ դաշնակ տղերքի հետ թող մի մտանամ:
 — Մաշալլա՛, հա՛, հա՛, հա՛, լավ ես մտածել: Հասկացա,
 առաջոտն ելի կիսունք, բարի գիշե՛ր:
 — Հա՛, մոռացա — աչքու լո՛ւյս, նամակ կա Սերդոյից:
 — Շնորհակալ եմ... ելի փող ե ուզում:
 — Հի՛—հի՛—հի՛, մալերեց աղա, ախսկեր, քեֆ ե անում, աշ-
 խարհքի հերն անիծում: Եհ, թե յես ել նրա հոր պես հայր կու-
 նենայի...
 — Լավ, լավ, լեզվիդ քիչ դոս տուր, գնա՛ բանիդ:
 Մակիչի գնալուց հետո, նա վեր կացավ, մտավ ընդարձակ
 սրահը, վոր զարդարված եր կիսայեվրոպական, կիսասախական
 ճաշակով, մոտեցավ յերկաթե սնդուկին, վորի բանալու դաղու-
 նիքը մենակ իրան եր հայտնի, հանեց մի հաստ հաշվեդիրք, մի
 քանի թղթեր և նստեց սեղանի առջե:

Արդեն յերեք ամիս և, վոր Նոյեմդարը զավողում որեկան 40 կոպեկով աշխատում է:

Կեսորյլա հանդստից հետո նոր եյին անցել աշխատանքի, վոր դրասենյակից լովեց Վոսկանի հազը, աղա կոչիկների ճռողը և հաստ ձեռնափայտի ձայնը: Աղա Վոսկանը մի բոպե մնաց գոներում: Մակիչը խորամանկ, քուր ժողիտը գեմքին, կրացած, ինչ վոր բան եր փափառում: Աղա Վոսկանը մի քանի քայլ արագ ու ելի կանգնեց: Զավողի կանայք, տեսնելով նրան, գլուխները կախեցին:

Աղա Վոսկանը բարձրացրեց զլուխը, մի հայացք ձգեց չորս կողմը և առաջ շարժվեց:

Նրա քունքի մազերը նոր-նոր սկսել եյին ճերմակել: Կղակը մաքուր ածիւլած եր, կարմիր ճարպոտ դեմքի վրա ածուխի պես սե, ծայրնը գեղի ցած թողած, բեխեր: Կարտուղի տակից վեհորեն գծագրված եր նրա արծվի քիթը, աչքերը մուայլ ու թափառու, նա կենտրոնացած եր ինքն իր մեջ:

Սև, լայն անդրավարտիկի տակից պապղում եյին նրա վազած լայնաքիթ կոչիկների ծայրերը: Արևելյան տարաղի հետ շատ գեղեցիկ ներզաշնակում եր նրա լայնակուրծք ոսլայած շապիկը՝ բարակ սև ժամապալենով փողկապի հետ:

Յուր արժանապատվության զիտակցությամբ լցված, նոր առանց շտապելու անցավ շարքի միջով: Հանկարծ աչքն ընկապվ նոյեմի վրա, կանգ առավ ու դառնալով Մակիչին, հարցըն, ձևացնելով, թե նոր և նկատում:

— Ումոնցի՞ց ե:

— Մուշեղի կինն ե:

— Ի՞նչ Մուշեղ:

— Զարգարենց:

— Հա՛ա: Վաղո՞ւց ե մեղ մոտ:

— Յերեք ամիս կա: Մարդն եստեղ չի, թիֆլիս և գնացել:

— Հա՛, լսել եմ: Մարդք ի՞նչ գործի յե:

— Զգիտեմ, —զլուխը ալելի կախեց նոյեմը:

— Եամակ ստանո՞ւմ ես, փող ուղարկո՞ւմ ե:

— Մի տարի յե, խարար չկա, —նրա փոխարեն պատասխանեց Մակիչը:

— Մի տարի՞... ի՞նչ ե պատահել: Յերեխերք ունե՞ս:

— Յերկուաը: Մեկն ել... նորերս... ելի պատասխանեց Մակիչը:

— Լսել եմ, լսել եմ . . . շատ եմ ցավում : Լավ, բա եղ ինչը՝ յե մոռացել : Փողի նեղություն հո չե՞ս քաշում :

Նոյեմն ավելի զլուխը խոնարհեց և արցունքները կաթեցին աչքերից :

— Բա առանց զբան, աղա Վոսկան . չորս բերան հե՞շտ և կշատրւել, — մեջ մտավ Մակիչը, իբր թե բարեխոսելով :

— Դե՛, Մակիչ, մի բան արա, մեղք ե, մեր Մուշեղն ե . յա կուղարիկ, կտան : Կորած տեղ չի, մեր Մուշեղն ե :

— Աչքիս վրա, աղա Վոսկան :

Նոյեմը թաց ձեռներն աչքերին տարավ, սրբեց աչքերը և յերկու ձեռքը կրծքին դրած, լուս, խոր գլուխ տվեց աղա Վոսկանին :

Աղա Վոսկանն անցավ մի ծայրից մյուսը, վերադարձին աչքի տակով մի անգամ ել ոլինդպինդ նայեց նոյեմին ու գնաց :

Մակիչը գնում եր, հետ նայում, մի քանի քայլ հետ ընկնում, ժպառալով նայում կունանց, կարծես ուղում եր ասել՝ տեսնո՞ւմ եք, ինչ մարդ ե ու արագ հասնում եր աղա Վոսկանին, վոր չինի թե ասածը բաց թողնի :

Նրանց զնալուց հետո կանանց մեջ շուկ բարձրացավ, ժըստացին ու իրար աչքով արին :

— Գրուը տանի, — չանչեց մեկը, յերբ նրանք ծածկվեցին դուռն հետեւ :

— Նշան դրեց :

— Աղջի՛, Նոյեմ, աղային դուր յեկար, խոսաց հետդ : Ի՞նչ եր ասում :

— Կարծեմ հեռու աղդական և Զարդարենց հետ, ի՞նչ կլինի, վոր խոսի, — չար քմծիծաղով վրա տվեց նոյեմի հարևանուհին :

— Դե՛, յետ ինչ եմ ասում վոր . . . ասում եմ՝ դուր յեկար :

— Հա՛, աղջի՛ : Են ի՞նչ աչքերով եր նայում, կասես պիտի սաղսաղ ուտի :

— Հողս տամ նրա յերեսը, անամոթ լիրբ . . . շան պես հոտոտում ե :

— Դուր յեկար — դուր յեկար, ավելի լավ . ի՞նչ կա վոր :

— Մանուշի նման հիմար չլինես, հողեմ նրա սարսադ գլուխը . սաղ մի տարի տրորվեց ու մի որ ել, տնից դուրս անելուց հետո ելի յեկար զավողն աշխատելու, ինք ել պատճառավոր :

— Մենակ Մանուշն ե . քանի՛սի որն ե սկացրել . . . ձար

չունեմ, թե չեմ մի որ ել չեմ մնա, կթքեմ երեսին ... կերթամ : — Աղջի՛, զգուշ կաց :

Եռյեմը լսում եր ու լավ չեր հասկանում նրանց ասածները, բայց զգում եր, վոր ինչ վոր ակնարդիներ են անում : Ինքը թեև վոչ մի ատիթ չեր տվել, բայց մեղավորի պես մինչև ականջները շառադունեց ու լուր շարունակեց աշխատել :

Շուտով կակսի բռժոժաքաղը :

Եերամի վորդերը մի քանի անդամ քնից հետո շապիկները փոխել, մհծացել եյին, ողակողակ դեղին զոտիներ կապել :

Ամուր կպած թթենու թարմ ճյուղերից, զլսի համաշավ շարժումով նրանք խժում եյին թարմ տերմները, կարծես վոչ թե ուտելու համար եյին զլսի այդ արագ պտույտները, այլ տերելիների վրա ինչ վոր գեղանկարներ եյին քանդակում :

Տները լցուած են նրանց միալար, անվրդով խշոցով : Ով յերկու սենյակ ունի, յերկուսն ել շերամի և հատկացրել, խակ իրենք դուրս են յեկել կամ խոհանոց, կամ բակը՝ տեղները թանկագին հյուրերին հատկացնելով :

Առավոտից — յերեկո մարդ, կին, ձիերով, շալակով թթենու դալար ճյուղեր եյին կրում՝ կերակրելու այդ առահ խժուղեներին :

Թթենու չորացած ճյուղերից նրանց համար բարձր անկողնականներ են բարձրացել :

Եերամի քնած վորդերը վասներով ճանկել ճյուղերը, գլուխները հպարտ տնկել վեր, մնացել են անշարժ :

Քաղցած շերամները, վորոնց զեռ կեր չեյին տվել, շոր ճյուղերին կլած, գլուխները բարձրացրած, զես ու զեն եյին նայում զայրացած, վոր այսքան ուշացնում են :

Լուռ ե :

Թեթև ըրչյուն կա հաղարավոր վորդերի անհանդիստ շարժումներից :

Դալար թթենու տերենների բույրը տարածվեց :

Պառած տանտիկինն զգուշությամբ, խնամքով, կարծես վախենալով նրանց ցավ պատճառել, ձեռքի վոստերն սկսեց շարել շերամների վրա : Մի քանի վայրկյան նրանք մնացին տերմների տակ թաղված : Բայց շատ չանցած, իրար հետմից կանաչի միջից դուրս ցցվեցին հատ ու կենտ անձունի գլուխներ : Շուտով հա-

զարավոր վորդեր ագահ խմբացով զուրս լողացին և սեկյակը լորին միալար շրջունով:

Մի քանի տներում արդեն պկսել են բոժոժահավաքը:

Հարևան, աղքական—հավաքիկ, ուրախ խոսելով՝ յերդելով, ցաքից պոկում են չերամի կոկոնները, աղատում ավելորդ մեռաքսից և նետում կողովի մեջ:

Շատերի չերամը գեռ նոր և վերջին քուն մտել:

Այս տարին խոստանում ե առաջ բերք: Ով յերկու մսխալ սերմ և սրահել, հույս ունի յերկու փութ բոժոժ հավաքել: Հեմանգության դեսղեր համարյա չկային, մենակ Փալանգուղինց չերամը փշացավ: Տե՞ղն եր խոնավ, թե՞ն սերմը վատ, թե՞ն կեր չկարողացան հասցնել—հայտնի չեն, բայց յերրորդ քիչ ել չղարթնեցին, սեացան ու թափսիցին թթենու չորացած ճյուղերի տրանքները: Ինչքան հույսեր եյին կապված այդ չորս մսխալ սերմի հետ, բայց նրանց չար բախտից բոլորը ջուր կորեց:

Շուտով տները կմաքրվեն, դուրս կտանեն շաղափը (ծղութ) և չերամից ստացած փողի չորհիմ՝ մի քիչ շունչ կքաշեն:

Իսկ չերամի և չոր թթենու հոտն այնպես և ծծվել, վոր դեռ յերկար պիտի սպառեն, մինչեւ ցնդի:

Աղա Վոսկանի տան դարպասը բացվեց: Դուրս յեկավ Մակեչը, իսկ նրա հետեւից աղա Վոսկանի ծառան, սանձը բռնած՝ դուրս բերեց մոխրազույն նժույգը, վորը զուրիս դարպասից դուրս հանեց թե՛չե, իրիսնջաց, դուրս պղծավ փողոց, վոտներով սկսեց քանդել գետինը՝ ուրախացած, վոր լույս աշխարհ դուրս յեկավ:

Մակիչը շոյեց նրա դլուխը, մաղաքշանքով կամացուկ դարկեց նրա վղին:

— Դե՛, գե՛, խելոք... դնջացիր: Փորձելով փորքաշը, ասպանդակիները, նա ներս մտավ բակը և ցածից կանչեց.

— Աղա՛ Վոսկան, ձին պատրաստ ե:

— Մակի՞չ, —լուլեց Վարսիկի ձայնը:

— Յես եմ. աղային ամա պատրաստ ե:

Քիչ անց, աղա Վոսկանն իջագ՝ առանց նայելու Մակիչի վրա, անցավ նրա մոտից և քայլերն ուղղեց զեզի յելքը:

Մակիչս—աղայի մոտ միշտ քծնող, ժալիտը դեմքին — զնաց նրա հետեւից:

Աղա Վոսկանը մի բոսկ մնաց սաքովի վրա, այդտեղից նայեց ձիուն, ժողոտաց :

— Զուր տվել Էս :

— Հրաման քնզ :

— Բոնի՛ք :

Զեռքի զավագանը Մակիչին տալով, էջավ փողոց և մոտեցավ ձիուն :

Մակիչն շտապեց պղնելու, բայց ուշացավ, աղա Վոսկանն արդեն ձիու վրա յեր :

— Ուշացա, աղա՝ Վոսկան, հի՛, հի՛, հի՛: Մինչեւ յես աչքու ճակացնեմ, դու ուշացա, հի՛, հի՛, հի՛:

— Մակի՛չ՝ ասանց միանալու նրա ծիծաղին, անժպիտ ու չոր՝ ձեռքը մեկնեց: Մակիչը տվելց կաշվի պատյանով և փղոսկրե կոթով թուրը, վոր արտաքուստ զավաղան եր և վորից աղա Վոսկանն անբաժան եր, յերբ ուրիշ տեղ եր դնում: Այս Վոսկանը մտրակեց ձիուն, առանց սանձը բաց թողնելու. ձին ծառու յեղավ, կանզնած տեղը մի քսնի պտույտ արավ, ֆռուացրեց, թափ տվելց գլուխն ու սլացավ:

Աղա Վոսկանը Ո. քաղաքը դնաց՝ Ծահիմ աղայի հետ վերջնական համաձայնություն կնքելու բոժոժի ատկազնի մասին:

Մակիչն աղա Վոսկանին ճանապարհ դնելուց հետո, մոտավորան ու արագ, դործի շտապող մարզու նման՝ անցավ կանաց շարքի միջով և Նոյեմի կողքից անցնելուց, քայլերը մի քիչ դանդաղեցրեց, իսկստ, բայց կամաց, այնքան, վոր միմիայն նալուր — շնչաց.

— Տուն գնալուց՝ գրասենյակ կմտնես, կարեւոր գործ կաւ:

Եերեկոյան շշակեց հետո, յերբ բոլորը դուրս յեկան գործարանից, Նոյեմը մի քիչ մլսւլ տվելց ու վերջինը դուրս յեկան: Նա մեկ մտածեց չզնալ, մեկ ել վախեցավ, վոր հրամանը չկատարելու համար, կարող ե դուրս անել: Են ժամանակ ինչպես պահի յերեխաներին:

— Աղջի՛, Նոյեմ, չե՞ս գալիս:

— Ասում եմ մի գնամ ֆուրդոնչի Սողոմոնին տեսնեմ՝ յելել ես, բալքի նամակ-բան բերած լինի:

— Դե վոր լինի, ինքը կրերի:

— Զե՛, շատ յերկմիտ եմ, ախար տարին լրացավ՝ լուր չկա ... համբերություն չկա ...

Կո բաժանվեց Ծնկերուհուց և քիչ տեղ զնալուց հետո, նայեց՝ ու յերբ տեսավ՝ վար փողոցում մարդ չկա, վերապարձավ, արագ մոտեցավ զրասենյակի դռանը, մի քանի վայրկյան լուս մնաց, չկարողանալով արագ վորոշել՝ մտնե՞լ, թե՞ փախչել այդ տեղից, վոր չտեսնի նրա զրվելի ուխոր: Բայց դուցե՞ն աղա վոսկանն ե կանչում, դուցե, մի լուր են խմացել մարդուց: Թե չե, ի՞նչ զործ կարող ե լինել: Սիրաը կարծես վկայում եր, վոր լավ բանի համար չեն կանչում: և լավ ե սկի չմտնի: Արդեն վճռել եր, ինչ լինում ե, թող լինի, չի մտնի, յերբ բոլորովին անսպասելի կերպով դուռը բացվեց և դռան շեմքին յերեաց կարճվել, սուր կտուցի նման քթով, բուի աչքերի անշարժ հայացքով՝ Մակիչը:

— Նոյե՛մ, —ինչի՞ ուշացար: Շչակն են յե՞րբ և փէել: Նե՛րու արի:

— Ի՞նչ եյիր ասելու:

— Ներս մտի՛, կասեմ:

Ինքը հետ-հետ զնալով, թողեց, վոր Նոյեմը ներս մտնի և դուռը փակից:

Նոյեմը մտավ ու դուռ, դիխիկոր մնաց կշեռքի և մետաքսի հակերի միջն:

Մակիչը մոտեցավ սեղանին, նստեց: Յերկար ժամանակ լուռ եր. մեկ ել բարձրացրեց գլուխն ու շեշտակի նայեց Նոյեմին:

— Գլուխող բարձրացրու, ինչի՞ յես կախ դցել, — եստեղ ուրիշ մարդ չկա:

— Ի՞նչ եյիր ասելու, — առանց նայելու նրա վրա; Հնիշաց Նոյեմը:

— Սկի, ի՞նչ:

Նա բարձրացավ սեղից, դուրս յեկանվ սեղանի արանքից և վավաշոտ ժպիտը դեմքին՝ մի քանի քայլ արագ դեպի Նոյեմը՝ մի ձեռքը շալվարի զրպանում, մյուսով սրելով բեխի ծայրը: Նոյեմը հետ-հետ քաշվեց և կպավ պատի տակ դարսված մետաքսի հակերին: Մակիչը, տեսնելով նրա յերկչուությունը, մտածեց ավելի զդույլ մոտենա, վոր չլախեցնի: Զեռքը հանեց դրասնից, թողեց բեխերի ծայրը և մոտենալով սեղանին: սկսեց ինչ վոր բան փնտուել:

— Եղ վլո՞րտեղ դրի են անտերը. առանց նայելու Նոյեմի կողմը, զլուխը կախ՝ փնտռում եր:

— Աղա Վոսկանն ասում ե, մեղք ե. յես ել ասում եմ՝ բա մեղք չի^o, ախար են վուչ մարդը յերկու տարի յե զնացել և ու վոչ նամակ, վոչ փող: Են որը վոր քեղ տեսավ, ել դադար չի տալիս, շարունակ քեղանից ե հարց ու փորձ անում. քեղանից, յերեխաներիցդ: Յերեկ ել, թէ՝ «Եղ կնկա նման մի կին թե ինձ մոտ գա, կլոսկեջրեմ, թաղուհու պես կապահեմ»: Ախար իրա կինը, տեսած կլինես, շարունակ հիվանդ ե՝ հաղ, տաքություն ... իսկ ինքն առողջ մարդ ե: Հա՛, ես ե՝ զտա: — Թղթի մեջ փաթաթած ինչ վոր բան վերցրեց յերկաթե սնդուկի վրայից և դրեց սեղանի զլու:

— Զեմ իմանում, հավան ես կենալու, թէ՞ չե: Մոտ արի, ցեղ համար ե, աղա Վոսկանն ե նվիրում. դեյրացու յե: Յերեխաների համար ել բան կա: Ի՞նչ ես վախենում, արի', արի' վերցրու, հո չե՞մ ուտելու քեղ, հի՛ հի՛ հի՛ ... Աղջի՛, բա առանց մարդու ի՞նչ ես անում, վո՞նց ես դիմանում: Յերկու տարի՝ յե ... Ո՞վ դժոխի, մոռացավ, ուրիշ կին առավ ... Պահ քու տունը չքանդվի ... բա մարդ ել եսպես կնկան ... ջեյրանի պես կնկան կթուցնի ...

— Պ. Մակիչ, բա՞ն ես լսել:

— Զե՛, ենպես եմ ասում ... բան չե՞մ լսել ... Աղջի՛, դու յեկ ինձ լսի, յես քու լավն եմ ուղում, աղա Վոսկանը մեռնում ե քեղ համար ... ենալես կողահի, վոր բոլորը միջից կճաքեն ... Հը՞՝ ի՞նչ կասես:

Նոյեմը կարմըեց մինչեւ ականջները, վախեցած դես ու դեն նայեց ու հայացքը կանգ առավ Մակիչի վրա, բայց յերկար չկարողացավ նայել նրա բորենու աչքերի պես հիպնոզով աչքերին և կրկին կախ գցեց զրուխը:

— Հի՛-հի՛-հի՛ ... ամանչո՞ւմ ես: Մի ամաչի, ցալդ տանի Մակիչը, խի՞ յես կախ գցում գլուխդ: Աչքերդ մի բաց, տես ուրիշներդ կանայք ինչե՞ր են անում, քեֆ են քաշում, ես աշխարհի աչքն են հանում ... Բա քեղ պես ջամհել, սիրուն կինը մեղք չի՞ եաքան վախտ առանց տղամարդու ... Բա եղ աչքերդ աղա Վոսկանն ասաց, թե փողի նեղություն ունի, տուր, ինչքան ուղում ե: Հիմա ինձանից ե կախված, ուղեմ՝ կտամ-փող ել, դերացու յել ու ելի ինչ կուղեմ. չուղեմ՝ չեմ տա: Իմ ձեռքիս ե. աղա Վոսկանն իմ ձեռքին ե. ուղեմ՝ եսենց շուռ կտամ, ուղեմ՝

Անապատը կծաղկի

ևնպես : ՅԵՒկ, յԵՒկ, արի՛ վերցրու ևս դեյրացուն . ևս ել քեզ կարմիր տասանոց . . . ելի կտամ , ինչքան ուղենաս . . . հյա ևս վերցրու , նեղություն շատ կունենաս . . .

Նոյեմը բարձրացրեց աչքերը . վախ , ամաչփուություն մոռացած , զայրութից կարմրեց , զունատվեց . շրթունքները դողացին , բայց ինքն իրեն չլսպելով՝ չննջաց ատամների միջից .

— Թող աչքը կոխի , ինձ նվերներ պետք չեն :

— Կամա՛ց , կամա՛ց , մատա՛զ , մի տե՛ս , մի տե՛ս . շան աղջիկը վոր բարկանում ե , ավելի յե գեղեցկանում . . . Ախար կարծում ես մենակ աղա՞ն . . . բա յե՛ս . . . ախար յես քեզ համար դիշեր-ցերեկ տանջուում եմ , ել քուն չունեմ , դժի նման եմ . դու եղպես , հա՞ . լա՞վ , չմոռանա՞ս :

Նոյեմը զգվանքով նայեց նրա լովիրչ դիմքին , բան չառաց ու լուռ գնաց գեպի դուռը :

— Կա՛ց , եղ ո՞ւր :

— Բա՛ց դուռը :

— Սպասի՛ր , սպասի՛ր :

Նա զգուշությամբ , կամաց-կամաց մոահենում եր՝ յերկու ձեռքերն առաջ պարղած : Նոյեմն ուղիղ նրա աչքերին նայելով , խուսափելով՝ հետ-հետ եր զնում . դեմ առավ գրասնղանին և կանգ առավ : Մակիչը մոտենում եր՝ մկան վրա հարճակիլող կատվի պես : Նոյեմը ձեռքերով բռնեց սեղանի յեղը , մեքենայարար սէխոց սեղանի վրա շոշափել ձեռքն ընկած համբիչի կողը . սրտատրովի նա սպասում եր : Յերբ Մակիչը արյունիօխած աչքերով , փալինքը շաղ տալով , փորսովի պես մոտեցավ անշնուկ և ուղեց գրկել նրան , Նոյեմը ձեռքին բռնած համբիչը բարձրացրեց ու ամբողջ ուժով հասցրեց Մակիչի ճակատին :

— Վա՛յ , շա՞ն աղջիկ , — ցավից ճչաց նա , մի վայրկյան աչքերը սեացան , ձեռքը տարավ դեպի ճակատը , վախեցած նայեց արյունից կարմրած ձեռքին , կատաղած վեր ցատկից ու հարձակվեց Նոյեմի վրա :

Նոյեմը վաղեց գեպի դուռը և աշխատում եր բանալ , վոր վրա հասավ Մակիչը , ամուր բռնեց հետեկից , հետ քաշեց : Նոյեմը հետ դարձավ և մի շառաչյուն ապտակ դրոշմեց նրա դեմքին :

Սպտակն ավելի բորբոքեց նրան և նա , կատաղած շան պես փրփուրը բերանին՝ կապավ տպրուկի պես և չնայելով Նոյեմի բռունցքների հարվածներին , սկսեց ցավեցնելու չափ ջերմ համ-

բուրել, կծոտել ձեռները, վիրը, կուրծքը ... Նա ճիգ եր անում դեաին զլորել Նոյեմին, Նոյեմը չանգոստում եր նրա ձեռները, յերեսը և հաջող բուրեյից ողովկելով՝ յերկու ձեռքով ուժով հրեց նրա կրծքին։ Մակիչը մի քանի քայլ հետ-հետ դնաց, ընկապ կշռքի վրա ու սկսեց հեալ։

Նոյեմն առանց բուրե կորցնելու, արագ բացեց դուռը, և մինչև Մակիչն ուշքի դար, իրան փողոց նետեց։

Մակադինը նշանակված եր 25 մանեթ։

Յերբ աղա Վոսկանը վերադարձավ Ռուսից, Մակիչը գլուխը կապած՝ սպասում եր նրան դարպասի առաջ։

— Իյա՛, Մակի՞չ, — զարմացած բացականչեց աղան։

— Բան չի՛, աղա Վոսկան, վեր եմ ընկել։

— Եղ ինչպէ՞ս։

— Վոսս մեխի առավ, — դատարկ բան ե։ Ի՞նչ վորոշեցիք։

— 25-ից վոչ մի կոպեկ ավելի։

— Զեմ ու չում Ամ անձլու...։

— Բան չկա։

Աղա Վոսկանը ձիուց իջավ, սանձը Մակիչին տալով՝ վեր բարձրացավ։ Դեռ սանդուխքների վրա յեր, վոր վազելով ընդառաջ յեկավ Վարսիկն ու ընկավ հոր գիրկը։

— Բերի՞՛ս։

— Խուրջնումն ե։

— Ռուր ե։

— Մակիչը կրերի։

— Մակի՞չ, չո՞ւա։

Սառան Մակիչի ձեռից վերցրեց ձիու սանձը և սկսեց մանածել փողոցում, վոր քրտինքը չորանա։

Մակիչը խուրջնն ուսին՝ բարձրացավ յերկրորդ հարկը։

Վարսիկը հարձակվեց խուրջնի վրա, սկսեց քրքրել և դըտնելով ինչ ուղում եր, վերցրեց ու դնաց։

Մակիչը մինչև աղայի դալը մտածեց, ի՞նչ գույն տա իր Ե Նոյեմի խոսակցությանը։ — Հո չեմ կարող Ձշմարտությունն ասել։ Վճռեց ուղղակի ասել, վոր մերժեց, բայց վնաս չկա, կը-կակը, ողերացուն վոր տեսավ՝ աչքերը վառվեցին։ Թող մի քանի որ անցնի, ելի կխօսի։

Խոսքերը ծամժմելով, Մակիչը պատմում եր, իսկ աղա Վոսկանը հմաքերի տակից նայում եր ուղիղ Մակիչի աչքերին

կառկածով և համաստ չնծայելով նրա ասածների ճշմարտությանը:

Նա կասաղել եր, շրթուքներն եր կրծոտում, բայց դեռ զսպում եր իրան. վերջն ելի չկարողացավ ու պոռթկաց.

— Դմիոն', հայվա՞ն:

— Դե՛, յես, աղա Վոսկան...

— Դե յես. ախմա՞խ:

Զեռքի հաստ գավազանով մի քանի անգամ թխկթխկացրեց Մակեչի ճաղատ դըուխը և գոռաց.

— Ի՞նչ ոյիններ ես խաղացել, ճիշտն ասու: Յես քեզ ճանաչում եմ, հորամզազա:

— Ախար, աղա Վոսկան, յես ի՞նչ...

— Զե՞նդ, չե՛ս խարի աչքերիցդ տեսնում եմ, վոր շան պետ սուտ ես խոսում:

— Մեղավոր եմ, աղա Վոսկան: Սխալ դործեցի: Ուզում եյի մի փորձեմ, նախ քան քո անունը տալը:

— Շո՛ւն ... Վորսի միս եյիր ուզում ուտել, հա՞: Դու ո՞ւմ շունն ես. ատամներդ կիշրեմ: Աղա Վոսկանին եյիր ուզում խարե՞լ: Յես քո ատամը պորտը գետը կտանեմ ու ծարավ հետ կըերեմ ... Վոտը մեխի յե առել. հաս սրա՞ն մտիկ ... Սուտդ բռնըլեց, սուտ տաելու ել չնորհք չունես: Լավ է հասցրել դիմիոն, տեղն ե, հաս եղ քիչ և պետք ե աչքերդ հաներ, քսոս'տ շուն իրան տես, բռնած դործը տես: Նա խվեց, չե՞:

— Հա, աղա՛: Նա, եղ շան քածը:

— Ինչի՞ խիմեց:

— Հենց ենպես, ուզեցի բանեմ, վոր դեյրացուն ձեռքը տամ:

— Հա՛, հա՛, հա՛, գեյրացը՞ւն: Տե՛ս, տե՛ս հորամզաղին ... Տո՛, չուն, եղ ուխովդ ո՞ւր ես խցկվում. բա են ի՞նչ կին պիտի լինի, վոր քեզ թամահ անի:

— Զե՛, աղա Վոսկան, մի ասիլ:

— Դեյրացուն չմերցը՞ց:

— Ակի մոտ ել չեկավ:

— Փո՞ղը:

— Նմանապես:

— Լա՛վ ... լա՛վ ... լա՛վ ...

— Իմ անունը ավի՞ց:

— Ասաց՝ թող աչքը կոխի:

այս Նա՞: Կանուսուր ցիցնան, իսկ առաջ առաջ մեջնաց աչդիման Ա բայրու ու կառան ցիցնան պահանձն պահանձն

— Հար, ելի՞ :

— Լա՛վ, լա՛վ...

— Զեռքիցս չի պրծնի :

— Ձե՛նդ, սլարծենկուտ շուն :

— Մեղամիոր եմ, զալաթեմ արել, մեղավոր եմ, աղա վոս-
կան :

— Վեր կաց, կորի՛ր ... ել աչքիս չերեաս : Սփաթդ տես-
նում եմ, մաղձս շարժվում եւ : Քո սարսաղության ու լրբության
պատճառով լուսք և զրկվեմ են ... կորի՛ր :

— Թողություն արա, աղա՛, սխալվել եմ :

— Չոքե-չոք, չոքե-չոք արի, վուներս պաչի, թէ ուզում ես
ներսում խնդրել : արի, վոր քացով տամ դնչիդ, եղ քոսաղարու-
մոթիւլ :

Մակիչն ընկավ յերկու ծնկների վրա :

— Բա՛վ յեղիր ... Հը՛, եղակօս, հա՛ ... լա՛վ, լա՛վ ...
վառչինչ, են տեղը զցեմ, վոր գա ու աղաչանք անի : Կասկի ձեռք
ընկած մկան որս դուր ա աշխատում դուրս պրծնի, պիտի ու-
տե՛մ :

Մի քանի որ անց, Մակիչն իր ողնականներով տնից տուն եր
շրջում, անտպում, բոյութի վորանին ու ամեն տեղ հայտարարում,
վոր զները շատ են բնիկել, վոր աղա Վոսկանը հեռազիր և ստա-
ցել, թե սրահանջ չկա, թէ պատերազմի լուրերի սրատճառով
զներն ընկել են :

Եհրկու հոգու ել շըջակա զյուղերն են ուղարկել :

Ամեն որ տասնյակ ձիեր, ջորիներ, եշեր բեռնավորված կանդ
եյին առնում աղա Վոսկանի զուանը : Կրում եյին բոժոժը և փոռում
աղա Վոսկանի տան լայն պատշամբներում, գործարանի ընդար-
ձակ բարկում, արելի տակ չորացնելու, վոր թրթուր չծակի,
չփշացնի :

Աղա Վոսկանն ու աղա Բահկիմը պայմանավորվել եյին գնի
մասին, շըջանի մասին, թե ով վո՞ր կողմերի բերքը հավաքի :

Մակիչն իր շըջանում աշխատում եր 25 ոռոքու սահմաննե-
րում : Թէ կարողանում եր մի բան պակասով՝ խարում, առնում
եր ու պարծենալով պատճում, վոր մի թուրք դյուղում, մի պա-
ռավ կնկա բոժոժը զնելիս, կշռքի մեջ քարի աեղ վոտն և դրել,
թէ՝ «վոտս մի փութ ե», խեղճ կինն ել հաղատացել ե ու կշեռ-

քի մյուս նժարի մեջ բոժոժ լցրել: «Եթում են, յես վոաքս հուսկ եմ տալիս, նրանք ելի են լցնում. յես ավելի պինդ եմ ճխում վոսու... մաղալու բան եր», — ասում ե ու հուսում:

Վոսկան աղայի յերկաթե անդուկի մուրհակները դուրս եյին յեկել այդ որերին իրենց թագստառեղից և մաել Մակիչի դըր-պահը:

Վոչ լաց, վոչ աղաչանք—վոչինչ չեր ողնում, բոժոժն առնում եր պարտքի դիմաց:

Տուժողներին, վորոնք լացով ու կոծով աղա Վոսկանի դուռն եյին գնում աղաչելու, վոր ես անդամ չառնի, կամ զոնե կեսը վերցնի, մյուս կեսը մնա հետեւուլ շերքահովաքի, նա բարեսըր-տությամբ լսում եր ու ժաղալով տառմ:

— Քույրս, ախակերս, հերս, մերս, յես եղ գործերում չեմ խառնվում, Մակիչին, Մակիչին ասացե՛ք, թե մի բան կարա, թող անի, յես ի՞նչ կարամ անել ... նրա՞ն, նրա՞ն ասեք ... Ասե՛ք, աղան ասաց, մի բան անի:

Իսկ Մակիչին աղա Վոսկանի պատվերներից դուրս չեր գալիւ և պարտքի տեղ վերցնում եր բոժոժը, իսկ խնդրողներին՝ ար-ցունք աչքերին տուն ճամբում, կամ աղա Վոսկանի մոտ:

Են որվանից Նոյեմն աշխատելու չեր զնում: Մկեսուրը շաս-դես ու զեն ընկավ, վոր մի բան իմանա, շատ քրքրեց, բայց Նոյեմը վորոշ մի բան չեր ասում. սակայն նրա կցկառուր խոս-քերից քիչ թե շատ հասկացավ բանի եյությունը և դադարեց հարց ու փորձ անելուց:

Նոյեմի աշխատանքի չդնալն իրան դգաալ տվեց: Առանց այն ել դժվար եյին ապրում, եղ մի քանի կոպեկներն ել վոր կտրվեց ու մնացին պառափի ումուղին, չոր հացն ել դժվարությամբ եյին ճարում:

Ամբողջ հույսը դրել եյին բոժոժի վրա. այս քանի որ ա-կեալսեն ու ձմեռվա հացը էսպահովեն:

Նոյեմի սկեսուրը շերամի սերմը ապառիկ վերցըել եր աղա Վոսկանից: Դեռ շատ առաջուց ել մուրհակով Յօ մանեթ պարտք եր մնացել, իսկ մուրհակի ժամանակը վաղուց անցել եր: Աղա Վոսկանը լուռ եր: Խեղճ կինն ել մտքում ուրախանում եր, վոր յերեկի արած վատությունից ամաչելով, զղացել ու մնացածը չի պահանջում: Ո՞վ գիտե, գուցե ների ել ... Բայց չե, դրան նո-

չեր հավատում . սակայն — մարդու միտքը ծով ե , ինչ ասես , կանցնի վրավը , եղ ել եր անցնում :

Բոժոժը յերկու որ ե քաղել , պլծել են , ծղոտները դուրս տարել , սենյակը մաքրել և սպասում են , վոր աղա Վոսկանի մարդիկ զան , տանեն : Թէ վութ ու կես լինի , 25 մանեթով ելի բարդականին բան ե , հացն ել կառնի , հՀա մի բան ել կավելանա :

Նա ովատի մեջ ամբացրած յեռանկյունի հայելու կտորի մեջ զլուխն եր կտորում : Արծաթե զարդերից , կեռերից միայն մի կեռ եր մնացել , մյուսները վաղուց ծախել , կերել եյին : Ամբողջ կեռ ժամ նա զբաղված եր գլուխ կապելով : Կեռերի պակասը լրացնում եր քորոցներով : Թիղ ու կես բարձրության , ծայրը տափակ դիմի անձոոնի կապոցքը վերջանելուց հետո , բերանի կապը հետ տարավ , թքեց , շակեց կրծկակալը , ուղղեց յերկար շիլա շապիկի տակից մինչեւ դաստակները կախ ընկած վարտիկի ծայրը , հազավ մի քանի տեղից կարկատած քոչերը , վոր դրված եյին խսիրից դուրս , զռան մոտ , ուղեց բակ դուրս գալ , յերբ յերեխաները վաղելով յեկան , թե պ . Մակիչը և մի քանի ուրիշ մարդիկ վարդեա Ոհանենց տանն են , բոժոժ են առնում : Նա դուրս յեկավ բակը , մի քիչ տեղ զնաց , քանդված պատի վրայից նայնց , տեսնի՝ հո յերեխայքը չեն սխալվում : Հավաստիանալով , հետ յեկավ և նստեց զռան առջև ընկած գերանի վրա :

Նոյիմը մնաց սենյակում , վոր չտեսնի Մակիչի գարշելք դեմքը , վորից զզվում եր :

— Բա՛րե , նանի՛ :

Բակի ծայրից լսվեց Մակիչի ձայնը :

— Ա՛յ , աստծու բարին , Մակի՛չ ... եղ խի՞ եք ուշանում , չորանում ե :

— Եղ հարսդ խի՞ չի դալիս , մեկ փախավ :

— Մի քիչ քեֆ չունի ...

— Հա՞ :

Նշանակալից բացականչեց Մակիչը , քմծիծաղով և բեխերի ծայրը կրծելով : Հա՛ , եղ մի կողմ , վո՞նց ե բարամեղ . յերկու մսխալ ե , չե՞ :

— Հա՛ , յերկումն ե :

Մակիչը ձեռքը տարավ ծոցի գրպանը , մի կույտ ծալծըլված , դեղնած , իրար վրա խնամքով դարսած թղթեր հանեց և կոճղի վրա նստելով , սկսեց թղթերը չուտ ու մուռ տալ :

$\lambda^{w'}, h u \cdot b, q m w \cdots j k p l q n t \cdot m n j u a_l \cdot b \cdots \phi n q p \cdot \xi^{k^m u}$
 $m q l b_l :$

— զար, չեմ աղել, Ասկիք զարն:

— Վազիկին, կամա:

— *firm, quick, impulsive*:

— Բարսեմադ ինչպե՞ս է :

— Ծառ լավ։ Ամեն մեկը մի քնկույզի չափ։

— *h^oh^oz ukepu^o L, d^om^oq^oh^o:*

— կա՞զ, լա՞զ, ի՞նչքան կի՞մի — մի յերկու վութ կա՞զ:

— Ասես թե կդա :

— Յերկու փութ... Յերկու փութ վոր լինի, և ի մի բան
սպարտ կմնաս: եղ լավ չի... Ես վեքսիլը հո չի՞ս մոռացել:
Յերկու-յերեւ ամիս ել ժամանակից անց ե կացել:

— $\zeta_{\omega'}$, $U_{\omega'}$ и $\xi_{\omega'}$, $\zeta_{\omega'}$, $\xi_{\omega'}$ и L_L :

— Հրանի, ի՞նչ կասես, ես դու, ես ել քո մուլհակը:

Պետք է տաս սերմի փողը նմանապես : Աղա Վոսկանն ել չի սպասի ... Տղեղ և դնաց ու գնաց ... Բալքի մի բան և յեկել դլուխու ; Եղ մինչեւ յերբ սպասի խեցն մարդը :

— Զորանար լեզուող, — կամաց, այնպես վոր Մակիչը չլո՞ւ, մի կողմ առաջ նանը, բերանի շորն ուղղեց, ահհամոլիսո, վախեցած մի քայլ արեց դեպի Մակիչը և հարցըրեց.

— Բան ես իմացե՞ւ :

— Զե՞ր, հա՞ր, ենպես եմ ասում, ասելս են ա, թէ մինչև
յե՞րբ սպասի, թէ ուրիմն պարտքը պետք է տաս :

— Ախա'ր, Մակիչ ջան, զուբբա՞ն, ախար դու. չպիտի՞ս,
վոր չունեմ:

— Եղ ել, մերս, քո բանն ե, ո՞վ ե «ունես-չունես» հարց-նում, պարտք ես, պիտի տաս պրծավ դնաց: Բա եղակս բան կլինի՞: «չունեմը» վո՞րն ե, մուլհակով փող ես պարտք: Ի՞նչ, ուրեմն ասել ե՝ բաշխի՞ ... հի-հի-հի-հի- ... եղ ինչպե՞ս կլինի: Բարեկամությունը — բարեկամություն, հաշիվը հաշիվ ... Բարամա կա, տուն տեղ հո կա՞ ...

— Այ, Մակիչ, յանի ուղածդ ի՞նչ ե, վոր ես անբախտներին փողոց ածե՞ս. բա դա ի՞նչ խիղճ ե ... վոր բարաման տանես, յես սրանց ինչո՞վ պահեմ, — ցույց տալով քիչ հեռուն կանգնած յերեխաներին, ասադ նա:

— չա՛, ինչ եմ ասում. Հնորհակալ եմ աղա Վասիլանից, տվել

ե, նեղ որիս ձեռք ե մեկնել: Մակիչ ջա՞ն, թող մի քիչ ել սպասի, տեսնենք ի՞նչ խարար ե զալիս...

— Վո՞ւյ, վո՞ւյ ... Զե՛, չե՛ ... եղ չառես, ազա Վոսկանի ձեռից ել չեմ պրծնի: Մի բան ովետք ե անես ... Ախար, ի՞նչ յերեսով աղի մոռ դնամ, հարսդ ել եղակես Կարեց ...

— Հարսա ի՞նչ ե արել վոր...

— Զե՛, բան չի՛, ենակես եմ ասում ... ծուլություն ե անում, չե ուղում դալ աշխատելու, եղ վարպետի ինելքով ե ընկել ... Բա զու ի՞նչ սկսուր ես, վոր չես կարողանում խրատել: Յես յինեյի քո տեղը, մաղերից բոնած փողոց կշպրտեյի, վոր դնա իրա լակոտների հացն աշխատի, բերի ... Բա զու եղ պառավ տեղովդ, մեղքը յերկու տակ յեղած, մեղք չե՞ս որանքար դաներին ջանդ մաշես ու զրանց կերակրես: Լվացք, խմոր անելով ջանդ դուրս յեկավ. իսկ նա ջահել, առողջ, նստի տանի ու լամի՞:

— Ե՛ս, եղ հե՛չ ... թոյ ջանս գուրս զա, ոտարի համար հո չեմ անում, մինուամարիս նշանածն ե ու անբախտ թոնեերս ... Եղ հե՛չ ... Հա՛խ ասույած, նա ել աշխատում ե, դիշերը մինչեւ լույս աչքերը քսացնում, կար ե անում, գուրզա գործում ...

— Եղ յես ենակես ասացի, քեզ մեղք զալով: Զեր բանը դուք դիտեք, ամա պարաքը լրիվ պիտի տօս:

— Ա՛յ Մակիչ, սոներիդ նորկի հողին մատադ, մի՛ հնար տառ, ոխարժ վո՞րաեղից տամ:

Հարսիդ հաբցրու, նա բալքի ճարը դանի 40-50 կոսեկ վիզ եր աշխատում, թողեց: Աղա Վոսկանը վոր իմացավ, շատ բարկացավ, ասում ե — յերեի շատ ունեն, վոր աշխատանքի չի ուղում զալ, զու ել, Մակի՛չ, զնա՛ ու լրիվ մուրհակում նշանակված փողն իրա տոկոսներով գանձի:

Դե՛, յեկե՛ք, վերցրե՛ք, տարե՛ք, բարաման թե հերիք չի անի, գրտնակ, չուլ, փալաս, ես տաս տեղից կարկատած քոշերս ել հանեք, տարեք: Յես ել սրանց ձեռքից բոնեմ, դոնեադուռ ման զամ, վողորմություն համաքեմ ... ու լիներ իմ ծնված որը, վոր ու եր ... Տանջվելու համար ստեղծեց ինձ ասուլած:

Նա աղեկառուր մղկտաց, և արցունքները գլորվեցին աչքերից:

Մակիչը դեմքին մեղմ, կարեկից արտահայտություն տալով, մոտեցավ նրան ու բոնեց ձեռքը:

— Ախար, յես ի՞նչ հող տամ դլիսիս, վո՞ր ջուրն ընկնեմ, յես ի՞նչ եմ, ո՞վ եմ, աղայի մոռ՝ ծառա, ի՞նչ հրամայե են ել սլիտի

անեմ՝ թե չեմ ուզում յերեխեքիս ազգուստը կարել... կա՛ց,
կա՛ց, լաց մի լինի, նանի, բարքի մի բան հնարիմ՝ աղա Վոսկանի
սիրու փափկացնելու համար:

— Քե՛ղ մատաղ, Մակիչ, — աչքերը որբելով աղաչեց խեղճ
կիւը:

— Հա՛, այ թե ինչ հասեմ... Արի, թող հարսդ եղ պարա-
քի տեղ զնա աղա Վոսկանի առւնը ծառայության, դործը քիչ,
ինքն ել փառավոր կազրի, մի բերան ձեզանից կովակասի, բա-
րսմայի փառով ել ձմռովա հացը կռննես... Դե՛, աղա Վոսկանի
ել Հո չի՞ թողնի, աչքը ձեր վրայից անպակաս կանի: Դրանից
լավ ել ի՞նչ ես ուզում: Մենակ թե տեսնենք, աղա Վոսկանիը
դրան ի՞նչ կասի, թե համաձայն լինի, Հո լավ, բախտդ կրանի...

— Մակիչ ջա՛ն, զուրբան, մինչեւ կյանքից վերջը որհնու-
թյունս վրիցդ անպակաս կլինի: Ես անբախտների հացին ձեռք
մի տաք:

— Ա՛յ նանի, յես ի՞նչ, թե ինձնից կախված լիներ՝ Յօ մա-
ներն ի՞նչ ե, Հենց ենենց բախչելով կրախչեյի. բայց զիտես,
չի՞, վոր յես ել նրանից կախում ունեցող մարդ եմ, ինքնառուխ
Հո չի՞մ: Կազծում ես մենակ քո մուրհակն ե, ա՛յ տես... Նա
ձեռքը զրաբանը տարալ, և ծոցի զրաբանից մի կույտ ծալծլված
թղթեր հանեց:

— Ա՛յ, տե՛ս, բոլորն ել քո որին են, քեզնից վոր չպանեմ,
սրանից չպանեմ, նրանից չպանեմ, ասեմ մեղք են բա, եղ ո՞ւ լ
կհասնի: աղայի հրամանն ե, պետք ե հավաքեմ, իմ դիմու Հո
չի՞մ... Հրաման ե, չի՞:

— Մակիչ, ասում եմ դնամ իրա մոտ, վոտներն ընկնեմ,
աղաչեմ-պաղատեմ, բալքի...

— Զուր ա, բան չի՛ զուրս գա: Ինչ ասում եմ, դու ե՞ն արա:

— Ախար ... Նոյեմը վախենում եմ չհամաձայնվի: Գործա-
րանից յեկագ, թե ել վոտ չեմ դնի, ինչքան ստիպեցի, վոր ասի
պատճառը, չասեց: Տուն Հո սկի՛ չի համաձայնվի ... բա յերե-
խե՞քը...

— Ի՞նչ կա, գիշերները մեկ-մեկ կզա կտեսնի, կարութը
կառնի. հեռու տեղ Հո չի գնում, ա՛յ, հրե՛ն աղի տունը, հեռու
Հո չի՞:

— Իրան հարցնեմ, տեսնեմ ի՞նչ ե ասում ... — Աղջի՛, նո-
յեմ ... Նոյեմ...

Նոյեմբ սկսարոջ ճայնի վրա դլուխը դռնից դուրս հանեց և տեսնելով Մակիչին, շրջեց դլուխն ու ներս մտավ տուն։

— Աղջի՛, բա չե՞ս լսում։

— Մայրիկ, ինչ ասելու յիս, դու յեկ, յես դրա յերեսը չեմ ուզում տեսնել։

— Վո՞ւյ, քոսանա՛մ։

— Հի՛-հի՛-հի՛... նեղացել ե, խռովել։

— Դու ո՞վ, նա ո՞վ։ Ի՞նչ ունի խռովելու։

— Մի որ աղա Վոսկանը լավ բանողների համար նվեր գերացու բերեց, ալից ինձ, վոր բաժանեմ... Հարսէ, չվերցրեց նեղացավ ... դե մարդ ել նվերից կխռովի՞։

— Աղա Վոսկանն իմ հարսին խի՞ պիտի նվեր տա։

— Յեսի՞մ, խի։ Գնա իրան, հարցըու։

Նանը մտքի մեջ ընկավ, կիսաձայն ինքն իր հետ քթի տակ քրթմնջաց ու բարձրացնելով ուրուխը, նայեց ուղիղ Մակիչի աշքերին։

— Քեֆիդ տվածն արա, Մակիչ, իմ հարսա տան ծառայող չի, վո՞չ ել աղա Վոսկանի համար սիրեկան։

— Դու գիտես։

Աղա Վոսկանը յերբ լսեց Մակիչին, մաղձը շարժվեց, կատաղած բռնեց Մակիչի շնչեց, դուրս շպրտեց սենյակից և սկսեց հետ ու առաջ դնալ. հանկարծ կանգ առավ սենյակի մեջ ու գոռաց։

— Մակի՛չ։

— Համե՞։

Վախիխելով, դռան մեջ յերեաց Մակիչի գլուխը։

— Ներս ա՛րի։ Հենց եկուց կամ փողը, կամ Նոյեմը ... թե չե՞տուն, տեղ, չուլ, փալաս բոլորը փողոց կածես. դե կորի՛ք ...

— Լսում եմ, աղա Վոսկան։

— Գնա՛։

Հետեյալ որը Մակիչը մի քանի ուրիշների հետ դուրս թափեցին Նոյեմնց ունեցած-չունեցածն ու դուռը մի մեծ կողպե-քով փակեցին։ Յերեխեքը լուռ, Արթունքները կախ, կանգնած եյին բակում թափթփամծ իրերի մոտ, Նոյեմը տխուր նստած եր կոտրած որորոցի վրա, իսկ նանը գլուխը թակելով, լուռ,

թակարդ ընկոծ գայլի ողես պատույտ, պատույտ եր անում իրերի
չորս կողմը...

Վարդեա Ռհանի մայրը տեսնելով եղ բարբը, նրանց զնա-
լուց հետո քանդված պատի վրայից անցավ Նոյեմենց բակը: Մո-
տեցավ նրանց, մի քանի բռապէ լուռ կանգնեց յերեխաների մոտ,
Նոյեմի կողքին, նայում եր նրանց թափթափած իրերին, զլուխը
շարժում և քթի տակ ինչ վոր տառւմ, բայց չեր լավում:

Նոյեմի սկսեսուրը նրան տեսնելով՝ մոտ յեկավ, կատաղած
բռնեց նրա թեր, թափահարեց ու ինքն ել չիմացավ ինչո՞ւ, ճշաց
նրա յերեսին, կարծես նա յեր մեղավորը:

— Բա ես ո՞րենք ե ... ես խի՞զն ե ... ո՞ւր և արդարու-
թյունը ... արդարություն չկա, չուն ու դել, չովի զաղան սրան-
ցից ավելի դութ կունենան ... Բա աստված քսուցե՞լ ե, վոր
սրանց գիշանը չի անում ...

— Քույրիկ ջա՞ն ...

Աստված վողորմած ե ... բաց յերկնքի տակ չի թողնի ...

— Հի՞-հի՞-հի՞,—պառավն անստամ բերանով կարճ ծիծա-
ղեց, աջ ձեռքի մատներով ցած քաշեց բերանի կապը և թքեց դե-
պի վեր, դեպի յերկինքը: — Այս, նրա վողորմությունը, նա ել
ազա Վոսկանի կողմն ե ... մեղ, խեղձերիս հետ, ի՞նչ զործ ունի
նա ...

— Քույրիկ, քույրիկ, Սանամ ջան ...

— Սրտից հանել եմ աստծու անունը, թող հիմա կայծակ
դցի վերաս ու սրանց ել ինձ հետ երի ու խորովի... Սիրաս մաշ-
վել, թելերը կտրվում են... ել չեմ կարող: Նա ընկած չերիքնա-
զի գիրկը, գլուխը, հենեց նրա կրծքին, փղձկաց ...

Նոյեմը լուռ լալիս եր՝ կրծքին սեղմամ փոքր աղջկան, խել
մեծ աղջիկը լալով զրկել եր տատիկի վոտները և մըմնջում եր.

— Նանի՞ ... նանի ջա՞ն ... մի լա' ... նանի ջա՞ն :

— Մեռներ նանի՞դ, բայս ջա՞ն, վոր ձեզ ես որին չտեսներ ...

Ռհանի մերն ինքն ել լաց յեղավ, ու իրան զսպելով՝ սրբեց
աչքերը:

— Սանամ, հարս, յերեխեք, վեր կացե՞ք, լեն չենք ապրում,
բայց ձեզ համար տեղ կա ... նեղվածք կլինի, բայց սրտներս լեն
ե ... վեր կացեք, հավաքեցեք, ի՞նչ եք ողելացել, վերցրե՞ք ու
յեկեր հետեխց:

Ի՞նքը մի դոշակ զրկեց ու զնաց: Պատին հասավ, հետ նայեց,


տեսնելով վոր քարացածի ովես մնացել են, մի քանի քայլ դնա
նբանց, կանգ առավ ու հրամայական ձայնով կանչեց.

— Զե՞ք լսում ... նոյե՞մ, Ատհա՞մ, յերեխե՞ք, միմի բան
առեք ու՝ հայդա՞...

Վարպետ Ահանը տանը չեր. առւն դալուց յերբ իմացավ հա-
րեանների դժիսի յեկածը, կատաղեց, մատները կրծեց :

Շատ ուրախացավ, վոր մայրն այն և արել, ինչ ինքն ել կա-
ներ :

— Վոչինչ, սպասե՞ք : Շատը դնացել, քիչն և մնացել. ուզտը
նբանց զռանն ել կշոքի : Եղ հարուստների ու մակիչների դիվանը
յե՞ս եմ անելու, իմ ձեռքով : Նանի ջա՞ն, նոյե՞մ քույր, յեղեք,
ինչպես ձեր տանը ... չքաշվեք, մի վախենաք, կոկմանանք՝ մին-
չե եղ կատաղած դայլերի ատամները կփշրենք ... Գեղը վոր
կանգնի, ել քարբ քարի վբա չի' մնա, թողները յերինքով կտանք,
հլա սուս ... հլա ձեռներս փորներումս ոլահենք, դեռ ժամանակը
չի յեկել...



Ո. քաղաքի և Դ. գյուղի միջև ընկած և թոմայի ձորը։ Գորչ ու մռայլ։ Արեն այրել և ամեն ինչ։ Քարերն անդամ կարծես թըրծ ված՝ նոր հանել են հնոցից, ալավ և բարձրանում նրանցից և ողը տատանվում և բեկ-բեկ։ Կարծես շողիանում են կարծր ապաւումները։ Վաղուց և կարվել մարդու վոտքն այդ տեղերից։ Ջմռան սառնամանիքներին քաղցած դայլերկ պտավում են գյուղի շուրջը և վախենալով գյուղ մանել, վոռնում են այդ ձորում, իսկ ամառվա տոթ գիշերներին, յերբ ողը ծանր և ու անշարժ բորենին անվախ, ապահով քայլում և այլակազ։

Չորի անհրապույր, բուսականությունից զուրկ ապառաժների վրա կանգնած են թոմա առաքյալի վանքի փառառակները։ Վանքի կիսամութ կամարների տակ բուն ու չլէմին են բուն զրել։ Հնուու մարդկանց աչքերից, ձայնից, այդունդ արատ ապրում են կարինն ու ոճը։

Թոմայի վանքի մի բներքի վրա անշարժ նստած և մեկը։ Նա ել այդ ապառաժների պես մռայլ և ու բիրտ, նա ել ասես այդ ավերակների մի բներքն և, այնքան ներդաշնակ ըրջապատին, վոր թվում և գրանիտյա մի արձան, մի մարդ, վորը նստած տեղը քարացել և յուր վշտի մեջ։

Բայց նա շարժվեց, բարձրացրեց գլուխը։ Նիհար, ջլուտ, արևակեղ մորթը կարծես աջանով ձկված դիմուկների վրա, մաղերը խճճված։

Մի քանի որ և, նա դեռ լույսը չբացված դալիս նստում և թոմայի վանքի փառատակների վրա՝ լուսնը կախ, ձեռքի հաստ, չեզու դավազանով ինչ վոր ծուռ ու մռւռ գծեր և քաշում այնպես, աննազատակ։

Զնայած տաք, այրող արևին, նրա գլուխը բաց և, բորիկ վոտ ներին չլուստեր, դորշագույն վերնաշապկի կոճակները բաց, թագամազ կուրծքը զեմ տված արևին։

Նա չեր նայում շուրջը. այնքան կենորոնացած եր, վոր՝ չեր

նկատում թունավոր ոձերին, վորսնք վասալով, շաղագալով արեի տակ՝ դուրս ելին սոզում ամիբակների բեկորների տակից ու դաշտովելով՝ մի ուրիշ տեղ մտնում, կամ կծկվում և տաքանում արեի տակ:

Մերանքովիայով բանված մի թշվառակա՞ն, վոր փախել և մարդկանցից, մի դժբախա սիրահա՞ր, թե՞ պարզապես վախի մանիայով բանված հոգեկան հիվանդ, վոր մարդկանցից հեռու այդ վայրին և ընտրել իրին ապահով ապառանի: Թե չե ո՞վ և և ինչո՞ւ յե ընկել այդակ:

Յերկար նստած եր նա անշարժ. հանկարծ բարձրացրեց զլուխը, սե, խոշոր աչքերն անշարժ հոտեց առջեր փուլած ամայի հովանին, վոր մի հոկտ լիշի ողես մեկնվել եր մինչև հեռվում ոձի պես գարարվող դեսի ժամալենը:

Նա կրծտացրեց ատամները՝ այնքան ուժեղ, վոր թվաց, թե վոչ մի ատամ չմնաց քերանում. դեմքի մկանները կծկվեցին՝ կարծես ատամնանքից, և իրար սեղմած ատամների միջից վսսաց.

— Նզո՞վք, նզո՞վք քեկ...

Նա զզվանքով զլուխը շրջեց հակասակ կողմը, ուր ձորն եր տատիճան առ աստիճան վեր բարձրանում: Մի քանի վայրկյան լուռ նայեց զատարկ տարածության մեջ, գեմքն անշարժ, կոչտ մրոտ ձեռներով շոյեց լայն ճակատը, ցցեց զլուխը և հենվելով չեչոտ զավաղանին՝ վոտի յերավ ու արագ սկսեց իջնել:

Զորի խորքում նա կանգ առավ, կարծես ինքն ել չըկտեր՝ ուր զնար — դեպի վեր, թե՞ դեպի վար:

Արագ վորոշումով՝ անցավ զեպի վեր տանող նեղ անցքով և կանգ առավ առաջին հրապարակի վրա: Նայեց շուրջը զարմացած մի քանի բոպե կանգնած մնաց և ելի անհասկանալի փութիոտությամբ առաջ դնաց: Զորը կըկին սեղմվեց, նեղացավ, սարերը մոտեցան իրար՝ և յերկու կրոմից պաշարեցին նրան:

Հիսուն քայլի չափ դեպի վեր դնաց նեղ անցքով և յերեսուն կանգունի չափ ավելի բարձր՝ նրա առաջ բացվեց մի նոր ավազան: Լեռները կարծես դիմամուր հետ ելին քաշել իրենց փեշերը և լայն հրապարակ բացել:

— Հո՛ ... Հո՛ռ...

Անգիտակցարար դուրս թռավ նրա կրծքից այդ ճիշը և սթափելով, ծիծաղեց վնքն իր վրա: Այդ ծիծաղը հնչեց ամայի ձորում այնքան խորթ, վոր արձագանքը կարծես հեղնեց նըան:

և միշտվեց՝ սպառաժներին զարնվելով և հեռու գնաց՝ թագնվելու լիոնների ծոցում:

Նրա աչքերը փայլվեցին, ժպիտը քարացավ դեմքին, մի մոլոց յելավի կրծքից, վորը դժվար եր ասել. զայրույթի՞, թե՞ հրճվանքի արաւահայտություն եր:

Նա արագ գնաց:

Այլիս վոչ մի տեղ կանգ չեր առնում, կարծես վախենում, փախչում եր մնկեց, վոր հալածում եր նրան:

Նա ուշք չեր դարձում թեժ կրակի պես տաք քարերին, վոր կաշվի միջից անդամ այրում եյին նրա վոտեները։ Հեմիհեռվ նա հասավ ձորավախին և քրտիեքի մեջ կորած, դետին ընկալվ։ Յերկար ժամանակ աչքերը փակ նա պառկած եր՝ քնա՞ծ, թե արթուն...

Նրա լսողությանը հասնում եր ձորի գլխից հոսող լիոնային դեստակի ձայնը, վոր քարերի վրայից թափալվելով, սանձարձակ յերիշվարի պես բաշը քամուն տված՝ հոսում եր փրփրագեղ:

Գետի ջրերի ձայնը հեռվից, մոր որորի նման ասես նրան որորում եր:

Նա թմրել եր, գլխումը մտքեր չկային, բայց պարզ, ինչպես որը ցերեկով, նա տեսավ, վոր դետն ընթացքը փոխեց և արազահոս դալիս և դեպի ձորը ... ջրերը մոտենում են իրեն և քիչ անց՝ հորձանքն առավ նրան և լինեների մեջ և քշեց դեպի ցած... Նա ընկնում և թափալզոր, ցավ չի զգում, սիրտը սեղմվում և, ուզում և ճշալ, բանալ աշքերը, բայց անկարող և մի շարժում անել, մի ձայն հանել:

Գետը փոխել և յուր ընթացքը ... Ահա առաջին ավազանը լցվեց, ել տեղ չի անում ... սեղմվում և ձորի պատերին և ճանապարհ չգտնենլով ճգտում և յելնել իրեն կաշկանդող վանդակից... ուռանանում ե, յեռում ավազանի մեջ ... վերջապես նա դասավ յելքը, դտավ ... թափվում և պոռւնդներից և հոսում ցածի սվազանը ... Այդ մեկն ել լցվեց ... Մեկը մյուսի հետևից լըցվում են ավազանները։ Ահա վերջին ավազանը լցվում և, շուտով ջուրը դուրս կըս ձորից, կվայողի հոմիտը ... Դարերով ծարտվից ճաքված հողն ագահորեն կծծի, նա կարծես զգում և այդ կենսատու հեղուկի մոտենալը ... սպասում ե նրան սրտատրովի...

— Մեկ... յերկու... յերեք ... ո՛ւռո՞ւ ... Փրփրագեղ ջրերի առաջին ալիքի բաշը դուրս յեկավ հովտի վրա ... Քարից, հողից դոլորշի յե բարձրանում, ինչպես զարբնոցում շիկացած յերկա-

թից, յերբ դարրինը ունելիով բռնած՝ ջրէ մէջ և խրում շիկուցած յերկաթի կտորը:

— Անապատը հեղեղվեց...

— Անաօգատը ծաղկում ե...

Թիքէ դեփյուտն որորում և ցորենի և դարու արտերը: Ծփուժ են ծովի պես կանաչ արաերն անուշ վսոսցով: Ջյուն և ցանած բամբակի արանքում, սղիտակ՝ զանգակ ծաղիկների պես, կախված են հասուն բամբակի փաթիլները ... Աղջինները զույնդպույն հաղած, չանաց նն անում բամբակի արտում: Ռւրախ հնչում և կանանց յերզը, շուրջապար բռնած լնոնները արձապանքում են բնիքնել վող ձայներով, զնում հեռու, հեռու տարածվելու:

Խաղողի այդիներում խաղողի տասնյակ տեսակներ են հասնում — կարմրում, սևանում, դեղնում, ուռճանում, քաղցրանում: Մառերը ճյուղակտուք են լինում բեռան տակ ... Ծուխ և յեխում: Մետաքսոթելի գործարանում իլիկներն արագ պարտվում են, մետաքսը բարակ սարդի վոստայնի պես բոժոժից պոկվել, փաթաթվում և իլիկների վրա: Գոլորչի յերածրանում կաթսաներից: Կին, աղջիկ մինչև արմունկները թեքերը վեր քաշած՝ յեռացրած ջրից քամիչներով բոժոժ են հանում: Մարդկային խոսքը, իլիկների միալար բղզոցը, խառնվել են իրար ... Ենրամի հոտ կա այդտեղ, խաշած բոժոժի հոտ ...

Բոլորը լծված են աշխատանքի՝ —իին, սղամարդ... ուրախ և հնչում նրանց յերզն ու խոսքը ... կուշտ են ու դոհ... /

Ախարհի բոլոր կողմերից ոտարությունից վերագանում են պանդուխտները:

— Քիչ ե ... քիչ ե ... յեկե՞ք...

Շըում են իլիկները ... Պակասում են աշխատող ձեռներ ... գալիս են ու դալիս, աշխատանքը յեռում ե: Անտպատը ծաղկել ե: Այդ հսկա լեշի վրա, իբրև հուշարձան՝ ծաղկած բնույթյունն ե անուշ բուրում:

Հրճվանքի ճիշը խեղդվեց կրծքի տակ, սառը քրտինքը պատեց ճակատը: Սառած, մի քանի վայրկյան մնաց տեղում անշարժ: Նրա առջև ընկած եր բիրտ ապառաժու ձորը, ցածում ամայի հովիտը՝ մռայլ ու անպատուղ...

Նրա զեմքն առտիճանաբար մթազնեց, թամ հոնքերը կախվեցին աչքերի վրա: Աստիճանաբար գեմքը պարզվում եր: Հոնքերը վեր քաշվեցին, ճակատի կնճիռները հարթվեցին, աչքերը փայլեցին կրակով, վորսէ վրա հարձակվող վազրի պես՝ չանըըու-

տեղ գետինը, մոնչաց, վեր ցատկեց տեղից և ծիծաղեց լիաթոք...

— Անապատը կծաղիի՛ ...

— Կծաղիի՛ ... կծաղիի՛ ... կի՛ ... կի՛ ... ի՛ ... կրկնեց արձազանքը մի քանի կողմերից :

Դյուրից լովեց յեկեղեցու դաների ճայնը՝ թախծուտ ու մոռուսն, ինչպիս չվող կոռւնկների յերդ :

Վարդեմ Ուհանը վերցրեց հաստ դավաղանն ու դնաց :

Մաքերի մեջ խորասուզված, նատ արագ գնում եր :

Մովեց գեպի ձախ և նեղ նրբանցքով սկսեց վեր բարձրանալ :

Հասավ Սողոմոնի աղբյուրի հրապարակին ու կանդ առավ Հսկա չինարու տակ, ուր գերանների վրա նստուտած եյին գյուղի մեծերը. մյուս գյուղացիները կուչ եյին յեկել պատերի տակ :

Հրապարակի կենարոնում մեծ ալաղան եր չինված, իսկ չինարու բնի մատ Սողոմոնի աղբյուրն եր բոլիսում և բարակ առվակով հոսում դեպի ալաղանը :

Չինարին յուր հուժկու թեմերի տակն եր առել հրապարակը և ճյուղերը տարածել մինչև ալաղանի կեսը :

Գերանի մեջ տեղին նստած եր 75-ամյա ալեղարդ քահանան՝ մեղրամոմի պես դժույն դեմքով: Զորացած, յերակներն ուռած, մաղմաղոտ մեռքի մեջ ամուր սեղմած գավաղանը: Նա նստած եր անշարժ, հայացքը մի կետի, քիթը սրված՝ ննջեցյալի քթի պես:

Նրա աջ ու ձախ կողմերում նստած տանուտերն ու աղա վոսկանի կարծես վախսնում եյին շարժվել տեղերից, սելմվել եյին նրան, վոր պահեն այդ անշարժ դրության մեջ, կարծես մեկին համատափնելու համար, վոր մեռած չե: Լուռ եյին բոլորը, ընել ճիշած :

Հանկարծ, կարծես այդ վախը ցրելու համար, քահանան դանդաղորեն շրջեց գլուխը, կարմրած, կուչ յեկած աչքերի արտաքից նայեց շուրջը, քթածակերը լայնացան, ասես հենց նոր սկսեց չնչնէ: Քթախոտից դեղնած բնիսերի տակ շրթունքները շարժվեցին, բայց ձայն դուրս չեկավ: Մի վայրկյան անց — այն քան կամաց, վոր կողքի նստողները հաղիվ լսեցին — շռնջաց.

— Մեղավոր ենք ... Աստված բարկացել և ... կոփվ ... Հիվանդություն ... Աստծու ցասումը պիտի սասանի աշխարհը ... Աղոթք արե՛ք, մատաղ՝ կտրե՛ք...

— Մատա՞ղ մատա՞ղ մի մայրից մինչև մյուսը և տարածվեց շուրջը կանգնածների մեջ:

Մարդիկ նշանակվեցին՝ տներից ալյուր, փայտ, մատաղացուի համար փող հավաքելու, վորովեաղի կառեցնեն տառնութառումը:

Վարպետ Ռհանը, վորը մինչ այդ լուս կանգնած եր չինարաւ հաստ բնի մոտ, պոկլնց ծառից, յերկու քայլ առաջ անցավ և տվելի բարձր, քան ինքն ուզում եր, հուզմած ձայնով կանչեց.

— Ա՞յ ժողովուրդ:

Բոլորն այդ անսարսելի ձայնի վրա դարձան և տեսան նրա հուզմունքից դունատ զեմքը:

— Հը՞ մարպետ, ի՞նչ կա, ի՞նչ և պատահել, — հարցրեց տանուտերը:

— Նոր բա՞ն ես խացել, — հարց տվեց մի ուրիշը:

— Կոի՞վի և սկսվել:

— Կովից քան չդիտեմ: Նոր բան չունեմ ասելու: Հին, շատ հին և ասածու: Մենք աղքատ ենք, մեր յերեխնեքը տկլոր, կիսաքաղց: Մեր դյուդի տակի հողերը ծարավ են, յեթէ դրանց ջուր հասցնենք, մեր դյուդին ել գյուղի չի հասնի:

— Եղ, վարպետ, հին հեքյաթ ե:

— Հեքյաթ չե: Յետ կրկին ու կրկին համոզվեցի, վոր ասածներս զառանցանք չեն: Վոտքի տակ եմ տվել շրջակայքը, միակ տեղը դա յե, վրաեղից ջուրը վաղելով կդա: — Հենց հիմա յել այնտեղից եմ զալիս:

— Այդ վո՞րտեղից, քմծիծաղ տվեց աղա Վոսկանը:

— Սարեր ծակելու, տոնեներ չինելու կարիք չկա: 100 հազարներ չեն հարկավոր, ինչպես ինժեներներն են ասում: մենակ գուք ամբողջ դյուդով մեկ շունչ, մեկ հողի դարձած պետք և գաք իմ հետեւից, ինչպես Սողոմոնի հետևից գնացին մեր պապերը, և նրանց զանքերով ե, վոր բդիում ե այս աղբյուրը, առանց վորի մեր ձորն ել, ցածի հովտի պես՝ ամայի կլիներ:

— Ա՞յ ժողովուրդ, վեր կացե՞ք ... հը՞ մի ծիծաղեցին մի քանիսը:

— Եղ ի՞նչ ջուր ես դտել, վորտեղի՞ց ես բերում, վոր մենք չդիտենք, — արհամարական դիմեց նրան աղա Վոսկանը:

— Քետից:

— Շատ խորն ե զնացել, — ջուր չի տա:

— Շատ դիմուն գլուխներ են մտածել, աշխատել ու հեա
բաշիլ: Դեսի ջրերը մեղ համար չեն. 100 հազարներ են պետք,
ջուր հանելու համար:

— Յածի գետն ինձ պետք չե՞:

— Բա մորտեղի՞ց:

— Վերին գետից:

— Մարզ պետք ե ծակել:

— Մարմբը ծակելու պիտք չկա, մենակ թե դուք, ա'յ ժողո-
վուրդ, դուք ամենքիլ — մեծ, փոքր, կին, յերեխուա, բելորդ դաք
ջուր կրելու, կիր շաղախանըու: Ամբողջ ձմեռը զուր, աննպատակ
հոսում են վերի գետերը: Փոխիր գետի ընթացքը, և մենք կունեն-
անք մի հսկա ջրամբար: Տնկիր, ցանիր սերմերը, վոր դար-
նանը ծլում ու գելու գետնից ջրարձրացած, չորանում եյին առանց
ջրի: Զեր զցած սերմը կծլի, կաճի և առաստ թերք կտա ու մի քա-
նի տարուց ել աղջատ չի լինի մեր շյուղում: Այդ հովիտը բոլո-
րին կիշտացնի, բոլորը կաշխատն ու դոհ կլինեն:

Մի բողեք տիրեց լուռթյուն ու հանկարծ՝ պոռթկաց մի քրքիջ
և այդ հըսկըոցի միջից լսվեց աղա Վուկանի ձայնը.

— Խելազարդի՞լ ե, յերաղ և տեսել:

— Տե՞նդ ունես, վորդյա'կ, թե՞ դիվահար ես: Գետե՞ր ես
չըջում, ջրամբարներ կառուցում: Ծնդվե՞լ ես, վարպետ ... Ո՞վ
չդիսե, վոր ցածի հողերին թե վոր ջուր հասցնենք ... Դե՛, քո-
ուի ուղածն ել մի ջուխտ աչք ե: Շատ դիմուն ինժեներներ են յե-
կել, տեսել ու դնացել: Անհույս բան ե, վորդյա'կ, զուր մի
տքնիր, աստված անիծել և այդ հովիտը, ոճ ու կարիճ և բումնում
այդտեղ: Գնա խաղաղությամբ և աստված քեղ հետ, ի զուր մի
տանջիր ուղեղդ, վորդյա'կ, աղոթիր, վոր մեղ տեր ձիսուս Քրիս-
տոսը խնայի յուր ստրուկներին և մեղմացնի յուր ցասումք: Ա՛յ,
թաղաղորներն իրար են խառնվել, ասում են. աղոթք, հըս-
կում ... — նա զողղղողալով վուրքի յելազ: Խաղաղություն ա-
մենեցուն ... Տե՛ր աստված, վողորմ յա՛ ինձ, բազմամեղիս ...
Մատա՞ղ, մատա՞ղ պետք ե անել ... Աստծու ցասումը մոտ ե ...
Գնաք խաղաղությամբ:

Աղա Վուկանն ու Մելիքը նրա թեկերը մտած՝ տաքաւ:

— Գնանք, ա'յ ժողովուրդ: Մրա ես տեղը մի քիչ ... ծալք
պակաս ե ... Հի՛-Հի՛-Հի՛:

Ասաց զղիր Կարապետը և կաղալով վազեց, վոր հանի աղա-
ներին:

Հրապարակը կամաց-կամաց դատարկվեց :

— Ե՞յ, մարդիկ, լոեցի՞ք :

Կանչեց վարպետ Ռհմանը, կառապատճ նայեց նրանց հետեւց, կրծագրեց ատամներն ու մի արհամարական ժպիտ դեմքին՝ ընկալ աղբյուրի մոտ մի քարի վրա և ատամների միջից մրմնաց .

— Անմիտնե՞ր, անմիտնե՞ր : Դուք եք խելազարը, դուք, վոր հույսներու աստծու վրա գրած՝ ընկել եք աղա Վասկանի ու տերտերի շանցի մէջ, արնաքամ եք լինում :

Չինացու բնին սեղմած Հարումնեց Յեղիան, վորն այդ որևէ եր գուրու յնիկել կալանքի տակից՝ աղա Վասկանի ջուրը գողանալու համար, մոտեցավ Ռհմանին և դառնացած մրմնաց .

— Վեր կաց, վեր կաց, վարպետ, տուն զնանք : Նրանց ինչերին և ջուրը : Յոթն աղբյուրի ջուրն ել նրանցն և, խել մեր բաղերը թող չորանան, ջանդամը : Վեաս չկա, վոր կսատկենք. ու մի ինչը կպակասի, մենք ի՞նչ մարդ ենք վոր...

— Մարդ չենք, Յեղիա՛, անդիտակից, ինչպես վոչխարի սուրու : Տեսա՞ր հարուստների հետեւց ինչպես բոլորն ել քաշ-վեցին : Մինչև մենք ել հարուստների նման չդիտակցենք մեր, աղ-աղքատներիս շահերը, միշտ ել սորուկ կմնանք ու եսպես չուռ-տած...

Վարպետ Ռհմանը ձիեր եր պայտում յուր փոքրիկ դարբնուցի առջև :

Ծերբմն նրան թվում եր, թե տերտերը, աղա Վոսկանը և մյուսներն իրավացի յեն, թե այդ հովիտն անիծված և, թե ջուր հասցնել նրան անհնար և, թե այդ հսկա լեշն ընդմիշտ դատապարտված և ամայության :

Նա սկսել եր կասկածել, վոր դարերով ծարավ ձորն աղա-հորեն կծծի դետի ջբերը և կրկին կմնան դատարկ ու չոր : Մոայլ-վում եր նրա գեմքը, ինչպես դարբնոցի անկյունում թափված ժանդու յերկաթի կտորներ :

Ծերբ մեկն ու մեկն աշխատում եր համողել, վոր ձեռք քաշի խալսի համար մտածելուց՝ օջանդամն իրանց գլուխը, նա վոչինչ չեր պատասխանում, մի արհամարական ժպիտ ծոռում եր նրա շրթունքների ծայրը, մուրճը ձեռքին կանդ եր առնում մի վայրկյան, ու ելի՛ շարունակում կիսատ թողած գործը :

Մի քանի որ եր, ինչ նրա փոքրիկ դարբնոցը փակ եր: Նա
մտել եր տուն ու զյուղամեջ չեր դուրս դալիս:

Թախտին կիսապառկած, հայացքը մի կետի դամած, նա
ժամերով մնում եր նույն դրության մեջ:

Նոյեմբերու, անըուն հետեւում եր նրան: Արգյոք ի՞նչ մտքել
և զբաղեցնում նրան: Նոյեմբերու պատրաստ եր ամեն ինչ տնել,
փրախողի կարողանա փարատել նրա տիրությունը, բայց չեր
համարձակմում մոտենալ, հետաքըքիլել: Յեվ հեռվից-հեռու
տանդիւմ եր նրա հետ, իսկ պառավ մայրը վախեցած, հարցա-
կան, չոված աչքերով նայում եր նրան, շրթունքները դողդուա-
լով հարցնում:

— Ուս'ն, բալա՛ս, զուրբա՛ն քեզ, ի՞նչ կա, վո՞րանդդ և ցա-
լում:

— Բան չկա, նանի, տեղս ել ա չի ցավում:

— Բա իմ՝ յես եղանես:

— Անհանդիսա մի՛ լինի, նանի, բան չկա:

Ու մայրը ձեռները կրծքին ծալած, վորբի նման ծալապատիկ
նստում եր անկյունում և անթարթ նայում եր վորզուն, վորը
թե ասաց, թե վոչինչ չկա ու վոչ մի տեղ չի ցավում, բայց մոր
սիրտը հանդիսա չեր, հետեւում եր նրան աչքերով, չեր փախց-
նում նրա վոչ մի շարժումը:

— Թե հիվանդ ե, հիվանդի նման չի, հիվանդ վոր լինի, բա
չի՞ տնքա, թե հիվանդ չի, բա ես ի՞նչ ե հալլ: Արգյոք գի՞ր են
արել, աչքով են տվել... Դուցե մի աղջիկ ե գլխից հանել... Դե՛,
ել ի՞նչ ե լուսմ, թող ասի մորը, ո՞վ չի կասի, վոր Ուսան իբ
հավանած աղջիկն ուղի: բոյին, բուսաթին, խելքին, ի՞նչ ասես
ձեռքիցը չի դալիս, — նրա ձեռքին զուրբան...

Նա մեկ ուզում եր վեր կենա, զնա, գրկի գլուխը, լալով ա-
ղերսի, վոր չթագնի սրաի դարդը, ասի մորը, մեկ ել տաղ եր
անում ու ավելի կուչ դալիս...

— Աչքով են տվել բալիս, — գիր են արել, — քթի տակ մըմըն-
ջում եր նա և մտածում եր առավոտը վաղ գրացի մոտ զնա, թե
աղջիկ ե Ուսանի խելքը տարել, եղ ել նա կասի:

Այդ մտքերի մեջ պառավը, վեր կացավ և բակ դուրս յե-
կալ:

— Նոյեմ... Հերիքնա՞զ ... Աղջի Նոյեմ, — կանչեց նա:

Թոնրատնից դուրս վաղեց Նոյեմը, իսկ հետեւից՝ Հերիքնա-
զը արագ մոտեցան և տեսնելով նրա այլալված գեմքը՝ վախե-
ցած հարցըին.

- Ի՞նչ ե, մայրիկ։
 — Ելի ի՞նչ ելավ։
 — Մի գեսն յեկեք ... մի առև ի՞նչ ե պատահել բալիս ...
 զետը տաներ նրա մորը ...
 — Ի՞նչ ե, հիվանդ Հո չի՞։
 — Հիվանդ չի', լավ ել չի... Աչքով են տվել, զիր են արել ...
 — Նոյնը մի քիչ սեղ վաղեց ու կանդ առավ՝ չամարձակ-
 վելով առաջինը ներս դնալ։ Հերիքնադի թևից բռնած, Ուշանի
 մայրը, վաղելով, վորքոն թույլ ելին տալիս ծեր վոտները, -
 քարչ եր տալիս նրան։
 — Աղջի', կամաց, առան գցեցիք։
 — Արի', արի'։
 Նրանք ներս մտան, Նոյնը մնաց գաներում։ Շամչը կտըր-
 վում եր, սիրան արագ բարախում։ Յերբ նրանք ներս մտան,
 Ուշանը բացեց աշխերը, ժպտաց ու ելի վակեց։
 — Ուշան ... Ուշան ...
 — Լավ եմ, նանի, մի վախենալ. քուն առանում ե, յերեք
 սր և լավ չեմ կարողացել քնել։
 — Թնիք, բարս'ո, ցավով առանի մերդ ... քնի՛ր։
 — Աղջի', մի խոսացնի՛, —թող քնի՛։
 Նրանք շարժվեցին զեղի զուրք։ Նոյնին արագ վախավ,
 կողավ թթի ծառին և ուրախությունից, վոր վոչ մի լուրջ բան
 չկա, հեկեկաց։
 Յերկու պատահները դուրս յեկան։ Դռների միջից Ուշանի
 մայրը մի անդամ ել նայեց տղի կողմը, քիչ հանդուսացած՝ ինքն
 ել դուրս յեկավ։
 — Տնաշենի կնիկ, լեզաճաք արիր։ Ի՞նչ ե պատահել, վա՞ռք
 աստծու, քունն և առանում, հողնած ե, թող քնի։ Ի՞նչ ես վա-
 խեցել։
 — Հերիքնա՛զ, աղիով քույրո, սուս ե արել, հարցնում եմ,
 բան չի առամ։ սիրտո քիչ եր մնում տեղիցը ծափ պես դուրս
 թռչի։
 Յերկար ժամանակ զումն առաջ նատած, նրանք քչփչում
 ելին։ Ուշանի մայրը մեկմեկ զլուխը զոնից ներս եր տանում,
 նայում ու ելի հետ զալիս։
 — Ե՛ս, դու ել, աղջի', բաներ կասես վոր։ Բան ել ա չկա։
 Ի՞նչ ես նախանակո բաներ առամ։ ինձ ել վախեցրիր։ Զենդ վոր
 լսեցի, ասեցի՛ կրակ ա ընկել առան։

Այն խոր հավատը, համողված տոնը վորով նա խոսեց, սկսեց շատերին վարակել: Որորի վրա շատանում եյին նրա կողմնակեցները: Շատերը ոկանցին հավատալ, վոր վարպետ Ոհանի ծրադիրն անիբաղործելի չե:

Բայց առանց միջոցների ի՞նչպես կարող եյին ձեռնարկել շինարարությանը: Հարաւատները մոտ չեյին զալիս, բացի այդ՝ աչխառում եյին հիսամթափների, ասելով, վոր ընկննն ցցնդվածի» խելքին: «Եերադ և անսել ու խեղճերին ել մոլորության մեջ և զցում: Յեթ վերջապես, այդ հողելն արժեն արդյոք այդքան ծախսեր: Չուր են չարչարջում: Թող ամեն մեկն իր աղքատության հետեւց զնա: Պլուխ գալու բան չի»:

Գյուղացիների վողենորության վրա սառը ջուր եյին լցնում, նրանք ել հուսահատված մի կողմ եյին քաշվում, սպասելով, թե ի՞նչով ե վերջանալու Ոհանի և հարուստների սպայքարը:

Ոհանը չեր վհատիւմ: Փոստատար Մուրադի և Հարումենց Յեղիայի ու մի քանի գիտավիզ գյուղացիների հետ, խելք-խելքի եյին տալիս, թե ի՞նչպես իրազործեն ջրի հարցը:

Գյուղն ընկած՝ չքայորներին հասկացնում եյին, վոր չսեն հարուստներին, վոր առանց նրանց ողբության ել էլուխ կդա, միայն թե ձեռք-ձեռքի տան, խելք-խելքի, մարդ ուշարկեն քաղաք. նրանք ել կհամացեն այնտեղի համադրացիներին, կասցատրեն և որանք, տեսնելով այդքան պարզ, ձեռնտու բան, անպատճառ ողնության կդան:

Զրի հարցը հուզում եր բոլորին. կային հավատացողներ, կային այնպիսիներն ել, վոր լսել անդամ չեյին ուղում, ծրագիրը համարելով անմիտ բան և ծաղրում եյին հավատացողներին: Վոմանք ել կարծում եյին, թե առանց հարուստների բան դուրս չի գա:

Վարսկետ Ոհանի մողենորությունն անհաջողությունից չեր նվազում: Նա այնպես համոզված եր, վոր չեր ել կասկածում հաջողության մասին:

Այն վախը, թե ձորը կարող և կուլ տալ գետի բոլոր ջրերը, այլևս նրան չեր տարսափնեցնում: Ինչքան ուղում և ծեծի, վերջն ելի աղբյուրներ զարձած՝ ջրերը հովիտ են զուրս գալու, մինչեւ կլշտանա, տիղմ կնստի, ճահճահիստեր կրուսնեն և կամրանա: Առի հատակն ու կողերը:

Հավատացողների, վոցենորվածների թպին ավելացամ Նոյնմը:

Յերբ Ռհանը նրան բացատրեց յուր ծրագիրը, նա ուրախությունից առաջին անդամ բռնեց Ռհանի ձեռքը և յերկար պահեց ափի մեջ, բայց չկարողանալով յերկար նայել նրա աչքերին, ամոթահած՝ խոնարհեց դլուխը, կարմրեց և բայց թողեց նրա ձեռքը, դուրս փախավ:

— Նոյեմ ... Նոյեմ ... — կանչեց վարպետ Ռհանը և մի անուշ ջերմություն անցավ յերակներով, ակամա ժպատաց ու հառաչեց:

Նոյեմը վսպելորված, յուր չերթին կանանց շրջանում խոսում եր, բացատրում նրա ծրագիրը՝ նա յել վողեռորդել եր Ռհանի վողեռորությամբ և ամեն տեղ — աղբյուրի զվարին հարս ու աղջիկների հեա — խոսելու նյութը ջուրին եր:

Յերկար ժամանակ Ռհանը նստած յուր սենյակում, չեր կարողանում կենուրոնանալ: Նա աշխատում եր զծագրել ավաղանները, նեղ անցքերը, վոր մի ավաղանից մյուսն եյին տանում: Յուր համար այնքան պարզ բանը թղթի վրա դատոնում եր անհասկանալի, վոչ համոզեցուցիչ: Նա յերկու ձեռների մատերը խրել եր մաղերի մեջ և յերկար, անշարժ նստած եր: Փոքրիկ նալլթի լամպն աղոտ լույս եր ձգել նրա բրոնզի նման արեսակեղ դեմքին: Գանդուր, խճճված միրուֆ ընկել եր առջել փոած թղթի վրա: Նրա ժաքերը ցրվում եյին: Նախ՝ նրան խանդարում եր նոյեմը, վոր հարևան սենյակում քնած եր, ապա հիշեց աղա Վոսկանի և Մակիչի տմարդի վարմունքը և անիծեց աստծում, վոր այդպես վաստ, անհարվասար և ստեղծել աշխարհը: Հետո ծիծաղեց ինքն իր վրա՝ «Աստված վո՞րն ե, նա ի՞նչ անի, վոր մենք տղետ ենք, տավար և թույ ենք տալիս, վոր մի Վոսկան, կամ մի տերաեր շահագործենի, թալանեն ու փողոց նետեն ... Մենք, մենք ենք մեղավոր, մեր անդիտակացությունից են ոգովում նրանք, մեղ շահագործելու համար: Յեթե բոլորս խոսքը մեկ անենք, ել վո՞ր Վոսկանը, կամ վո՞ր տերտերը կարող ե ասել, թե աչքիդ վրա հոնք կա...»

Այդ ժաքերի մեջ եր, վոր ականջին հասավ դռան մուրճի ձայնը: Նա տեղից չշարժվեց, մինչև մի քանի անդամ ավելի պժեղ չկրկնվեցին մուրճի հարվածները:

Զարբացած՝ բարձրացրեց դլուխը, լարեց լսողությունը և յերբ համոզվեց, վոր իրենց դուռն են բաղխում, վեր կացավ, վոր պնա: Մյուս սենյակից լսվեց մոր ձայնը.

- Ուշա՞ն, մե՞ր դուռն ե:
- Հա՞:
- Ո՞վ կարող ե լինել ևս կես դիշերին:
- Ի՞նչ կես դիշեր, նոր մթնեց:
- Կա՞ց, յես զնամ:
- Դու պառկիր, վեր չկենաս, նանի՛, յես գնում եմ:
- Ախար ո՞վ ե, Ե՛...

Ուսանը զնաց: Բայց չեր կաբողանում դուշակել, թե ո՞վ է հիշել իրեն, ո՞ւմ ձեռքն ե բարձրացել բաղմելու դուռն այս ուշ պահին: Մուրա՞գը, հը ... մարդը բալքի նոր բան ե լսել քաղաքում: Այդ մտքնըի մեջ նա հասալ դուսնը և մեծ յնդավլ նրա զարմանքը, յերբ դուսն մեջ տեսավ մի վուր կառ, կարճահասակ դդիր կարապետին՝ չեչոտ, հաստ մահակն ուսին:

Զարմացած մնաց դռներում. զլիրը հաստ մահակն ուսից իջեցնելով, շտամր-շտամր, կակաղելով խոսեց:

- Վարպե՞տ, կանչում են, զնանք:
- Ո՞ւր, ո՞վ ե կանչում:
- Նրանք ելի ... տանուտերը, աղա Վոսկանը:
- Խ՞եր լինի:
- Խեր չեղած, ի՞նչ պիտի լինի:
- Կա՞ց, դլխարկս առնեմ:
- Ուշա՞ն, —անհանգիստ դիմավլորեց նրան մայրը:
- Դդիր կարապետն ե, յեկել ե հետևից. Մելիքը, աղա Վոսկանը կանչում են:

— Ի՞նչ կա վոր:

— Զդիտեմ:

Նա վերցրեց զլխարկն ու դուրս զնաց:

— Ուսան ջա՞ն, մասու՞ղ, չուշանաս:

— Դու պառկի՛ր, նանի՛, ինձ չսպասես:

— Ե՛հ, ինչ պառկիմ, բա...

— Ինչ ե՛հ ... զնա, պառկի՛ր, չուտով կդամ:

Մայրը նրան մինչև փողոցի դուրս ճանապարհ դրեց ու ինքն իր հետ խոսելով՝ վերադարձավ, նստեց անկողնի վրա ու ել քնել չկարողացավ. դարթեցրեց Նոյնմի սկսարովը:

Գղիրն ու Ռհանը զնացին նեղ, քարքարուտ փոսպացով դեպի վեր : Ռհանը լուռ դնում եր, զղիրը քարերին թիթիկացնելով գավաղանը, լողնդալով հաղիք եր համառմ նրան հետեւց :

— Մի քիչ կամաց, տնաշեն: Թո բոյնդ ել մտիկ, խմին ել: Յև կարա՞մ քու յերիշով զալ:

— Դե, արի', Ռհանը ժողացալով գանգաղեցրեց քայլերը: — Բա բան չառացի՞ն, թե ինչի համար ե:

— Զե', բան չառացին, կարծեմ. ջրի համար ե:

Նրանք ծովեցին դեպի ճախ ե քիչ տեղ զնալուց հետո, կանք առան աղա Վոսկանի դռան առաջ: Գղիրը մի քանի անգամ զռան վրա կախած մուրճով հարովածնց մուրճի տակ ամբացված մեծ, տախակ մեխին: Մի պահ տիրեց լոռիթյուն, քիչ անց՝ զարգացը կիսաբացվեց և նրանք ներս մտան:

Սառերի արանքից յերևաց աղա Վոսկանի յերկհարկանի առումը:

Սոսիճաններով նրանք բարձրացան յերկրորդ հարկը: Յերկար ու նեղ սրահի դիլսին, պատի տակ փոված խորինների և խալիների վրա, բարձերին հենված՝ նստած. Եյն վեց հոգի: Նշաններաններով, զարսած սփոսցի վրա զրված եր մի գրաֆին ողի, մի պնակի մեջ ապուխտ՝ չոր ընկույզի հետ, մի ամանի մեջ մեղրահաց, մի ուրիշ ամանում ել կրորկլոր կտրտած վարունդ:

— Կարապե՛տ, լավ շո՛ւա:

— Վաղեվաղ զնացի:

— Դե', համեցե՛ք, վարպե՛տ, համեցեք նստի՛բ:

— Բարի յերեկո՛:

— Ա՛յ, աստծու բարին, — մի բաժակ լիքը ողին մի ձեռքին, մյուս ձեռքով բռնելով վարպետ Ռհանի թեկց, նստացրեց յուր կողքին աղա Վոսկանը:

Ռհանը կուշ տվեց ողին, վարունդի վրա քսած մեղրի պատառը դրեց բերանն ու մի քանի անգամ հաղաց:

— Հը՛, թո՞ւնդ ե:

— Վաղուց չեմ խմել:

— Մեկն ել:

— Զե', չնորհակալ ես: Ի՞նչ կա, խեր լինի. Ի՞նչ եք հակառ բռվ կանչել ես միին:

— Մի վաղի, կիմանաս, հա ես մեկն ել քցիք:

Ռհանը չստիպեց խնդրել. շրթունքները որբեց, յերկու մատի

ծայրով մի կտոր ապուխտ զցեց բերանը, սուր առամներով փշեց
ապուխտի աղի կտորը և հարցական նայեց շուրջը:

— Պ. Վոսկա՞ն, ասա՞ :

— Կասեմ, կասեմ, ի՞նչ եք վոաղում: Թող մի յնըկու ֆին-
ջան խմի, քեֆը տեղը դա, վոաղելու ի՞նչ կա: Հարյուրավոր տա-
րիներ մեր հայրերը, պապներն սպասել են. մենք ել կսպասենք,
վոաղ չի: Թե մի բան գուրս ե գալու, դուքս կդա, թեև ելի յեմ
առում, վոր խելքս բան չի կտրում:

Ուանի հետաքրքրությունը շարժվեց: Հասկացավ, վոր լրի
համար ելին կանչել ու առանց հրավերի սպասելու՝ ողու շիշն
առում, լցըն և մի չնչով դատարկեց:

— Ա՞յ, սադ ոլ, վարպետ ... Նդպես, տնաշե՞ն, մի սիրադ
բաց, սադ աշխարհի հոգսը կասես քեզ են տվել: Կարապի՞տ ...

— Համե՞ :

— Մոտ արի:

Դղիբը, վոր մինչեւ այդ՝ փայտի վրա հենված, բերի ջրերը
վաղեցնելով՝ կանգնած եր դռան մոտ, արագ դեմ տվեց ձեռքի
փայտը դռանը և կաղալով, փութաջան մոտեցավ, ճանապարհին
թեքերով որբելով բերանը:

— Յա՞ , Հիսուս Քրիստո՞ս ... Սադ լինեք, ուրախ, — առաց
ու քաշեց դլուխը: Մելիքն առանց նայելու դղիբի վրա, իր ձեռքով
մի կտոր վարունդ դլիմի վրայով մեկնեց նրան:

— Սադ լինեք, աստված յերկար կյանք տա, — նա չիչփաց-
նելով մոտեցավ պատուհանին ու նստեց:

— Հա՞ , վարպետ, ստում են՝ ուղում եք մարդ ուղարկել քա-
ղաք՝ ջրի համար. դրուստ ե՞՝ — կախ հոնքերի տակից նայելով —
Ուանի վրա, հարցընց Մելիքը:

— Քաղա՞ք: Հա՞ , եղան մի միտք ունենք:

— Եղ ի՞նչի համար:

— Խորհրդակցելու ... ջրի համար:

— Խի՞ , մենք եստեղ մեռած ենք, մեղ մտավ աղա Վոսկանը:

— Են որն ինչ վոր ասացիր, խելքի մոտ բան չթվաց: Մի ման-
րամասն բացատրիր, թե եղ վորտեղից, ի՞նչ ճանապարհով ես
ուղում ջուր հանել. ի՞նչքան փող ե հարկավոր, տակից կարո՞ղ
ենք դուրս գալ, թե չե: Քյալազյողությամբ մի բան չի լինի, թե
դլուխ դռան ե, դլուխ կանգնենք ու մի բան անենք: Մենք
եստեղ, քաղաք խի՞ յեք գնում, բա մենք եստեղ մեռա՞ծ ենք:

— Դե, վարպետ, դու ել դիտես, վոր եղ քյասիր-քյուտուր-

ների ձեռքից բան չի դուրս գա: Թէ վոզ պետք լինի, ելի մեր գլուխնից և դուրս զալու, —մեջ մտավ աղա, Պողոսը՝ մի չորացած, մեռնելուն մոտ մարդ:

— Հա՛, վարպետ, կանչել ենք մի ծանոթացնես քո պլանին, թե գլուխ զալու յն, ել չուշացնենք:

Մի քանի վայրկյան տիրեց լուռթյուն:

— Ա՛յ, ես վեցս կանք — բոլորս ել ունեոր ենք, վա՛ռք առածու, — շարունակից աղա Վոսկանը, — դուռ ել յոթերորդը. ընկերանանք, եղ հողերը գյուղացիներից մի կերպ ձեռք դցնեք, — դե՛, դա մի դժվար բան չի. — անպետք չու, վոչ վոքի պետք չի: Մի քանի հարյուրով գլուխ զալու բան ե, կառնենք, կրառնա մեր յոթի սեփականությունը, են ժամանակ արժի ջրի մասին մտածել: Ահաղին հողեր են, թե չմ՝ ուզ գյուղով Ա՛յ, վարպետ, են ժամանակ ինչ եմ ասում, թե ջրի հարցը գլուխ յեկավ... դե՛, հո ել ինչ ... պրծավ — գնաց...

Ուհանը բարձրացրեց գլուխը, մեկ-մեկ նայեց նստածներին ու դառնորեն ժպտաց:

Կրկին տիրեց լուռթյուն:

— Հը՞, ի՞նչ կասես:

— Ի՞նչ ասեմ ... լավ եք մտածել, աղքատ-ուղքուներին ել կրանեցնենք եղ հողերի վրա ... իրենց հողերի վրա, նըանք ել քաղցած չեն մեռնիլ: Բարի դործ ե, մենք ել լավ կտոցենք: Բայց լավ չհասկացա-փողը դուք եք զնում, բա ի՞նչպես ե, վոր ինձ ել ընկերացնում եք:

— Մենք փող կղնենք, դու յել, թե կարաս, ջուր կհանես: Հա լաւ յեղբայրների պիս կրաժանենք:

— Դրա համար եք կանչե՞լ: — Նա վոտի յելավ, թափ տվեց գլուխը, խճճված, սև մաղերն ոճերի նման իրար անցան: Ուզեց բան ասել, բայց փոխարենը մի կարճ ծիծաղ դուրս յեկավ կըրծ-քից, վորն իսկույն ընդհատվեց, ու լուռ գնաց դեպի դուռը:

— Եղ ո՞ւր:

— Զե՞ս ուղում ընկերանալ, վախենում ես բան դուրս չըս: Մախիր, գինդ ասա, թե բան ես ուղում անել: Ինքը չես կարող գլուխ բերել, բեր մենք անենք: Գինդ ասա, թե ձեռք կտա, լավ, թե չե — դու քեղ համար, մենք ել՝ մեղ:

Ուհանը հետ դարձավ, մի քանի քայլ արեց դեպի նրանց, կանգ-նեց:

— Եերկուսից մեկը, կամ ընկերացիր, կամ ծախիր: Մախո՞ւմ

ևս, դինդ ասա, թե խելքերիս նստեց կտանք: Արի՛, հենց ես գըլ-խից ստացիր մի 1.000 մանեթ: Հաղաբ եմ ասում, լավ լսիր, քիչ փող չի՛:

— Կանչել եք, վոր կաշա՞ռնք: Եղ հողերը գյուղին են պատկանում: Ամրողջ դյուղն ել պետք և հավասար ողտովի եղ հողերից: Դուք ուզում եք յես ել ձեղ ընկերանամ, վոր մի քանի մանկով գյուղացիների գլուխը յուղենք ու հողերի տեր դառնա՞նք: ԶԵ՛, ԲՀանի գլուխը դեռ ուսերի վրա յե: Մեկ ել սխալ եք, յես ինչ ձեր թայն եմ: գուք ունեոր, յես մի արհեստավոր, չքավոր մարդ: Ճի՛, եշ նալելով, բանալի ու խոփ շինելով եմ հաց աշխատում: Բայց քանի յես սաղ եմ, թույլ չեմ տա, վոր դուք գլուխ բերեք ձեր դիտավորությունները: Ինձ փողով, յա թե խոստումներով չեք կաշառի, յես չեմ դավաճանի ինձ նման խեղճերին, թեկուզ վոսկի սարեր խոստանաք:

— Ի՞նչ կաշառք, ի՞նչ բան, ի՞նչ ես սարսաղ-մարսաղ դուքս տալիս: Եղ հողերը գյուղացիների ի՞նչին են...

— Բա ձեր ինչի՞ն են:

— Անջուր՝ մեղ ել պետք չեն, բայց վոր...

— Բայց վոր ջուր լինի, նրանց ել շատ պետք ե:

— Դե՛, գնա ջուր հանի, տեսնեմ ինչպե՞ս ես հանում:

— Առանց մեզ ես գյուղում մի ծեղ ել ա չի շարժվի տեղից: Եղ քո տկլորները բոլորն ել ա՛յ, ե՛ս բուանս մեջ են: Ուղենամ՝ հուպ կտամ, ճիիլները կհանեմ: Վեցսիլներ կան—ա՛յ եռքան, — նա ձեռքով ցույց տվեց մուրհակների կույտի հաստությունը և հռհռաց:

— Նոր բան ասա, աղա Վոսկա՞ն, եղ յես դիտեմ, նոր բան ասա:

— Դե՛, վոր գիտես, են ել իմացի, վոր պրիստավ կա, իշխանություն կա, նրանք վոր մեր գեղի մոտով անցնում են, ուրիշ տեղ ել վոր գնալիս լինեն, ճանապարհները ծոռում, ինձ մոտ են դալիս: Նրանց ճիանքը սովոր են, դուզ իմ դուանն են կանդ առում և որերով զոնաղ մնում... Եղ մեր խեղճ ու կրակ գյուղացուն մի մոլորեցնե՛ր, թո՛ղ իրենք իրենց յուղում տապակվեն: Լսել եմ, լսել ենք քո ոյլինների մասին, զգույշ կա՛յ... Բարաման չեյիր թողնում նշանակված զնով տան, ինչ վոր գիշերներով հավաքվում եք, փըս-փըսում: Տե՛ս, վոր եղ փոփոցը գլխներիդ փորձանք չդառնա: Մտիկ հա՛, ես գեղից ենպես կթռչես, վոր յեկած ճամբեդ կմոլոր-

պես : Խելոք կաց , զավողի հնահնցն ել ես մեջ խառնել : Նոյեմն ել տունդ ես տարել , լսել եմ ... վոչի՞նչ , լավ ապրանք ե ... անուշ թիքա յե , բայց աևս , վոր բողարգումք չմնա . . . Մեր դեղն եղաղեա անամոթ , անբարոյական բաներ սիրողը չի , ինչպես ծովը լել չի պահէ իրա ջրերում , ենալես ել մեր գեղը՝ ափ կշարուի ուռան լեշմեշ . . .

— Աղա Վոսկան , եղ պառավին իր հարսի ու թռռների հետ իմ տանն ապաստան եմ տվել , վորսիհետեւ զու նրանց բաց յերկընքի տակ եյիր թողել : Մարդն ուսարաթյան մեջ ընկալ ու հիմքի եղ կինն իր հալաւ քրախեքով և պահում իրա վորբերին : Զուր շառեր են . . . հանցանք և անմեղ մարդու վրա խոսելը : Քեզ չի սարում , աղա՝ Վոսկան . բաժրասանքը կնկա զործ ե , և նրա վրա հայուժ եմ ինչպես քրոջս պես :

— Էա՛վ , լա՛վ , դիտեմ , հա՛-հա՛-հա՛ . . . քրո՛ջ պես . . . Մեկ ել եմ ասում՝ խելոք կաց :

— Դե՞ , յես ի՞նչ եմ ասում վոր . . . Դուք հարուստ , յես աղքատ , իշխանավորներն ել չո բարեկամները : Իշխաններն ու հարուստներդ միացել եք , վոր ձեր դործները գրասնք : Չքավոր աշխատավորներն ել պետք ե միանան , վոր ույժ լինեն , թե չեմ մեկ նրանց վոչնչացնելն ի՞նչ ե վոր — վոնց վոր յեղանգույդ մի լու ճզմես : Մնաք բարո՛վ , զուր եք նեղությունն քաշել , ինձ խուտումներով չեք խարիլ , վոչ ել ձեր սպաննալիքներից եմ վախենում : Ի՞նչ եմ արել , վոր վախենամ , վախենալու բան չունեմ : Զուր եք աշխատում , ինձնից բան չեք կարող դուքս քաշել . . . Առանց ճեղ թե կարողացա , կանեմ , թե չե՞ ինձ հետ միասին դերեղման կտանեմ :

— Դե կորի՛ , դլիմերիցս ուադ յեղիր : Մենք քեզ մարդու տեղ դրինք , լեզուդ շատ յերկարացրիր , ա՛յ դյաղլա : Ասինք՝ իմանանք ի՞նչ ե փչել խելքին , մի քիչ ծիծաղենք , ուրախանանք , սա ել կարծեց , թե հավատացինք իրա ցնդարանություններին . . . Գնա՛ , գնա , գեղի համար Սողոմոն դարցիր , զուր հանիր : Դրուստ և ասած՝ «կատովին ասին . . . » հը , կրուկդ դեսը . . .

Ոհանը մի բովե մնաց տեղում , ուղեց մի բան տոի , բայց արհամարական ժպիտը ծուց նրա շրթունքի ծայրերն ու լուռ դուրս դնաց :

Արդեն դարպասի մոտ եր և ձեռը տարավ , վոր դուռը բանա , յերբ լնդլնդալով հետեից հասավ զզիրը :

— Ազա՛, շա՛շ, տո՛ յես քո խելքին ազ անեմ, տո՛, ի՞նչ ես
բազգիդ քացի տալիս։ Բա մարդ ել եղքան ախմախ կլինի։ 1000
ժամեթ են տալիս, վուով վոր մի քիչ հուալ տաս՝ յերկու յե-
կան ... Դու քոնը սուացիր, մեացածը քեզ ի՞նչ։ Գյուղացիներն
իրենք զիսեն։ Քեզ ի՞նչ, զուով Հո չեն խլելու, դու քո բաժինը
սուացիր ու զրադ քաշվիր, պրօճավ գնաց, բոլորի հերեն ել անիծած։
Մեկ ել, թե սրանք մի բան չանեն, եղ տկլորներն են ջուր հանե-
լու ... Բա սկի չես մտածե՞լ, վոր այշքան հող մշակելու հու-
մար աշխատով ձեռքիր են պետք, դեմ, և իրենք չե՞ն դնար։
աշխատոն, չե՞ն ...

— Գդիր, յես կարծում եյի մենակ վոտդ և կարմ, բանից
դուրս և զուլիս խելքը ել և կարծ։ Յես լավ եմ հասկանում
դրանց միտքը. զեղացնե հողին հանեն, արյունը ծծեն ու մի բան ել
թուրափայի զցեն առաջները, վոր քաղցած չսատիեն։ Քանի յես
ևս զերպումն եմ, եղ չեն տեսնի, յես չեմ թոպնի, վոր զյուղացուն
եղ հողերից դրկեն ... Եղ հողերը նրանց կյանք տովողն են,
նրանց հարազատ մերը։

— Պահ, յես քո խելքին ինչ առեմ ... Տո, դու քո վոտդ
սուացիր, ինչ գործ ունես գեղի հետ։

— Դգիր ես զառնէլ, նրանց ջրերում ես լոկ տալիս։ Եղ ջրե-
րամ յերեկավ լոզ առաջ չես կարող, մեկ ել անսար, թե իրանց
կամքով չզնացիր, մոթիդ տվին ուղարւոս շպրտեցին ... Դու քու
նմանների մոտ դնա; Քունոնքը նրանք են, եղ չքայլոր ու տկլոր-
նեցը, թե չե պրանցից խեր չկտ, սրանք իրանց համար, մենք ել
մեղ համար։ Սոսաշ յես ել կարծում եյի, թե մարդը, մարդ ե,
բոլորին ել ձեռքիցդ յեկած լավությունը պետք ե անես, բայց
ենտեղ, դրսերում, բանվորների մոտ յեղածս ժամանակ համ-
կացըին, վոր ամեն մարդ-մարդ է իրա համար, իր նմանների
համար ... Միշտ քո նմանների հետ յեղիր, վոր չկարողանան
բուրգդ գզել ... Դու քեզ գեղի իշխանավոր ես կարծում ...
դգիր ես, բայց իշխանները քեզ իրանց շունն են համարում և
չան պես պահում են իրանց գուանը, վոր հաշաս, սրա-նրա վրա
են քըս տալիս, դու յել սարսաղի պես սրա նրա վոտն են կծում ...
Խելքի արի՛, բալամ, մի որ քացով կտան, սանդուխների ցած
կգլորեն ... Գնա քեզ պես տկլորների մոտ, նրանց ու քու շո-
ւերը մեկ են ... խելքի արի՛:

Վարպետ Ռհանը, մերժելով հարուստների առաջարկը, սկզբայի առաջ կպայլ գործիք: Ակսեց համոզել միջակ ու չքափոր գյուղացիներին, վոր իրենք, առանց հարուստների յև, կարող են ձևունարքել աշխատանքներին:

Գյուղին իրար եր անցել:

Արը մինչև իրիկուն հայաբված յեկեղեցու դաշիթում, շինարու տակ, աղբյուրի դիմին բարձրածայյ վիճում եյին, կըուվում: Վամանք կարծում եյին, թէ առանց հարուստների յան չի դուրս գա, զուր աշխատանք կլինի ու զուր տեղն ել պարագի տակ կընկնեն, առանց են ել աղքատության ձեռքից չզիտեն ո՞ւր կըրչեն:

Վոչ մի հարուստ առանց տոկոսի. Նրանց վող չի տա, իսկ տոկոսով վող վերցնել՝ նշանակում և ամրող գյուղավ սարուկ դառնալ հարուստներին:

Վամանք ել այնքան լավատես եյին, վոր յենթաղբում եյին, թէ մի այնպիսի մեծ նպատակի համար կդունի հարուստների մեջ մեկը, վորն առանց տոկոսի յել վող կտա:

Շատերն ել չեյին հավատում և հիմարություն եյին համարում բնկնել, այդ ցնդվածի խելքին:

Ռհանը վախենալով, վոր հարուստների ականջը կընկնի, շատ պինդ եր պահում, վոչ վոքի չեր վատահում յուր գաղտնիքը:

Գյուղում յերեք հոգի միայն ծանոթ եյին նրա ծրագրին՝ վոստաար Մուրադը, Հարումենց Յեղիան և Նոյեմը: Նրանք ել մի կողմից եյին, համոզում գյուղացիներին և որորի վրա ամելանում եյին նրանց կողմնակիցները:

Արդեն ուշ գիշեր եր:

Գյուղը քնած եր: Մենակ Ռհանի վոքրիկ սենյակում լույս եր վասվում: Սեղանի շուրջը նստած եյին Մուրադը, Յեղիան և Փալանդուրենց Հաղոն: Ռհանն անց ու գարձ եր անում սենյակում և վողեվորված պատմում, թէ ինչպես աստիճան—աստիճան բարձրացող ավաղանները կլցվեն և այդպիսավ կստացվի իրար վրա բարձրացող լճակների մի շարան ... Իսկ ծծած ջրերն աղբյուրներ դարձած, կրկն դուրս կդան հօպափ վրա ...

— Իսկ ի՞նչ ես կարծում, մենք մեր ուժերով կարող կլնինք՝ գործի անցնել, — թերապիահասությամբ հարցրեց Յեղիան:

— Կանենք, —կանչեց Ահանը, —ամբողջ գյուղը կդա մեր հեռավից :

Կա՞յ, ամբողջ գյուղը չի դա, դա յել, բան չի դուրս դա, առանց փողի մեղ ո՞վ ցեմենտ, կիր կտա : Ասենք, զեղացիք ձրի յեկան աշխատելու, բայց հարցը դրանով չի վերջանա, առանց այսթական միջոցների գյուղացուն զուր իրա զործից հհանենք, բայց մեր զործն առաջ չի զնա ... Կառավարությունը մատը-մատի չի խփի, վարովհեան մերը չի, հարուստներն ողներու տեղ կաշխատեն վնասել, վարովհեան մեր թշնամին են : Վոր իմահան յան և զուրս դալու, խկույն կղբզավի նրանց դայլի ախորժակը և կուպենան իրենք մենակ աներ զատնան ... Հո զիտե՞ս ...

Ահանը Մուրաղի ասածի վրա մույրից ու բան չառաց :

— Իմ հույսը քաղաքի ժողովի վրա յէ : Եղնանք, կհավա-քենք, կհամոզնենք մեր ենանդի համագյուղացիքին թե դրանից մի բան զուրս յեկամ՝ լավ, թե չե՞ մենք ել, Ահա՞ն, քեզ հետ ժողովորել ենք ու յերեխի պես հեշտ-հեշտ շինում ենք ; Քան- զում ենք ...

Նոյնեմբ մյուս սեյակում պառկել եր, բայց չեր կարողանում յեկել . լուսմ եր նրանց խոսակցությունը և մտածում՝ ի՞նչ բավ կլինի, թե իրավործի Ահանի ծրադիրը :

Նրանք ցրվեցին, վորոշելով յիրկու հոգի ուզարկել քաղաք :

Գյուղի մեծերը լսելով, վոր քաղաք են ուզում դնալ, գիտե- ցին քահանայի ողնությանը, վոր համոզի՝ քաղաք չզնան : Ինչ- րան հարկանոր լինի՝ իրենք կտան, ինչո՞ւ են զուր տեղը ծախսի տակ ընկնում . մեկ ե, ենանդից ելի իրենց կարծիքն են հարցնե- լու : Հո զիտ չե՞ն, վոր վերցնեն հազարներ տան, թե՝ տարե՞ք, թափեք շուրջ, վործ արեք ... Ամերի լավ ե, տեղիս ունենալորների հետ քանակցնեն պայմանների մասին և վորոշ յեղբակացության դան : Գյուղացիք բանվոր ձեռք կտան, հարուստներ՝ վող, մերջն ել՝ ով ինչքան տվել, ինքան ել բաժին կտանա ... Հաշվի բան չի՞ , շատ ավողը — շատ կտանա, քիչ տվողը — քիչ :

Վարպետ Ահանը հասկացակ նրանց խորամանկությունը, տեսավ, վոր դա մի վորովայթ ե, վոր նպատակ ունի ծուղակի մեջ ցցել իրենց :

Բանվորն ինչքան ել կաշոց դուրս դա, որական 50 կոպեկից ավելի աշխատավարձ չի ստանալու : Բարդ, բան թողած պետք և ջրանցքի վրա աշխատի, դրանով ասլրել չի կարողանալու : Դե՛,

են ժամանակ նրանք ել ողնության ձեռք կմեկնեն բարեգործության համար, մուրհամներով փող կտան և այլպիսով իրենց ձեռքը կցցն առաջայում ստանալիք հողարածիններն ու ելի փառութենք իրենք կդանան հողի տերերը:

Վարպետ Ռհանը և Մուրազը հասկացրին դժուզացիներին դրանց խորամանկությունն ու նրանց այլ ծրադիրն ել ջուրն ընկալ:

Մակիչն աղա Վասկանի հրամանով ամեն տեղ տարածում եղ, թե Մուշեղի կին Նոյեմը վարպետ Ռհանի հետ զավանի կապեր ունի, անրարոյական և ... քարիոծ պետք և անել այդ լրբերին, այլ կտապը կտրած, անամոթ Նոյեմին, վոր մարզու մենանելու մետարին ել սուրբ չպահածոծ, որու—նրան դիրէն ե ընկնում ... Եղ բողին պետք և զուրու անել վեղից՝ որինակ ուրիշներին:

— Վո՞ւյ, քոռահամ' :

— Աղջի՛, յանի զբա՞ւս և :

— Հա՛, հա՛, բոյիդ մենանեմ, տեսնողներն են տառամ ... Եղ լաշտուը վոչ ամոթ ունի, վոչ հայտ ... Որը ցերեկով, ամենքի ուշը առաջ դնացել, մտել ե նալրանդի տունը :

— Աղջի՛, բա ի՞նչ աներ զեաք տարածը, վաղոցում մնա՞ր :

— Սուս բան և ... Նամուս ունեցող կինը բաց յիշենքի տակ կմնա ու չի զնա անկնիկ, անզանի մարդու տունը :

— Ե՛հ, տոռում եք ելի :

— Զե՛, չե՛, աղջի՛, տեսնող ե յեղել: Գիշերները մեկը մորն է քննեցնում, մեկը՝ սկսերովն ու սաղ գիշերը լրբություն Են տնում ...

— Մարզու մենանելը ճի՞շտ ե :

— Ասում են :

— Ա՛յ գիղի, Մուշեղ, թե մի աչքու բաց կանե՞ս :

— Սաղ-սաղ դիլիմ-դիլիմ կաներ :

Նոյեմը մարզու մահվան լուրը վոր լսեց, զունատվեց գաղի սիս ու սառած՝ կպավ պատին. վոչ խոսում եր, վոչ լալիս, վոչ շարժվում — կասես սկի կենդանի մարդ չեր, տիկնիկ եր, վոր գեմ եյին տվել պատին:

Մուշեղի մայրն ենքան դիմին ու ծնկան տվեց, վոր աչքերին արյուն կոխեցին: Ռհանի մայրն ել մոլորվածի պես սրան եր մոտենում՝ մի բան ասում, նրան եր միթիթարում: — Յերեխեց

և պոնդեած կուչ ելին յհկել մի անկյունում : Հարեան կանայք հավաքվել ու քչփշում ելին :

— Աստված լա՞զ պատմեց :

— Հողեմ գլուխը : Մի տե՛ս, մի՞ տե՛ս լիրը անամոթին . ու լում ևմ մոռմեամ, կում անեմ՝ թքեմ եղ անամոթի յերեսին ... ևաց ել չել լինում ... Բ՞զ դիտի՝ մտքումը ծիծաղում է :

— Ի՞նչ լաց լինի : Ազատմեց, պրծավ ... հիմա քեֆի ուղարձու կանի ...

— Աղջի՛, չե՛ ... մի տես ... կոկծի ցամից մնջվել է, արտասունքն ել չորացել է ... Խեղճ է, բալքի սուս բաներ է, բամբասանք ...

— Բէ, խեղճ ցամի զա : Ասում էն՝ առաջ Մակիչի հետ է յեղել, աղս վասկանը վոր խմացել է, դուրս և արել զործարանից :

— Կհամատամ, աղջի՛, կհամատամ . ինչ վոր առեն՝ կհամատամ . կնկա յերեսի փարզեն վոր պատումեց, դուրս ընկավառ ու պրծավ, ել պահել չի լինի ...

Տերաերը տիրացուի ոզնությամբ յեկավ, խեթ-խեթ նայեց նոյնմին, վոր քարացած, աչքերը մի կետի, անշարժ մնացել եր թոնքատան ու ոյունին կպած :

Մոտեցավ Մուշեղի մորը . մխիթարական մի քանի խոսք տոելոց հետո, շուրջառը տիրացուն դցեց վրան . խոռքերի վերջին վանկերը քիթ տակ մրմնջալով, հոգեհանդիստ կատարեց ու դամ արավ ավետարանը Մուշեղի մորը : Ուանի մայրը բրթեց նոյնմին, վոր մատենա ավետարանը համբուրի, Նոյնմը մեքենայուր, ասանց դիտակցելու, մոտեցավ քահանային և խոնորհուց ավետարանի վրա : Տերաերը հետ քաշեց ավետարանը, մի մայրելյան զարշանքով նայեց Նոյնմին, ավետարանով հարվածեց նրա կրծքին, զրվանքով մի քայլ հետ զնաց ու պատրույզը թացացած մոմի պես՝ ըթչըթաց .

— Հե՛տ, նզամի՛ց արժատ : . . . Դու արժանի չես մերձենալու ու ավետարանին : . . .

Նոյնմը թույլ ճշոց, ընկավ ծնկների վրա և թաղեց գլուխը ձեռների մեջ :

Բարկությունից թւ հուղմունքից դողացող քահանայի դողմունք քայլերն ուղղվեցին դեպի զուռը : Կրկին հետ զառալ,

ատելությամբ ու զայրութիւնվ լի մի հայացք նետեց դեսպին ըհկած Նոյեմի վրա ու գուրս գէաց :

— Մեղա՛ քեզ, ասավա՛ծ...

— Սրանից հետո ի՞նչտես ես նայելու մարգիանց աչքերին ։ ա՛յ դետինը մտնես, դետինը ։

Քահանայի հետեւ հետացան կանուք՝ բարձրաձայն հրու հրուալով ու բամբառելով ։

Մի քանի որ Նոյեմը պառկած եր անկողնում ։ վոչ մի տեղու չեր ցավում, բայց յերբ փորձում եր վեր կենալ, գլուխը պարագում եր, աչքերը սկանում : Եշմածի պիս շուրջն եր նայում և չեր հասկանում, ի՞նչ և պատահել : Արցունքներ չլային, մի ճանր բան ընկած եր կրծքին — վոչ խսում եր, վոչ ևլ կարողնում եր լաց լինել :

Յերբորդ որը նա վեր կացավ տեղից, յերբ մեծ աղջկեր դրկեց նրան, համբուրեց և մոր վրա հառած աչքերից արցունքները գլուխիցին մեծ-մեծ կաթիներով : Նոյեմի սիրու ճնշեց կրծքի տակ, արցունքներն ել չհամառեցին . նա աղջկանը սեղմեց կրծքին և սիրու վիրից ։

Հանկարծ նա հիշեց բոլորը — ամուսնու մահը, տեր հոր ձալուու, ատելությամբ լի աչքերը : Հիշեց, վոր յերբ մոտեցայ ավետարանը համբուրելու, այդ ալեզարդ ծերունին ավետարանի կողով խփեց կրծքին, և նա վայր ընկալ : Նա չեր հասկանում, թե ի՞նչ և նշանակում այդ բոլորը : Ի՞նչու փոխանակ խղճալու, միիթարելու, ատելությամբ են նայում իր վրա, ի՞նչ ելին նշանակում այն շշուկները : Ի՞նչ և արել ինքը, վոր արհամարհանքով, ատելությամբ են նայում իրեն, խուսափում են իրանից, ինչպես ժանտախտից : Մենակ Ռհանի մայրն եր, վոր քաղցր աչքավ եր նայում և սիրա եր տալիս, աշխատում եր միիթարել, իսկ Ռհանը հեռայից կարեկից աչքերով նայում եր ու վոչինչ չեր առում ։

Հանկարծ նա իրեն այնպես մենակ գլաց, լքված ու արհամարհամբ, այնպես զուր թվաց կյանքը, վորտեղից վորտեղ հիշեց յուր ձագուկին, վորի փոքրիկ, ուսած դիմակն ընմած եր լճակի ափին և նրա մոտ այն ձողը, վորից գեռ ջուր եր կաթում . այդ ձողով դեպի ափ քաշեցին մանկան դիմակը ։

Նա ցնցեց գլուխը, փակեց աչքերը և ատամների տակ խա-

ծեց վարի շուրթը, վոր չճշա մոր խեղդի ձայնը ... Յերեկոյան դեմ նու վախեցած նայեց շուրթը և վոչ-վոքի չհանդիպելով, նյարդացին փութիռառությամբ դես ու դեն ընկալ և սնդումի վրա դանելով շալը, զլիսին գցեց ու դողի նման դուրս յեկավ տնից ...

Նու դընթե վաղում եր: Դուրս յեկավ գյուղի դարպասից և այդիների նեղ ճանապարհով դեռի վեր դնաց:

Նու հասավ այն ավաղանին, ուր մի քանի ամիս առաջ խեղդվել եր յուր մանկեկը և տուանց մտածելու՝ դլխիվայր իրեն ջուրը նետեց:

Վարպետ Ռհանը տեսնում եր նրա վիշտը, ապրումները, հետեւմ եր նրա ամեն մի քայլին. Հասավ այն բոպելին, յերբ Նոյեմբը յերկրորդ անգամ ջրի յերեսը զուրս յեկալ: Մի կողմ զցեց վերնազդեսար և իրան ջուրը նետեց: Ձեռքի մի քանի ուժեղ շարժումով նու լոզ տվեց գեղի ափը, մի ճեռքով ամուր բուռն ջուրը նոյեմին ...

Ազա Վասկանը և մյուս Հարտասաները, յերբ խմացան, վոր վարպետ Ռհանի ծրագիրը քաղաքում հավանաւթյուն և դաել, տակն ու գլուխ յմղան: Իրենց մոտ կանչեցին գյուղի մի քանի աղղեցիկ մարդկանց, համողեցին, վոր յեթե Ռհանի ծրագիրը ճիշաւ ել լինի; միենուին և, բան-դուրս չի գա. իրանք յեթե իրենց վողջ ունեցածն ել զնեն, ելի տակեցը չեն կարող դուրս դալ, —այդ հողերը դատապարտված են Հայիստենական ամայսոթյան: Իրենց պատկերն ու հայրերը շատ են գլուխ կռտրել, շատ դիտան մարդկանց դմեներ են բաղիսել, բայց բան դուրս չի յեկել, զուր տեղը պարտօն տակ պետք է ընկնեն: Մի փոքրիկ հույս կա, վոր մի քանի հեկտար տեղ ցածի դետի մուգերում նասոսներով ջրվի, բոստան-բան ցանկի, և իրանք մտադիր են մի քիչ փող զնել, նասոսներ բերել տալ և յեթե գյուղն ուղենա այդ անպետք հոգերը ծախի, իրենք շատ չեն կարող, բայց մի 2000—2500 մանեթ կտան: Թե ի՞նչ դուրս կդա, իրենք ել չզիտեն, բայց փորձ ե, ուղում են անել: Բան դուրս յեկավ—լավ, չե—կորած տեղ չի, և նեղ որերին թող գեղն ողամի ... դառն փողի պես բան և, աշխարհի ակդրից անաբնտք ընկած ե ...

Փողի ձայնը վոր լսեցին, ոյուղացիք իրանց բոլորովին կորցրին, շիտթվեցին. ի՞նչպես թե՝ եղ անպետք հողի համար եղ-

քան վո՞զ: Դարերով ընկած ե, մեկը մի դրոշի ոպուտ չի տեսել գրանցից, հիմա այդ մեռած հոգերի համար 2500 մանեթ են ու ուղարկում . . .

Այսքան դայիմուղացուցիչ եր առաջարկը, վոր նրանք վեր թուան տեղերից, վոր տանեն այդ ուրախ լուրը:

Գյուղացիների զնարուց հետո, ազա վոսկանի մեսները իրար շփելով, հըբհըռալով ծիծագում եր, մյուս հարուստներն եւ ձայնակցում եյին նրան:

Լուրը կայծակի արագությամբ տարածվեց անից-առևն: Բարբեր զուրս թափանցիցն անելից և զիմեցին աղբյուրի հրապարակը՝ հավատիանալու լուրի ճշմարտության մտնին:

Ուժ մտքից կանցներ, վոր մի այլպիսի բան կարող և իրականություն լինել:

Սկսվեց իրարանցում, ազմուկ, հարայշեցոց:

Շատերը պահանջում եյին անմիջապես համաձայնիկ, քանի չեն դղասցել, վոմանք ել պահանջում եյին կրկնակին, յեսակին ուզել, առարկելով,—թե՝ զիսր տոնում են, առել և մի բան դիտնեն, թե չեն նրանք հեշտու հանդիստ 2500 մանեթ դեն չեն դցել. և քանի վոր այլպես ե, պետք և սղութել հանգամանքից ու ակելի դժել:

Վարդես նշանի քլիմն կարծես մահակով հարվածիցին: Առաջ շշմեց, լով չհամշացավ նրանց միաբը, բայց կամաց-կամաց զլիսի ընմագ, վոր նրանք բանել են զյուղացու թույլ տառուը և իրաւուծել են ուզում իրենց սոսր ծրադրերը:

Նա դուրս յեկար մանից և ուզել Մուրադի մաս դասց: Եկը կուսով յեկան հրապարակ, ընկան ժողովրդի մեջ և սկսեցին բացարել նրանց միաբը, համոզել, վոր չանեն այդ խնիմությունը, վոր այդ հոգերը վոսկի յեն դառնալու, վոր իրենց դավակերեցի հացը շուն ու գելի առաջ չդցեն, վոր հարուստները յեմեն համոզված չլինեն, վոր մեկին հարյուր են աշխատելու, հեշտ ու հանդիսա դրոշ ել չեն տա, վոր յեթե այլպիս բան անեն, շատ կզշան, բայց ուշ կլինի . . .

Բայց նրան լսող չկար:

Կիրառի որը, պատարազից հետո քահանան գովեց այն հարուստներին, վոր որդ նեղ որերին ոգնության հասան զյուղին ու ձեռք մեկնեցին ձղմված զյուղացուն:

Ահանը մենակ մնաց :

Նստած յուր տան առաջ, թթենու առկ, խորասուզված ժաքերի մէջ, նա աշխատում էր մի յելք դանել, բայց հնարք չկար այդ աղեռի տուաշն առներու: Անկարողությունից կատազության եր հասել, զայրութիւց ինքն-իրեն ուտում էր, բայց անկարող եր կանգնեցնել արդ անմիտներին, վոր իրենց վոտով զնում, ընկնում են տրդ զիշտափիչների վոստայնը, վորից ել անկարազ էլլինեն զուրս զալ, մինչ աշնաքոմ կչորտնան՝ սարդի վոտույնն ընկած ճանճի պես:

Նա մտածում էր — թողնել ամեն բան և կորչել այդ անակը զյուղից, ուր տղիսության մէջ խարիսխում և մարդկային կերպարանքով վոչխարի մի հոռ...

Բայց հանկարծ մաքերը կանդ տուան, մի բողեք կարծես զուշաբեց մտածերոց, աչքերի տուաջ կանգնեցն Նոյիմը՝ թախալիի, զունաս, աղերսազին աշքերը հաստծ յուր վրա... Ահա և ժայռը — յերկու տակ յաղած, մի վատը զերկղմանում ... Իսկ յեթ նրանց ել հետը տանեի ... ո՞ւր ... ինչո՞ւ...

Հանկարծ նա զգաց, վոր գլխավէրել մեկը կանգնած և . հետ նայեց՝ Մուրազն էր, վոր ձին կատկել մոտակա ծառից, մոտեցել ու կանգնել եր նրա մոտ:

— Մուրազ զ...

— Յես հմ ... Զուր ես դրուի կոտրում, մեր ջուրը որանց առավով չի դնա ... Յնակը ենակը, ուր մենք նրանց, նրանց ել մեջ կհառկանանք ... Արհետուավոր մարդ ես, ո՞ւր զնուս, վոր դրուի չզահես. յես ել չեմ մնա, վճռել եմ, զնում հմես խարարից...

— Ո՞ւր...

— Թիֆլուդ. Եկ բան զուրս չեկավ, կանցնեմ Բաղու: Զուր է մեր եսակեդ յալը, եստեղ մենք պետք չենք: Նամակ հմ սաւցել, զբում ե, վոր սկսվել ե ... ենակը կոմի յին պատրաստվում, մենք, եստեղ չուրսն ենք զատել, վոչխարի սուրու յինք ուղարմ խելքի բերել ...

Ահանը վեր ցատկեց տեղից, բոնեց Մուրազի ձեռքը, մոտ

քաշեց, մի քանի վայրկյան լուս նայեց ուղիղ նրա աչքերին, կարծես զարժացած, թե նո ինչպես է յսի իրա մտքերը, — չեզոր ինքը ձայն չի հանել...

— Նստի՞ր, նստի՞ր ... Զարժացք բան ե, չչիցաց նո լուրազին նառեցնելով թթենու տակ, թախտի վրա:

— Ի՞նչն ե զարժացք:

— Այ, եղ ... եղ ... յիս ել եղ եյի մտածում, վոր գլուխուառնեմ, կորչեմ եսանդից, բայց, Մուրազ, ախար ... յիս մինչեւ չիմու մարզու բան չեմ տաել, խորն եյի թաղել կոծքիս տակ, բայց ել չեմ կարսող, ուհաք ե տաեմ, ել չեմ կարաղ որահել...

— Հը՞ , սասմ , ի՞նչ կա:

— Ախար ... նոյնիմը ... են որից, ինչ ...

— Սիրում ես :

— Զգիտեմ, հա՛ ասեմ, թի՛ չե ... Զգիտեմ, սերը եղակու և լինում, թե մի ուրիշ տեսակ ... Բայց մի որ վոր չեմ տեսնում նրան, որս որ չի:

— Հա՛ , Ոհանն, սիրում ես :

— Բա ինչպես դնամ ... Հետո—մերս, ախար, մի վսար գերզմանաւմն ե :

Յերկուսն ել մի բազե լոկցին:

— Իրան բան տաե՞լ ես, — ընդհանեց Մուրազը:

— Ի՞նչ ես տազմ, — վախեցած կանչեց Ոհաննը, — Հո՞ զի՞ չե՞ս :

— Բա ինչպե՞ս :

— Յես ինչ զիտեմ: Յանի մոտ եմ ճանաչում, Մուրազ, ենքան ավելի յեմ սիրում, հարզում ... Դու չզիտեա, ինչ սիրուանի: Եղակոս մի նայի, թի զեկացի ազջիկ ե, սուս ու մուս: Դործի գիր, սարեր կքանդի: Են որդանից, վոր ջրից, հանցի ու յերկու—յերեք որ պառկելուց հետո վեր կացավ, ամոթից աչքերիս չի նայում, բայց զզում եմ, վոր նո յիլ ինձ ե սիրում... տաեմ կյանքը փրկել եմ, հիմա ելլի հետ եմ ուզում, մեռիր, անմրսունչ կերթա ջուրն ել կընկնի, կրակն ել ...

— Ել իհի յես սպասում, ուղիր ելլի:

— Յանի հա՞ ... յանի դիտես, լա՛վ ես տոռում, տանեմ—տանեմ հետա:

— Եղ յերկու պառավներն ել իրենց կոպահեն, մի քիչ վոր զրկես, ործավ-դնաց:

— Լավ ես առում, Մուրադ, ես մեր տեղը չի, զնանք ենակի, փրանեց զիաակից մարդիկ կան, վորտեղ մարդիկ իրանց շատն ու բարին հասկանում են, բարեկամը թշնամուց ջոկում, թէ չե՛ս սրանց դեռ կույր են ու անողնական, աչքիրը չբացված կատավի ձաղի պես ... նստեղ մենք ել կամաց-կամաց դրանց որք կընկնենք ...

Գղիր Կարապետը վաղ առում ատից հասու գաղանակը քարերին, ան երի դռներին խփելով, մի փողոցից մյուսն եր անցնում ու բարձրածայն կանչում, վոր հայտաբին ուսումնարան՝ թուղթը ստորագրելու:

Քիչ անց՝ յեկեղեցու զանգերի ճայնի վրա ժողովաւրդը դուրս թափվեց աներից ու դիմեց յեկեղեցու զաղիթը, ուր զտնվում եր վորքը և, նեղ լւսումուներով դյուսի մի հարկանի ծխական դպրոցը:

Նախքան վերջնականապես հոգերի տեր զանալը, Տարուատները մի անդամ ել փորձեցին տերութիւն միջոցով Ահանին իրենց կողմը քաշել, բայց բան դուրս չեկալ:

Այն որը, յերբ գյուղը ստուադրեց զնման թուղթը և տառաւտերի ստորագրությամբ ու կնիքով վավերացվեց, վարպետ Ահանը և Մուրադը վերջնականապես վարչչեցին հեռանալ գյուղեց:

Ահանի մայրը յիրը լսեց վորդու մատզրության մասին, քիչ մնաց խելքը թացներ:

Նա են յերբանից և միաբը դրեւ, վոր շմոզնի ես տարի անգեկենա, անպատճառ պատկի աղին: Մի քանի անգամ խոսք երացել, Ահանն ել ականջի հետեն և զցել ... Հիմա, թէ՝ զնում եօ: Գնում ե ... Նա հիշեց այն որերը, յիրը Ահանն ստարության մեջ եր. ինչքա՞ն ե առանձին, ինչքա՞ն արցունք և թափել: Ճիշտ ե, վոչ նամակն եր ուշացնում, վոչ փողը, բայց մինումար վորդու կարստից պոռչները ճաքում եյին: Ամենն անգամ նամակը վոր մի քանի որ ուշանում եր, ել պահել չեր լինում ... Լավ բան մարդ. Հո չի՞ մասածի: Սարսափելի պատկերներ եյին յերեւակում աչքին. քուն ու զաղար կարած, կատովի պես մոնզաւով սաղ որը դեռ ու դեռ եր ընկնում, վոչ կերածը գիտեր, վոչ արա-

ծը : Հիմա ելի զնում ե , ես խառը ժամանակները ... ա՞յ , ասում
են , կոնք ե լինելու :

Նրա անկողնի մոտ չստած , ձեռքը ձեռքում բանահանքանուացնում եր մորը .

— Շատ չի քաշի , նանի' , զնում , տեղափոխվեմ թե չե , քեզ
հստեղ չեմ պահի :

— Բա , բայս ջա՞ն , առանց քեզ յես ի՞նչ անեմ , ի՞նչ հողը
տամ գլխիս : Մինչև զնում , մինչև տեղափոխվեմ — ամիսներ կքա-
շի . յես հստեղ մենակ , քան բայցի նմա՞ն ...

— Այս յես մենակ , նանի , նոյնմը կա , սկսեսուրը ...

— Ի՞նչ նոյնմ , ի՞նչ սկսեսուր . նրանք ել իրենց զարդն ու-
ցավին ունեն ... Նրանք ստար են ... նոյնմը լավ աղջիկ ե , հա-
րազատիս պիս սիրում եմ , բայց մի հարս ըերեցիր տուէ , թոռ
տեսնելի , խմանայի , վոր հորդ ոջախը միշտ վառ կժիա , մեռնե-
լուց ել հողիս խաղաղ կիչեցի :

Ոհանք ջա՞ն , արեիդ . մեռնեմ , չե չտանս , մինչեւ չզատկեմ ,
յես քեզ հստեղից թաղնողը չեմ :

— Դե , հը' , պասկիր :

— Հա՞ , —ուրախացած բացականչեց մայրը :

— Համարձա՞յն ես ... Բա , բայիդ մատապ , պառավ մորդ ի՞ի՞
չես ուրախացնում : Հա՞ մի տաս , ե՞ ... զի տաս' , ո՞ւմ ես ու-
զում , ո՞ւմ ես աչք գրել ...

Ոհանք մի քանի վայրկյան . կմկմաց ու բան չտասց :

— Ասա՛ , մի ամաչի :

— Նանի , նոյնմը լավ աղջիկ ե , չե՞ ...

— Նոյնմը ... նոյնմը ... — կարծիս հասկանալով վորդու-
միսքը , աչքերը նրա աչքերին , մի քոնի տեղամ կրկնեց՝ նոյն-
մը , նոյնմը , —ու բան չտասց :

— Ի՞նչ իսանս , նանի :

— Բա , վորդի , յերկու-յերկու . յեթիմների աեր ...

— Ի՞նչ կա , նանի' , Դանք ել մեղք են :

— Լավ ես ասում , նոյնմը լավ աղջիկ ե , խելոք , վոսկի սիրա-
տիր , մեռնակ ...

— Յես խոսեմ հետը , յեթե համաձայնի ...

— Յանի , հանաց չես անո՞ւմ ...

— Զե՛ , նանի :

— Դո՞ւ յես ուզում հետը խոսալ :

— Դու յել խոսաւ դու քս կողմից, յես՝ իմ :

Մայրը համոզվելով, վոր վորդին կատակ չի անում, գրեց նրա դլուխը, կողը կարմիր շապկի տակից բացված դոչին և ուրախության արցունքները կաթեցին Ահանի ձեռքի վրա :

Ահանը ժամանով, զդացված բոնեց մոր ձեռքն ու ջերմ, ջերմ համրուրեց : Մայրն աչքերը զեղի առաստաղը դարձրած բոռ մրմնաւմ եր :

Նոյնը յերբ իմացավ, վոր Ահանը մտադիր և դնալ ստարություն, թաղուն լաց յեղամի, ու մոռալ մութ դիշերի պիս պարուրեց հոգին :

Նա աշխատում եր կողմնակի հայացքներից թաղյնել, վոր վոչ վոք ոյինի ըլնինի, աշխատում եր ուրախ ցույց տալ, ծիծագում եր, բայց ծիծազը հնչում եր բոնապոսիկ, թափիծը կաթում եր աչքերից : Շրմունքները պինդ իրար սեղմած վախենում եր, վոր արցունքները յուր կամքի հակառակ կթափովին աչքերից և կմատնեն սրտինը, վորն այնպիս խնամքով ուզում և ծածկել : Ինչքան ուզում և չմտածել, զիխից հանել եթ միտքը, ամուսնուն և չկըսում, իեկղզված զավակին, և իլլի չի լինում : Անյակն սվելում, ջրի գնալ-զնալուն միշտ Ահանն և մտքումը : Ինչքան աշխատում եր չմտածել, չի լինում մեկ ել տեսնում և, վոր և լի նույն մրտքերն են դիմումը : Նա ինքն իրեն զողության մեջ բոնելով, զունատ այսիկը շառադրնում են և խոնարհում և աչքերը :

Ինքնասպանության անհաջող դեպքից հետո, նա կարծես ուրիշ մարդ եր դարձել, նա զդում եր յուր արածի համար ... ինչպէ՞ս, ինքն իրեն զրկել կյանքից, արեից ... մարդ և եղքան անմիտ կյինի ... Նա այնպես սիրեց կյանքը և մտածում եր անկողնից յելնելուց հետո, համարձակ նետվելով կյանքի մեջ՝ պայքարել, պոկել, գջել կյանքից որին ամենն, ինչից զրկված և յեղել :

Եերբ Ահանը ներս եր մտնում այն սենյակը, ուր նա յեր պառկած, ամոթից գլուխը թաղյնում եր վերմակի տակ և սիրութակարգ ընկած լորի պես թթպրում եր կրծքի տակ : Նրա մասին մտածելն իսկ հաճույք եր պատճառում և նա հպարտ եր, վոր նա փրկեց իրան մահվան ճանկերից ու ամբողջ կյանքը նրան եր

ոպարտական, յեթե հարկավոր լինի, ժպտալով կղուհին նրա համբեր :

Բայց յերբ վեր կացավ անկողնից, նա չկարողացավ իրականացնել յուր համարձակ լինելու վորոշումը. դեղիկուհու ամոթխածությունը հազթող զուրս յեկավ, նա ավելի սուզվեց ինքնիր մեջ և սկսեց ապրել ներքին, բոլորից ծածկման մի չքեզ սոսմանափորմ :

Նա գեռ ամաչում եր նայել մարդկանց աչքերին ուղիղ, իսկ Ոհանին հանդիպելուց՝ կախ եր զցում զլուխը, վոր բմատ դեմքիմաց ու շուալում եր հեռանալ, մի մեղավոր ժպիտ շրթունքներին :

Ոհանի մայրը և նոյեմի սկեսուրը քիթ-քթի աված մաժառում ելին : Նոյեմը ջրի յեր դնացել. Անյակում թեև մենակ ելին, բայց ձայները հազիվ ելին լավում .

— Դե՛, ի՞նչ անհնք, ջահել ե, մեղք և ... ասաված բախտավոր անի սիրաց լցվեց, ծոյնը զողաց ու դսղգոջուն ձոյնով շարունակեց .

— Ի՞մ անբախտ բալի հետ բախտավոր չեղափ և հ'հ, հալբախ ճակատին ևդ եր զբած և յու իմ մեղավոր բերանով եւ չկարողացավ շարունակել, վղձկաց, բերանի կապիչի առաջ չըթունքները ծոմավեցին, մի քանի վայրկյան ճիկ զործ դրեց վերջացնելու միտքը, խեղզող մարզու կոկորդից դուրս յիշող ձայների նման ձայներ զուրս յեկան կրծքից, աչքերը լայնացան ու լցվեցին արցունքներով ու եւ չկարողացավ զսպել, մզկտաց ու արցունքները հոսեցին աչքերից :

Նոյեմը ներս մտավ սափորն ուսին ու մնաց զոներում : Տեսնելով սկեսրոջը լաց լինելիս, նա մտածեց, թե յերեխ ելի վորդուն և հիշել ցած դրեց սափորն անկյունում, մոտեցավ յերկու սպառավներին, չողեց սկեսրոջ կողքին, բոնեց նրա ձեռքը. աչքերը ջրակաբեցին, թարթեց թարթիչները, և մի կաթիլ արցունք դողաց ու ընկավ այտի վրա, այսակդից ել գլորվեց ցած : Նա կուցավ և համրուրեց սկեսրոջ ձեռքը :

— Բախտավոր լինես, անբախտ հարս, — արցունքները կուրտալով, մի բոպե լուեց ու չկարողանալով յերկար զսպել իրան՝ լաց լինելով կանչեց. — վո՞րտեղ են են անբախտ բալեցան քունանա՛ նրանց նանին ... յեթիմ բալեցան ...

— Կանչչի՞մ :

— Կանչչի՞ր . . .

Հողի նոր տերերը յիռամեղով կպան դործի : Մարդիկ ուղարկեցին քաղաք, մասնագետներ բերին, բայց բան դուրս չեկավ . ահազին ծախուեր անելուց հետո, հուսահատված, դղջացին ծախսած փողերի համար ու ջրի հարցն ելի քննեց :

Դյուզն տրափի եր, վոր չըսեց վարդեա Ռհանին և այդ անպետք հողերը սաղացրեց . ծիծագում ելին հարուստների վրա ու բժծիծիծագում տառւմ .

— Թող տան՝ «Շահ»—Բուղազն բաղի վար :

Ռհանի մերն ու Նոյեմի սկեսուրը տանը չելին, ժամ ելին դնացել : Նոյեմն և ջրի յեր գնացել : Ռհանը փողոցի դռանը կանգնած սպասում եր Նոյեմին : Յերբ հեռվից տեսավ նրան, հուզմունքից սիրան այնպիս ամուր սկսել բարախնել, վոր ակտամ ձեռքը զետի սիրաը տարավ և ինքն իր վրա ժպտալով՝ շնչաց .

— Վա՛հ, սա ի՞նչ է, յերեխու հո չեմ . . . — Նա ներս մտավ բակը, հեռվից նայում եր, ինչպիս նոյեմը սափորն ուսին, տունց իր կողմը նայելու անցավ :

Թոնրատան ու զուռը ճռուալով բացվեց ու վակվեց : Ռհանը մի քանի վայրկյան տատանվեց ու զնաց : Նա ներս մտավ թօնրատանը : Նոյեմը սափորն իջեցրել եր, յերբ զռան ճռոցի վրա հետ հայեց ու զոնհերում տեսավ Ռհանին :

Մի բոպն յերկուսն ել կանդնած ելին դիմ-դիմաց և վոչ մեկը խոսք չեր զանում տեսեւ :

— Նոյեմ, վազը չե մյուս որը զնում եմ, — վերջապես ընդհատեց լուսիթյունն Ռհանը :

— Գիտեմ, — տիսուր պատասխանեց Նոյեմն՝ աչքերը ցած խոնարհելով : Կրկին տիրեց լուսիթյուն : Ռհանի դիմում մտքերը խոտնվել ելին ու չդիմեր ինչպես սկսեր :

— Գնում եմ, բայց ուշքս եսաել ե :

— Յերկա՞ր ես մնալու :

— Ուղում ես՝ սկի չզամ :

— ԶԵ՛, այդ չեմ տառւմ : — Նոյեմը կարմրեց և մի անդամից վճռելով՝ բարձրացրեց դլուխը, նայեց ուղիղ Ռհանի աչքերին,

ասաց հաղիով լսելիք, մի քիչ հուղմունքից դողացող ձայնով, ապա
քանի զնոր՝ ավելի համարձակ սկսեց :

— Ոհան յեղբայր ... զու գիտես, չե՛ ... զու գիտես, վոր
ևս աշխարհքում թե մի մարդ կտ, վորին հարդում, ողառվում
եմ ... սիրում եմ ամեն բանից արիելի, կյանքից եւ, եղ զու...
յես ... Բայց ... ախար ... թո՞ւ մի քիչ մնա ... զուրս կպա,
վոր ճիշտ ելին ասում են բամբասոսները, թե չժողի մի տարի ել
անցնի ... Գնա՞ւ, Ահան յեղբայր, զնա՞ւ. թե պետք ե, յես կհամ-
րերեմ, չկարծես, թե հեշտ եմ ասում, չե՛ բայց 100 տարի վոր
կյանք ունենամ, 100 տարին ել քիզ սպասելով, քո անունը տա-
լով կաղրեմ ... Մաքսուս ուրիշ տղամարդ չի անցնի ... Եւ
շներին զուր չհաջեցնենք ... թո՞ւ հլա մնա ...

— Նոյեմ, Նոյեմ ... թո՞ւ հատին, շունը հաջի, քարվանը
քոչի: Դու վոր համաձայն ես, զու վոր ինձ սիրում ես, մնացածը
մեկ ե, թե ով ինչ կասի:

— Թե հնարավոր լիներ, թողնեցիր՝ հենց այսոր և եթ կուա-
յի, ուր վոր տսես, չեյի մնա ես շուն ու դելերի աշխարհում,
առանց քեզ հստեղ ինչի՞ս և կյանքը...

— Մի զիամ, անդամակութեմ, յերկու ամիս ել չի քաշի, հա-
տեղ չեմ թողնի ձեղ. համատառ, վոր շատ չի քաշի, դուք ել
կպաք:

Ոհանը բանեց նրա ձեռքը, մոտ քաշեց, նայեց նրա աչքե-
րին ... Նոյեմը խոնարհեց դլուխիր՝ մեղավոր ժայիռը դեմքին:

— Դու իմն ես, Նոյեմ, քեզ վոչ վոքի չեմ տա ...

Ահանի ջլուտ բազուկների մեջ կուչ յեկայ Նոյեմը, յերջա-
նիկ ժամփար զեպքին և խոնարհեց գլուխը նրա կրծքին:

Ոհանը կուացավ, մի ձեռքով պահեց նրան դրկում, մյուսով
բարձրացրեց նրա դլուխին ու ինչպես ծարավից պալակած անա-
պատի համբուրդ՝ ըլթունքներով Հայից նրա շվթունքներին ցա-
վիցներու չափ ջերմ, յերկար համբույրով ...

Դրսից լսելց պատամիների քոշերի պայտերի ձայնը՝ քարերի
վրա: Վախեցած յեղնիկին նման Նոյեմը զուրս պրծավ և մասով
մութ անելյունը, ուր անկողիններն եյին կիսոված իրար վրա:
Ոհանն աշխատեղ պատամիներից աննկատելի դուրս գալ թոնք-
տնից ...

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԱՀԱՅԻ և ԱՎԱՐԱԿԻ դնալուց մի ամիս չեր անցել, պայթեց Հովհաննարհոյին պատերազմը :

Մի քանի տարվա պահեստի զինվորներն արդեն հավաքել, կույի գաշա եյին ուղարկվել :

Տաճկական ֆրոնտում ոռուսական զորքերն առաջ եյին շարժվում : Կարծ ժամանակում իրար հետեւից ընկան Երդերում, վասն ... Տաճիկները նահանջում եյին զեակի յերկրի խորքը :

Հայ կամավորական խմբերը ոռուսական կանոնավոր զորքի հետ զինակցել ու կովում եյին : Դաշնակցությունը վոգեռված մնցել եր զործի, կազմակերպում եր քաղաքները, դյուլերը :

Բոլոր Փիդայի խմբապետները — Հայտնի, թե անհայտ, հանչես եյին յեկել, զործունության լայն ասպարեզ եր բացովել իրանց համար :

Ամերիկայից մինչև Արարան տարածվել եյին նրանք և կրակուս ձառնարով վոգեռորում եյին միամիտ ամբոխին, թե հասկել ե ժամը վրեժինդրություն և իրականացնելու հարյուրավոր տարիների փայտայած զաղափարները՝ մեծ, անկախ Հայտառանը ...

Պատերազմը ձգձվում եր : Ամիս ամսվա, տարի տարվա հետեւից անցնում եր, բայց գեռ վերջը չեր յերեսում :

Մի քանի ամիս և, ինչ խմբապետ Վազգենը վերին դյուլից իջել և Դ. դյուլը, շատարը մետաքսաթելի գործարանի գրասենյակն և գարձրել, խոկ ինքն ապրում և աղա Վոսկանի տան առաջին հարկում : Նա իշխում և ամբողջ շրջանի վրա : Թագավորի ընկերուց հետո, նա և թագավորում : Տերտերը, Աղա Վոսկանը, տանուտերը և մի քանի ուրիշ հարուստներ կազմում եյին նրա շտարը : Ամեն տեսակի դաս նրանք եյին անում — կնիկ եյին բաժանում մարդուց, գողության համար մտրակով ծեծում, մուրհակների ժամկետն անցկացրածների տունն ու այդին խլում, կթան ու ալյուր տնից դուրս քաշում :

Աղա Վոսկանի մետաքսաթելի գործարանը կանգնած է, ել չի

լովում շշակի ձայնը, ծուխ չի յինում բարակ ծխնելուցզից :

Հանգամանքից ողավելով, նա և իր ընկերները, չնչին զնով շատերի բազ ու տահ տերն եյին զտոնել: Շատերի տան խալիները, թանդադին քարերը, վասկին ու արծաթը ծծվել, մաել եյին Աղա Վուկանի և մյուս հարուսաների սնդուկները:

Դժվար է դուշակել, թե ինչով է վերջանալու այդ յեղայրասովան կտորածը, վորը քանի զնում, ամելի ու ամելի որդունալի և վայրազ եր դառնում:

Յերկիրը անքում եր՝ հյուծված, արնաքամ: Կորի տարվածներից քչերը վերապարձան, այն ել՝ հաշմանդամ զարձած:

Դրսի աշխարհից կցկառը, յերբեմն իրար հակասող լուրեր եյին ստոցվում: Վոչ մի պայծառ կետ, վոչ մի տեղից փրկության հույս չկար:

Յերբեմն, ինչպես բոթաբեր ազուավի կոսոց, լովում եր մեկի ձայնը աղբյուրի զլսին՝ «թուրքերը սրի ու հրի ճարակ ևն դարձրել այս ինչ ու այնինչ հայկական զյուղերը»:

Որո՞րի վրա գժվարանում եր կյանքը:

Սողոմոնի աղբյուրի զլսին, գերանի վրա, յիշարու մոռ կուչ յեկած՝ տիտուր, զլսիկոր կտնդած կամ նստած՝ լուրի եյին ազատում: Բայց վոչ մի տեղից վոչ մի լուր: Ճանապարհները փակվեցին — գաշնակ ու մուսավաթ խառնվել եյին իրար:

Լրադիր, նամակ, հեռազիր զադարեց, ու Վոսկի ձորը տառապում եր անհայտության մեջ: Շատ աներ մնացել եյին առանց աշխատող ձևաների: Խեղճությունը քանի զնում, ամելի եր զդալ տալիս իրեն, և քաղցի ուրիշականը՝ յերախը բաց, սուր տամամներն եր ցույց տալիս ու հըսհըսում...

Ամքել եյին դյուրերը, խեղճացել:

Խմբապետ Վաղգենն իր տղաներով սարստի եր՝ տարածել շրջակա թուրք դյուզերի վրա: Վոչ վոք վտահ չեր, վոր այս զիշեր ել իրենց դյուզի վրա չել: Հարձակվելու, կին, յերեխու որի չեն քաշելու և չեն հրդեհելու, չեն թալանելու...

Թուրք տղամարզիկ ել միացած մուսավաթի զոչիներին, իրենց հերթին, հայ զյուղերն եյին ամերում: Խոկ անտուն, տկոր ու քաղցած բնակչությունը զուրս եր թափել զյաշտերը, արածելու:

Դեկտեմբերի դեռ սկիզբն եր: Դեռ ժամերի տերմաները կար-

զին չեցին գեղնել, տերեաթափը նոր եր սկսել, վոր վէչեց Հյու-
սիային սառը քամին և միան դամից ամեն ինչ թաղվեց ձյունի
տակ :

Փալանգուղենց Հագոի յերկու յերեխաները մի շաբթում
մեռան, կինը հիվանդ պատկած եր, ինքն եր ու 14 տարեկան
աղջիկը, վոր դեռ վատքի վրա եյին։ Հուսահատությունը պատել
եր նրան։ Քանի դեռ ձյուն չկար, մի կերպ քարշ եյին զալիս, իսկ
Հիմա . . .

Զմեու խիստ եր դաժան . . .

Հագոն անխօնա կտրտում եր բակի ծառերը։ Հո չեցին սառ-
չելու։ Իսկ հաց, վարտեղից հաց ճարեր։ Զմեովա պաշար չու-
ներ, դբուից հաց չեր զալիս, իսկ մինչ ձյունը հարյի, մինչև ար-
տը կանաչի ու բերք հավաքելու ժամանակը գա, իրենք հո տնով-
տեղով կկառորդեն . . .

Պղինձ, թեշտ, ինչ վոր կարելի յեր, ծախել՝ պրծել եր։ Հա-
զի շորերին ու տեղաշորին բան ավող չեր լինի, ենակես եր դջլատ-
վիլ։ Հուսահատությունից կատաղել եր։

Հագոն դուրս յեկավ տնից, ինքն ել չգիտեր՝ ուր եր զնում,
յերը վերեվից նկատեց քահանային, վորը դանդաղ քայլերով
դալիս եր գեղի նա։ Արագ քայլերով մոտեցավ և ճչաց.

— Տերտե՛ր, կոտորվում ենք . . . հա՛ց . . . յերկու յերեխաս
բաղցած մեռան, կինս հիվանդ և, աղջիկս ել . . . յերկու որ և
հայրի վշրանք չենք տեսել, տերտե՛ր, մի ճա՛ր . . .

— Ի՞նչ ճար, ա՞յ վորդի . . . Յես ինչ կարող եմ անել. ցո-
րենի ու ալյուրի ամբարներ ունե՞մ, ի՞նչ և։ Թող տերն մեր Հի-
սուս Քրիստոսը, գթառատ ու արդարադատ աստված վողորմեն
մեղ։ Աղոթիր, վորդյակ, և նա յուր վողորմության դռները
կբանա քո առաջ . . .

— Սրանից հետո, տերտե՛ր, յես սատանային եմ աղոթք
անելու, գուցե նա ավելի վողորմած ու արդարադատ լինի, քան
քու Հիսուս Քրիստոսը . . .

— Կտըի՛ր ճայնք, նղովից արմատ, թե չե այդ սրբապիզծ
խոսքերիդ համար վամփուկ անդերով մտրակներով ծվատել
կտամ . . . Ծունկ չաղիք և ներում ինդրիք . . .

— Աղա, հո զու չե՞ս գծվել, ո՞ի ջամատեց տերտերի մոտ
կանդնած. Ճուղուրենց Բարսեղը, վոր մինչև այդ պավագանի
վրա հնալած, լուռ կանգնած եր։

— Դուք քեզ արեք ... Վաղղենն իրա աղաներով, աղա Վոսկանն ու իրա կամպանիան թող արաքին, իսկ մենք ցրտից կոնկունանք ու քաղցից մեր մսերը ծամենք ... Բա ո՞ւր և ասուցած, վո՞ր ջնանդամն ե կորել, թե՞ քոռացել ե: Եղ աստվածը մեր աստվածը չի, հարսւստներին ե, նրանք ել թող աղսթեն ու մատաղ անեն նրան: Իսկ յես ել չեմ վախենաւմ վո՞չ նրա բարկությունից, վոչ ել նրա վողորմության վրա թքել եմ ուզում ... ասաց ու անուշադիր թողնելով տեր հոր անհծնն ու սովորակալիք՝ ները՝ վեր վաղց:

Մութը դեռ նոր եր ընկել:

Փալանգուղինց Հազո՞ր մի բան խրեց ծոցն ու լուռ գուրս յեկավ տնից: Նա արագ զնաց, կանգ առավ աղա Վոսկանի տանե գարսլասի մոտ, ձեռքը բարձրացրեց, վոր մուրճը զարկի, բայց իսկույն ցած թողեց, մի քանի քայլ զնաց, հետ յեկավ, փընթ-փընթաց քթի տակ ու արագ քայլերով զնաց դեպի ցած:

Կանգ առավ ուրիշ մի տան մոտ, նայեց բարձր սպարիսազներին, որորնց զլուխը, քիչ անց՝ նեղ նրանցքով անցավ և կանգ առավ դոմի սպատի մոտ, վորը համեմատաբար ցածր եր: Ճարալ-կորեն չանգուսելով պատը, սկսեց վեր մագլցել: Բարձրացավ կտուրը, զգուշությամբ կտրանը հենած՝ վայտի սանդուխներով իջավ բարկը: Յերկհարկանի տան առաջին հարկի մի սենյակի յերկու սպատուհանից լույս եր յերկում: Նա համարձակ չորս աստիճան վեր բարձրացավ և մտով մութ նախառենյակը: Միջին զուան ճեղքածքից լույս եր նշմարժում: Դիմեց դեպի արդ գուուր, առանց տառանդիլու բացեց ու մնաց զռների մեջ...

— Ե՞ր, ո՞վ ե, —վախեցած հարցրեց աղա Բարսեղը:

— Վա՞ր, —ճշցին աղա Բարսեղի կինն ու աղջիկը՝ մեռելը պես զունատված:

— Մի վախենա՞ք, յես եմ:

— Ռ՞ով ես:

— Փալանգուղինց Հազո՞ր:

— Հազո՞ր, ի՞նչ ես ուզում ... Եղ ո՞վ դուռը բաց արեց:

— Վոչ վոք, պատի վրայով իջա:

— Գժվե՞լ ես, ինչ ե:

— Զեմ զժվելո, քաղցած ենք, տանը հիվանդ են, կոսոր-վում ենք: Հո դիտես՝ յերկուսը քաղցած մեռան, ես մեկելներին

շեմ թողնի, վոր մեսնեն: Վեր կաց, դու հաց շատ ունես... Դային գուռդ թակեյի, չեյիր տա, դուքս կանեյիր — հիմի վեր կաց:

— Հարամզագալա՛, ... գո՞ղ, շա՞ն վորդի, եղ վո՞նց ես սիրա տրել, յես քո հախից կղամ՝, պատերի վրայով տուն մտնելը ... Վաղգենի...

— Տեղդ նստի՛ր, — չշարժվե՛ս, յես գլխիցս ձեռք վերցրած մարդ եմ ... տեղդ հանդիստ նստիր...

Նա հանեց վոքքիկ, կես զաշույնն ու մի քայլ առաջ յեկավ: Եին ու աղջիկ ճշալով յերեսները ծածկեցին ձեռներով ու կուչ յեկան...

Հաղո, վերցրու ... այ, հացի պահարանը բաց տրա, ինչքան ուզում ես, վերցրու:

— Ա՛յ մարդ, չշարժվես, թող տանի, — սարսափած կանչեց կինը:

Հաղոն վերցրեց կապույտ սփոռցը, վոեց հատակին, պահարանից հանեց չոր հացերը, դարսեց, կապեց, զցեց ուսին...

— Շնորհակալ եմ ... — Նա հետ-հետ զնաց ու կորավ մթության մեջ:

Նա նոր եր բարձրացել գոմի կտուրը, յերբ տան կտուրից լսվեց աղա Բարսեղի հարայը.

— Հասե՛ք ... գո՞ղ ... առնս գո՞ղ և մտել ... այ-հարա՛յ, դարսուլ:

Մի քանի բոպեյում ճրագներով դուքս թափվեցին տներից հարեւանները: Հաղոն նոր կտուրից ցած եր զցել հացի կապոցը, իջել ու վերցրել եր, վոր զնա, յերբ իրեն շրջապատված տեսավ: Աչքերը վառվեցին, պինդ սեղմեց հացի կապոցը ճախ կուան տակ, դաշույնը ձեռքին՝ մի յերկու քայլ արավ ու կրկին կանդ առավ:

Ճուղուրենց դուռն աղմուկով բացվեց ու փողոց դուքս յեկալ Բարսեղը.

— Բոնե՛ք, բոնե՛ք եղ գող ավազակին...

Մի քանիսն առաջ շարժվեցին, բայց նկատելով Հագոյի ձեռքի դաշույնը և արյուն կոխած աչքերը, սիրտ չարին առաջ դնալու:

— Զմոտենա՛ք, չմոտենա՛ք, կիսինմ, արյուն կանեմ... Ունեցած-չունեցած դրանք լափեցին, կթանս ձեռքիցս դնաց, յերկու յերեխաներս քաղցած մեռան ... Ես տասը հացի համար

արյուն կանեմ, դե՛նը, դե՛նը ... նա սռաջ անցալ, ճանապարհ քացեց, համլազված ամբոխի միջից ու փախալ...

Ճուղուրենց Բարսեղն ընկալ հետեւից, բայց նրան պահեցին, ասելով, վոր վազն առավոտ Վաղղենը գրա գիշանը կանի; Յերկար ժամանակ աղմկում ելին. աստիճանաբար ցրվեցին և կրկին տիրեց լություն:

Աղա վոսկանի աղջիկ Վարսիկը յոթերորդ յերկնքումն եր:

Հենց առաջին որվանից, վոր նա Վաղղենին տեսալ ձիռ վրա, իրենց փողոցով անցնելիս, սիրտը կապալ — ել մտքից չեր հեռանում, շարունակ նրա մասին եր մտածում, բայց մարզուրան չեր ասում:

Բախտի բերմամբ նա այժմ իրենց տանն և ապրում. և ինքն ամեն որ հեռվից անոնում և նրան ու հիանաւմ: Թեև ծանոթ եր, բայց յերբեք առանձին չելին մնացել, սակայն իրար լավ ելին հասկանում: Հեռվից-հեռու իրար հետ աչքումքով խոսում ելին, ու Վարսիկը յերջանիկ ծիծաղով փախչում, տուն եր մանում, ժութաքաները խեղդում. գրկի մեջ, մեկ ել ուրախությունից լաց լինում, յերեսի վրա փոկում, ու հայրն ինչքան աշխատում եր խոսացնել, զլուխը չեր բարձրացնում:

Վաղղենն աղա Վոսկանի փեսան դառնալու և եղ կաքալի նման աղջկման տիրանալու մտահոգության մեջ եր...

Որորի վրա ավելի յեր սիրահարվում և յեթե չլինելին կոփներ ու խաղաղ պայմաններում գտնվելին, սկի մի որ ել չեր գիմանա ու թե չտային, զոսով կփախցներ: Աղջիկը սիրուն, փողն ել բոլ ... Լուսնկա գիշերներին յերբ տանն եր լինում, յերբ բոլորը քնում ելին, նա իջնում եր բակը, պատկում ալվազանի մոտ, վարդենիների մոտ զրած նստարանի վրա ու աչքերը մուգ կապույտ յերկնքին հառած՝ աստղերին եր նայում և յերադում Վարսիկի մտան, վոր հանդիստ քնած եր...

— Տեսնես վո՞ր սենյակումն ե ... տա՞ք և ... վերմակը վոտով խփել, մի կողմն ե ձգել ... և նրա յերևակայության առաջ պատկերանում ելին Վարսիկի սև մաղերը՝ թափված հուշնի կուսական կրծքին, ձյունի նման սպիտակ, վողորկ մարմինը ... շապիկի տակից թոթոսում ելին սերուցքի կրեմի նման նրա կուսական ստինքները, վորոնք կարծես ճիգ ելին անում ծակել շապիկը...

Նա պառկած լուսնի տակ, վարդենիների բուրմունքով արբեցած, աղբյուրի կարկաչին ունկնդիր՝ յերեակայության մեջ մերկացնում եր Վարսիկին և Հաճույքից փակում աշքերը, վոր յերկար, ավելի լավ կարողանա զմայլել վառ յերեակայության սահմանած անուրջներով...

Իսկ յեթե նրա քունն ել չի՝ տանում ... Յեթե նա յել իրամասին և մտածում ... Հանկարծ իջնի բակը ... Այդ մտքից ուրախացած՝ նա նստեց տեղում, ժպտաց...

— Վո՞չ, վո՞չ, ինչ եմ առում, դա անհնար և ... բայց յեթե ... նա հառաչեց խորը, դանդաղ վեր կացավ, բարձրացավ, մտավ տուն և առանց հանվելու պառկեց :

Վաղուց ե, վոր աղա Վոսկանը վորդուց լուր չուներ: Անհանգիստ եր, բայց աշխատում եր շատ չմտածել և ինքն իրեն խրախուսում եր, սիրու տալիս.

— Ի՞նչ պիտի լինի վոր, ոլ. Հարությունը հո այնտեղ և, փող կտա ... Իսկ յեթե զինվոր են տարել ... ԶԵ՛, չի կարող պատահել, նա կոխվ զնացող՝ չի, մի կերպ փողի դոռով կազմով, —ինքն իրեն խոսում եր ու մխիթարում:

Առավոտը լուսացած — չլուսացած՝ շտարի գուան մոտ հավաքվել, աղմկում եյին մի քանի հոգի:

Ճուղուրենց Բարսեղը՝ բարկությունից կարմրած, ձեռքի դավագանով խփում եր սաքվի քարին և բարձրածայն հայհոյում ու սպառնալիքներ տալիս: Շուրջը հավաքված մարդկի հետաքրքրվում ու մանրամասնություններ եյին ուղում իմանալ: Մինչև Վաղգենի քնից դարթելը, բակը լցվեց մարդկանցով:

Շատ ուշ եր արդեն, յերբ Վաղգենը յեկավ՝ ժպտալով ու մի ձեռքով բեխերի ծայրը սրելով: Գլխով բարեեց աղա Բարսեղին և ներս մտավ զրասենյակ: Յերբ լսեց Փալանդուղենց Հաղոյի արարմունքը, անմիջապես կարգադրեց, վոր յերկու զինվոր գնան և թրեկելով բերեն:

Բայց սաղ դյուղը տակն ու վրա արին, չգտան, —իզն ու թողը կորել եր:

Աղա Վոսկանի տանը խրախունք եր: Լսվում եր դուղուկի մելամաղձուտ նպագ, ժխորի աղմուկի մեջ՝ հարբած մարդկանց կանչվուուք:

Խմբաւղետ Վաղղենը ֆրենչի դրսի ծոցի զրովանից, վոր լիքն
թղթադրամներով, անփութութորեն յերկու մատի ծայրալ գուրու
և քաշում մի թղթադրամ, առանց նայելու՝ ճարպիորեն, սղի
մեջ թոցնելով հասցնում և նվազողներին: Նրա առաստաձեռնու-
թյունից շատերի բերանը բաց և մեացել: Նա հարրած և գինով
և աղա Վոսկանի աղջկանով, վորը հնաղպար» ե պարում—որոր ու
շորոր և Վաղղենի սիրաը նրա ամեն մի շարժումի հետ պատրաստ
և գուրս թուչել կրծքից և փամիլ աղջկա վուաների տակ, վոր նա
կոխկոտի, տրորի...

Գլուխը կորցրած՝ թղթադրամներ և, վոր նա շղթառում և
նվազողներին: Նվերներից վողելորիած, կարմրած աչքերով՝
նվագողները ուժ են տալիս թոքերին, իսկ դասի խփողը դիմին և
խփում, ծնկանը և զցում, բոնում և զափի:

Աղա Վոսկանը մոռյլ նայում և աղջկանը, նայում և Վաղ-
գենին, վոր աչքերով ուտում և աղջկանը և պատրաստ և բուռնցքը
զարկել սեղանին այնպես, վոր շշերը, բաժակները, աղաման-
ները թռչկոտեն իրենց տեղերում, իրար բաղիսվեն, փշուբ-փշուբ
լինեն և զոռա ամրող ձայնով.

— Դուրս կորեք, սրիկաներ, ո՞ւմ աղջկա վրա յեն նայում եղ
աչքերով ... Աղա Վոսկանի աղջիկն ե՞ ... Դուք արժանի չեք նրա
վոտի յեղունգին ... Աղա Վոսկանի աղջիկն ե ... աղա Վոսկա-
նի ...

Իսկ Վարսիկը վաղուց նկատել եր Վաղղենի հրացայտ աչքերի
կրակը, նա դիտե, վոր իր համար և վասպում և կարծես վճռել և
խելքամաղ անի: Ժպտալով՝ հայացքներ եր ձգում նրա կողմը և
նազանքով որորվում նվազի ոիթմի տակ...

— Աչմա սարա՛հ ... — զոռաց Վաղղենը, հանեց մառուղե-
րը և մի քանի անգամ կրակեց՝ ծակոտելով առաստաղը: Վարսիկը
վախսիվ և միացավ դռների մեջ խոնված կանանց: Կանայք ճշտ-
լով ներս մտան հարման սենյակը և դրուը ծածկեցին:

Նվազը լոեց :

Վաղղենը խելագարի պես վերցրեց գլխից մորթե գլխարկը,
գետնով տվեց, քաշեց մառուղերը, չանդոտեց դեմքը, կարծես
ուզում եր արյունլվա անել ու ճշաց ահռելի ձայնով.

— Նվա՛դ ... ձեր հոդո՛ւն սատկեմ, նվա՛դ ... յես կիսեն-
թանա՛մ ... նվաղե՛ք, նվագե՛ք, ու նորից համելով տորբանակը
գեմ տվեց քունքին:

— Ածե՛ք, թող նվազը խլացնի ատրճանակի ձայնը, թողեք վերջին ճիչս խառնվի նվազին:

Կանանց սենյակից լսվեց մի սոսկալի ճիչ ... և կանանց իրարանցման ձայներ ...

— Վարսի՛կ ... Վարսի՛կ ...

Աղա Վասկանը գունաա, գաջի պիս՝ վոտքի կանդնեց, նայեց Վաղղենի կողմն ատելությամբ և արագ անցավ կանանց սենյակի կողմը:

— Վաչի՛նչ ... վաչի՛նչ ... Մի քիչ վախեցավ ... անցավ ...

— Վաղղեն, Վաղղեն ջա՛ն, հոգուտ մտաղ ... ինչ ես անում ... գիւռ հո չե՞ս :

Շրջապատեցին նրան աղերքը: Մեկն ուղեց խել ատրճանակը, բայց նա կատաղած մողու պես չոեց աչքերը, հրեց նրա կրծքին ու ինքն ընկալի հետեին կանդնած ընկերոջ դիրկը:

— Իմ ձեռքից ատրճանակ առնողը մոր փորից դեռ չի՛ ծեվել:

— Մի՛ կողմ, թողե՛ք ... Վաղղեն ջա՛ն ... մի կողմ քաշվի՛ր:

— Վաղղեն ջա՛ն ... ա՛ռ, ես մեկն ել խմիր ու հանգստացիր ... ա՛ռ խմիր ...

Հաղիվ վոտքի վրա կանդնելով, գես ու դեն թոլ լինելով, բաժակի գինին թափթիելով՝ համողում եր մեկը, վոր խմի ու ուշքի գա: Վաղղենը խմեց, ատամներով փշրեց բաժակը, սրբաց արյունոտ բերանը, մի քանի բողե լուռ, աչքերը դեղի գուռը, ուր թաղնվեց Վարսիկը, նայեց, ուղեց ծիծաղել, բայց փոխանակ ծիծաղելու, մի քանի անդամ բերանը բաց ու խուփ արավ, սեղմեց ատամներն իրար, սկսեց կրծուել շրթունքները, և չկարողանալով դապել իրեն՝ ընկալ յուր թիկնապահի դիրկն ու հեծերլուաց:

— Վաղղեն ջա՛ն, Վաղղեն ջա՛ն ...

— Խաչո՛, Խաչո՛ ... գյոււլի՛ր ... պատուի՛ր սիրտս, տարգցիր նրա առաջը ...

Քաշքշելով՝ թեվերը մտած, տարան նրան իր սենյակը, պատկեցրին: Քիչ անց՝ փիսեց ու հանգստացավ՝ քնեց: Թիկնապահը ճանապարհ գցեց բոլորին, ինքը մնաց: Որը լուսանում եր: Հյուրերը ցրվեցին:

Աղա Վոսկանի աչքերից թույն եր կաթում ... Մակիչի ականչին ինչ վոր շնչաց կամացուկ ու զնաց, շորերով պառկեց:

Քեֆի հետեւալ որը Վաղգենը շատ ուշ դարթնեց :

Գլուխը ծանրացած, թթված դեմքով, քեփը տեղը չեր : Պառկած տեղից ձեռքը մեկնեց ու կողքի աթոռի վրայից ծխախոս ուսալ, վառեց և մեջքի վրա պառկած՝ լուռ ծխում եր :

Գլխում մտքեր չկային : Հետեւամ եր ծխի քուլաներին, զոր դանդաղ բարձրանում եյին վեր և պատուհանից ընկած արևի շոգերի մեջ իրար անցած՝ դարձրիում, ծոմովում, վոսկեղոծած զեղանկարներ կաղըում :

Կեսոր և : Թիկնապահ Սմբատը մի քանի անգամ յեկել, դուռ արանքից նայել ու քնած կարծելով՝ զնացել եր : Առաջ անորոշ—կարծես յերազում եր տեսնում — նա հիշեց Վարսիկին, ապա աստիճանաբար հիշեց բոլորը : Գիշերը, քեֆի ժամանակ, նա հիմարություններ եր արել : Զկարողացավ հիշել մանրամատությունները, բայց հիշեց, վոր ասրճանակը հանեց, վոր լաց յեղամ՝ իսկ թե ելի ինչ, չզիտեր : Այդ հիշողությունից նա կարմըրեց և չուռ յեկավ աջ կողքին :

Այդ բովեյին դուռն դդուշությամբ բացվեց և հուշիկ քայլերով ներա մտավ Սմբատը :

— Սմբատ :

— Յես եմ : Զարթնել ես :

— Վաղուց :

— Կարծում եմ՝ քնած ես :

— Զե՞ : Գիշերը հիմարություններ շատ եմ արել :

— Ի՞նչ հիմարություն ... մի քիչ խմած եյիր : Դե՞, ամենք ել լուլ եյինք :

— Մասւզերը կրակեցի ... լաց յեղա ...

— Դե՞, հարբած մարդը ... Հա՛ Վաղգեն ջա՛ն, բերել են :

— Հը ...

— Բերել են, ասում եմ :

— Ո՞ւմ :

— Են հարամդադին, վոյ ձուղուրենց տնից հաց եր դողացել :

— Հա՞ : Ի՞նչ ե ասում :

— Բան չի ասում : Մի անգամ քիթ ու մոթին տվի, կատաղած դելի պես աչքերը չուց վրաս, դողդողաց ու թե՛ «վոչինչ» :

իշխանությունը բանացրու, յերկար չի քաշի, եղ բոլորը քիթ ու
բերնիցդ կհանենք :

— Նա՞ ասաց :

— Հա՛, եղ քոստ, չլուսը :

— Մի բյումկա կոնյակի լի՛ց, ... Շորերս դեսը քաշի՛ր :

Սմբատն աթոռը մոտ քաշեց, սեղանի վրայից առաջ կոն-
յակի չի բաժակի հետ ու մոտ յեկաղ :

— Խմի՛ր, վաղեն ջան :

Նա կիսահագնված կուլ տվեց կոնյակը և տագնապից զարթ-
նած զինվորի պես՝ արագ-արագ հագնվել շարունակեց :

— Յես նրան ցույց կտամ ... Շա՞տ մարդ և հավաքվել :

— 10—15 մարդ կա :

— Մարակի տակ կսպանեմ մոլ շան վորդուն ... Իմ շրջա-
նում դուզություն չպետք ե լինի... Դողերին են աշխարհը կճամ-
րեմ ... Իմ շրջանում դող չպե՞տք ե լինի...

Կախեց մառվերը, մի ատրճանակ ել կոխեց շարավարի հետեւի
զբովանը, յերկու բյումկա կոնյակ ել իրար հետեւից դցեց, վերց-
րեց յեղան ջղերից հյուսած մարակը, ծխախոտը բերանին՝ շտապ
դուրս յեկալ սենյակից, Սմբատն ել հետեւից :

Մարդիկ շտաբի դուան առջև խմբված՝ խոսում ելին բարձ-
րաձայն՝ նրան տեսնելով՝ ճանապարհ բացին: Նա հպարտ, հա-
ղիկ պատասխանելով նրանց բարեկին, մտալ սենյակ, ուր ան-
կյունում, յերկու Փիղայիների հոկոզության տակ՝ կանգնած եր
Հաղոն :

— Աս՞ յէ :

— Հրաման քեզ ...

Նա լուս մոտեցավ Հաղոյին, կանգնեց մի քայլի վրա,
զննեց վոտից դրուխ, հետ տարավ ձեռքը և մի ուժգին ապտակ
հասցրեց, ըջվեց—զնաց, մտրակը նետեց սեղանին, աթոռը
քաշեց տակը և հստեց: Հաղոյի աչքերից պեծեր թափվեցին, ար-
յունը դլուխը տպեց, աչքերը չոփեցին, մի քանի վայրկյան լուս
նայեց. Վաղդ հնի աչքերին, թակարդ ընկած դաշանի պես խուլ
մոն չաց, մի քայլ արեց, բայց իրեն զսպելով՝ հետ զնաց ու
մնաց լուս:

— Դուրս տարեք :

Եերկու պահակները քարչ տվին նրան զեսլի դուռը :

— Կապեցի՞ք ծառից ... չորերը հանե՞ք...

Հազո՞ն մո՞չում եր վիրավոր գաղանի նման, հոյշոյում,
նղովում: Մտրակները դիսչում եյին մերկ մարմնին շպանցով և
կարույտ դոլեր կապում:

Վաղգենը քանի զնում, ավելի եր կատաղում:

— Պի՞նդ, պի՞նդ, շան վորդի՛, ուժով խփիր, մի խեայի՛ր,
թող տամիլի...

Նա խլեց խփողներից մեկի ձեռքից մտրակը և ոկտեց անխնա
հարվածել:

Արյունը սկանում եր Հազոյի կաշվի տակ:

Նա խոշ վոռնում եր:

Առաջին հարվածից նա գալարվում եր, թոկերը միսրամյում
եյին մսերի մեջ, բայց աղատվելու հնար չկար:

Առաջին հարվածներից հետո, նա կարծես ել ցավ չեր դդում:
Ծանր, ընդհատութեատ անքոց եր լովում, աղա անքոցն ել
կտրվեց: Աչքերը կիսախուսի, գլուխը կախ ընկավ ուսերի վրա ու
լոեց...

— Վաղեն ջա՞ն, բոլ ե, ուշք չկա վրան ... Հերիք ե ...

— Գետք ե սպանեմ, սատկեցնեմ: Գողերի պատիմն ես ե: Իմ
շրջանում զողությունը պետք ե վերահա: Գողերի դիմանը կարճ
ե...

Նա մի կողմ նետեց մտրակը, կարմրած, հողնած սրբեց ճա-
կատը զլխարկով ու արադ ներս մտավ սենյակ:

Աղա Վոսկանը, Ճուղուրենց Բարսեղը, Մելիքը սառել, մնա-
ցել եյին. քասաիր-քյուսուրները գունատ, ստամներն իրար
սեղմած, վոր ձայները դուրս չդա, կպել եյին պատերին ու չո-
րացել:

Ճուղուրենց Բարսեղը մեղավորի պես կանդնած եր՝ աչքերը
դեմնին հառած, կարծես զղացել եր, վոր եղ խեղճ մարդուն մի
քանի հացի համար գաղանի ձեռքը դցեց:

Դանակներով կտրտեցին թոկերը, ու Հազոն, լմացքից հա-
նած փալասի պես, ընկավ գետին՝ ծվատված, ինչպես աղուավ-
ների և անդղների հոշոտած մի լեշ:

Վարսիկը մի յերկտող գըեց ու պատշպամբից նետեց, յերբ
Վաղենը տնից գուրս եր գալիս:

Նամակը պտառելով ողի մեջ՝ ընկավ նըա վստների մոտ: Նո-
վեր նայեց, ժպտաց, զլխով արեց, կուսցավ-վերցրեց նամակը,

կոխեց Փրկնչի ծոցի գրապանը, կրկին վեր նայեց, բայց Վարսիկն որդեն անհետացել էր:

Փաղոցում Վարդենին սպասում եյին տղերքը՝ ձիերի սանձը բոնած: Նա դուրս յեկավ գարպասից, կանդ առավ, նայեց բոլորին ու ժպտալով կանչեց.

— Բարե՛, տղերք:

— Բարե՛, Վարդեն ջան:

Նա մոռեցավ յուր ձիուն, վորի սանձը տղաներից մեկի ձեռքին եր, սանձը զցեց ձիու գլխին ու ցատկեց, նստեց թամբի վրա:

— Մարշ...

Նոր եյին շարժվել: Նա հետ նայեց և յերկրորդ հարկի պատրշգամբի վրա նկատեց Վարսիկի գլուխը, վոր յերեսում եր խաղողի տերեների միջից, ձեռքը թափահարեց ի նշան հրաժեշտի և ներքին հրճվո՞քից լուս ծիծաղեց:

Տղաներն իրար նայեցին ու ժպտացին:

Մի քիչ տեղ գնալուց հետո, նա մեռքը արավ գեղի դրապանը — մի բան կարծես ծակում եր սիրաը — հանեց յեռանկյունի ծալած թղթի կտորը, բացեց ու լուս աչքի անցրեց: Նա ժպտաց, ժպիար յայնացավ և ուրախությունից ձիու նման խնխնջալով ծիծաղեց:

— Վարդեն ջա՞ն, Հը՞:

— Վոչի՞նչ, հետո կիմանաք:

Լա՞վ բան է:

— Իհարկե:

Նա կրկին անելամ կարգաց. «Յերբ բոլորը քնին, դուքս յեկ բակը»: Նա մեկ մտածեց հետ դառնալ ու վոչ մի տեղ ել չզնալ, մեկ ել ընկնել գետին, թաղալվել ինչպես յերեխաները գետնին դցած փափուկ անկողնում՝ քնից առաջ: Մեկ ել, առանց վորհերան ասելու, մորակեց ձիուն և նետի պես սլացավ:

Տղերքը զարմացած նայեցին հետևից և իրանք ել սլացան:

Մութն ընկեր եր, յերբ Վարդենն իր խմբով տուն զարձավ:

Նա հոգնած եր և նյարդայնացած. զբեթե ամբողջ որը ձիւլ պտակել եյին վերին գլուղերը: Ճաշին աղա Վահվանի մոտ յերկու վոչխար կերան — եղ եր նրանց հանդիսաք: Մեկը մեկից տաղնատալի լուրեր եյին հասել իրեն. տաճիկներն արդեն Յերե-

վանի տակն են հասել ... Շրջակայքի թուրքերը պատրաստվում
են հարձակվելու վոսկեձուրի վրա ... Բայլշեփեկները Բաղու յեն
մտել ... Վո՞րն ե սուտ, վո՞րը ճիշտ՝ չդիտեր, բայց զգում եր,
վոր զժվարանում և զործը և իր հանգիստ կյանքի վերջը մոռե-
նում ե :

Բոլոր գյուղերում ել չքավորությունը ծայր առաջնի յի
հասել: Զգում եր, վոր ժողովուրդը զժդուհ է իշխանությունից.
մի կայծ, և նա կրոնկվի, կրծքերում սեղմված բողոքի ճիշը կճայ-
թի մրրկի պես և քարը քարի վրա չեն թողնի:

Նա մոայլ եր: Հրամայեց խմբին ցրվել, իսկ ինքը առւն դնաց
և փակվեց յուր սենյակում:

Վերեռուն դեռ քնած չեյին, լսվում եր աղա Վոսկանի կոշիկ-
ների թույլ ճառոցը և հաղի ձայնը: Առաքերը անդ չեյին հաս-
նում, բայց պարզ եր, վոր հայոցում, նախատում եր մեկին: Ետ-
լարեց լսողությունը, շունչն իրան քաշած՝ աշխատում եր բան
հասկանալ; բայց էուր: Հանկարծ մի բան ամուր դիպավ հատա-
կին և փշուր-փշուր յեղավ, վորից հետո լսվեց կանացի լացի
ձայն, աղա աղա Վոսկանի զայրույթից խոպոտած ձայնն ու
տիրեց լուռթյուն:

Վաղգենը յերկար, ուշադրությունը լարած, սպասում եր ելի
մի բան լսելու, բայց լուռ եր:

— Ի՞նչ բան և արդյոք ... Զլինի թե՞ իմացել և աղջկա նա-
մակի մասին ... Ի՞նչ ... ուրեմն Վարսիկն ել չի՞ դա ... Վո՞չ,
Վարսիկի վրա արդպես չի գոռա, նա նրան պաշտում ե ... Գուցե
կնոջ վրա յի կատաղել ... Այդ նրան ավելի հավանական
թվաց:

Ինչ զանդադ և անցնում ժամանակը, վոչ հանգիստ նստել և
կարողանում, վոչ պառկել: Վեր եր կենում, ըրջում սենյակի
յերկարությանը, նայում պատուհանի խավարի մեջ, ելի հետ
դալիս, քայլում և անդադար ծխում:

Նա մտածեց դուրս գալ բակը, բայց դեռ շուտ եր:

Լուսնի լու յոը բարձր պարսպի ծայրից կախ ընկալ և դողի
պես զբուշությամբ իջավ բակը:

Վաղգենը հանդցրեց ճրագը, մնաց մթության մեջ: Միրոց
քանի գնում, ամելի արագ եր բարախում: Նա զբուշությամբ բա-
ցեց դուռը, իջավ բակը: Մարդ չկար: Նայեց վերև, հենց այդ
բողեյին յերկրորդ հարկում հանգավ լույսը ...

Պատի տակ, առվի մնջ յերկու դորս իրար ձայն տվին...
Նա կրկին բարձրացավ սենյակը և բաց պատուհանից սկսեց
նայել դուրս :

Թեթե՛ շշուկից նա ցնցվում եր : Կիսով չափ դուրս եր գալիք
պատուհանից, բայց հիասթափոված կրկին հետ դառնում ու
մնում տեղում քարացած :

— Գուցե խարեց ... ծաղը ե...

Արյունը զբարի տվեց : Մազրել նրա՞ն ... Յեվ ինչո՞ւ ...
Նա հաստատ դիտե, վոր Վարսիրկը սիրում ե իրան. այդ աչքե-
րը խարել չեն կարող ... Իսկ յեթե հանկարծ դա ու իրեն այնտեղ
չգտնի՞ ... Նա այնպես վախեցավ այդ մտքից, վոր արագ, գրե-
թե վաղելով՝ դուրս յեկավ սենյակից և իջավ բակը : Հաղիվ եր
հասել ավագանի մոտի նստարանին, վոր հետեւց լսեց մի շրջյուն.
Հետ նայեց, — նա յեր :

— Վարսի՛կ...

— Առ' ու ... կամա'ց ...

Նա բռնեց տղայի ձեռքը և սրտի թոթիռով շշնջաց ...

— Վախենում եմ, կամա'ց ... հայրիկը ...

— Վարսի՛կ ... Վարսի՛կ ...

— Վաղո՞ւց ես սպասում :

— Վաղո՞ւց ...

— Հայրս կովում եր կնոջ հետ :

— Խ՞է կնոջ :

— Երա ... ուշ պառկեցին ...

Վաղենը լուս, յերկար նայեց նրա աչքերին, մեղմ քաշեց
գնդի իրեն և զիմաղբության չհանդիպելով՝ դրկեց, սեղմեց
կրծքին ու յերկար, չունչը կտրվելու չափ յերկար համբուլյով,
աղբուկի նման շրութներներով կպավ նրա շրթունքներին...

Աղջիկը հարբածի պես հետ ընկավ նրա թների վրա և փա-
կեց աչքերը :

— Վաղգե՛ն, Վաղգե՛ն, — շշնջաց նա զունատ շրթունքների
ժիշից և կրկին կպավ տղային. — Դու ինձ սիրո՞ւմ ես ...

— Ա՛խ, Վարսի՛կ, ինչեր ես հարցյում :

— Լով, լով, դիտեմ ... Վաղըիկ ջա՞ն, ել ենակն բան չա-

նես :

— Խ՞է քան ...

— Ա՛յ ... են ... ատրճանակը ...

— Վախեցա՞ր :

— Սիրոս զնաց :

— ԶԵ՛, ել չեմ անի ... Վոր ինձ սիրես, ել եղ դժությունը չեմ անի, թե չե տուանց քեզ ինչի՞ս և պետք կյանեքը, սիի մի որ ել չեմ առըրի. իմ ջանն և ու մի զնզակի ...

— Վաղգեն ջա՞ն, յես քոնն եմ, յես քեզ սիրում եմ, քոնն եմ հայրայան ... Կաց, հն ո՞վ ե :

— Ի՞նչ, վարտե՞զ :

— ԱՌԵ՛, չե՞ս տեսնում, եւա ասրատված, մասնավ ցույց տվեց դեղի աստիճանները, վարտեղից մի անորոշ սամեր իջավ և ուսաց շուրջը նայելու, պլասիկոր անցավ դեղի խոհանոսը :

— Ո՞վ ե :

— Զդիանեմ :

— Գուցե աղախի՞նն ե :

Վաղգենը թոցեղ նստարանի վրա վախից սիրթնած Վարսիկին, մի քանի քայլ արեց գեղի սամերը, մի քանի վայրկյան նայեց հետեւից ու հետ գարձով :

— Ո՞վ է :

— Զիմացա :

— Հայրս չԵ՞ր :

— Չե՛ :

Լովեց խոհանոցի դռան ձռոցը զուսը բացվեց, կրկին փափիեց ...

Լսողությունները յերկար լարած, չնչներն իրանց քաշած, նրանք հետեւցին, բայց այլեւ վոչ մի ձայն : Ճոփիկներն ելին դիշերված լոռությանը խանդարում ե յերբեմն լսվում եր ողորտերի լարադիչ կոռոցը ...

Վարսիկը հուզմունքից դողալալով՝ վեր կացավ, ձեռքը Վաղգենի ձեռքի մեջ՝ մի քայլ առաջ արտղ :

— Գնու՞ւմ ես :

— Ո՞վ եր :

— Վաղն ելի այստե՞զ :

— Լա՛վ ... բարի զիշե՛ր ...

Վաղգենը լուս սեղմեց նրան կրծքին, չերմ համբուրեց, չերուզում թողնել աղջիկը խըլեց նրա զրկից, զնաց, հետ նայեց, ելի մոտ վաղեց ընկալ վզովը, համբուրեց ու փախավ ...

Վաղգենը մհաց տեղումը կանդնաւծ . չըթունքների վրա դեռ

դղում եր նրա ջերմությունը : Սիրտը կարծես նվազում եր . ընկալ նատարանի վրա, գլուխն առավ ձեռքերի մեջ, ցավեցնելու շափ ամուր սեղմկից, վորապեսդի ուրախությունից ու յերջանիությունից չճշա...

Վաղքենը դարձնեց աղմուկից :

Ի՞նչ է պատահել, — մտածեց նա, — վեր կացավ տեղից, շաղկով մոտեցավ պատուհանին :

Դարձանը յերկու կրունկի վրա բաց եր : Մի քանի մարդ արագ ներս ու դուրս ելին անում : Հետղէնտե ավելանում ելին : Թիչ անց՝ բակը լցվեց մարզկանցով : Կահայք շտապ քայլերով դիմում ելին դեպի խոհանոց ու լաց լինելով հետ դալիս, գլուխ դժմի տված քչիչում :

— Ո՞վ եր, ի՞նչ է պատահել : — Նա սկսեց արագ հաղնվել : Այդ բողեյին ներս մտավ Ամբատը :

— Ի՞նչ է պատահել :

— Ե՛ս, ինչ ասեմ : Սկի տեսնելու բան չե :

— Ի՞նչ, շուտ առա :

— Ազա Վոսկանի ...

— Հը :

— Իինը խոհանցում գիշերը կուխովել է :

Ազա Վոսկանը մոռայլ եր, ինչպես ժանեպատած յերկինքը կարկուտից առաջ : Արդյոք խի՞ղմն եր առանջում, զգալով վոր ինքն ելեղել նրան դեպի արք քայլը մղողը : Թի՞ մի ուրիշ բան եր այդպիս մթաշնել նրա դեմքը :

Գուցն նրա համար եր մասյլինել, վոր դիմեր, թե բոլորն ել իրան են մեղադրելու : Զհանդամը բոլորը, բայց նրա ծնողներին ի՞նչ պատասխան է առալու :

Նա յերբեք մտքով ել չեր կարող անցկացնել, թե այդ թշվառ կինն ուժ կունենա մի այլպիսի քայլ անելու . այդ անմոռմէ գառը, վորը նրա բոլոր վիրապորանքներին լուռթյամբ եր պատասխանում : Յերեփ հասկացել ե, վոր միայն այդ կերպ կարող ե պատժել աղա Վոսկանին, վորի հետ մի որ անդամ յերջանիկ չի յեղել, շարուհակ անիծել ե իր ծնված որը և լալսվ նղովել ծնողներին, վոր փողից համար իրան ծախսեցին այդ մարդազայլին :

Աւրիլ ել ի՞նչ մտքեր եյին հուղում, փոթորկում աղա Վոս-
կանի գանգը, —դժվար եր գուշակել, անշուշտ և' այդ, և' ելի շատ
բան :

Կնոջից այդ կերպ աղասիլը ցանկալի չեր, բայց առհասա-
րակ աղասիլը բաղձակէ յեր, աղա վոսկանը դրան սպասում էր,
ինչպես քաղցից մեռնողը՝ մի կառը հացի :

Հրաշքի նման մի որ սարերով գյուղ հասավ նախին փոստա-
տար Մուրադը :

Վոչ վոք չեր սպասում նրան : Այսքանի տարիները նրան դրե-
մեւ անձանեցնի եյին գարձրել : Միրուքն ածիլված եր, բեխերը
կարճացրած . նա կարծես աշխատում եր անհայտ մշալ :

Հենց գալու որը գնաց Ուանի մորն ու Նոյեմին տեսնելու :

Ուանի մայրն ընկած վզովը և լաց լինելով տեղեկություն եր
հարցնում տղից : Ուրախությունից Նոյեմի բերանը խոսք չեր
դալիս :

Ուանը գող, նամակ եր դրկել Մուրադի հետ : Մայրը համ-
րուցում եր նամակը, կացնում կրծքին, և ուրախության ար-
ցունքները թափիլում եյին աչքերից :

Մուրադը հարց ու փորձ արեց գյուղից, իմացավ աղա Վոս-
կանի, Վաղգենի արարքները և բացականչեց .

— Վոչինչ, զբանց ժամանակը հասել ն. իդ ու թողները յեր-
կընքով կտանք ... Մերոնք զալիս են ... մի քիչ ել համբե-
րենք ... ինչ ասում եմ՝ մեր մեջ, բերաններիցդ բան չհանեք:
Բագում առել են ... նանի ջան, Ուանդ. դալիս և, քիչ մնաց,
չա՛մ ...

— Բերանիդ մատաղ ... յարա՞բ մեկ ել տեսնելու յեմ :
Դար մի տեսնեյի, հետո հոգիս թող տայի, — ել դարդ չեյի անի .
ուշք ճամբին չմնար ...

— Մի վախենա, նանի : Հյա հարանիք ել ենք անելու, քեզ,
շամաթիա ... մի թող գան ...

— Աստված բերանիցդ լսի, վորդի', արևով կշտանաս :

— Բա վո՞նց եյիք ապրում ես դժվար ժամանակիներում :

— Դե՛, տանը հաց կար, վոր Ուանը զնաց : Աաղ տարվա թու-
դարեք եր տեսել ... Մենք ել պարապ չենք նատել, ձեռքներիցո
յեկածն արել ենք՝ ցանել, հայտքիլ ենք : Նոյեմը, սկնուրն ել

շան չեն խնայիլ: Յոլա յենք զնացել. բայց վերջերս ել ճարը կորիլեց, շատ դժվարացավ:

— Նոյեմ, դու վաղը կանչիր Փալանգուղենց Հագոյին, Հարութենց Յեղիային և մեացած քյասիբ-քյուսուրներին: Յես չեմ ուզում շատ յերեվամ գյուղամիջում ... Ասա՛ շատ կարեռ դործ կա, մութը ընկնելուց թող հավաքվին ձեղ մոտ:

— Լավ:

— Նրանց պետք մե հասկացնել, բացատրել:

— Լավ, յեղբայր Մուրադ: Բայց Փալանգուղենց Հագոն Հլատ պատկած առ մահվանից ազատվեց: Եղ դաշնակցական խրմ-րասպեսն ենքան եր մարակիով ծեծել, վոր քիչ մնաց մեռներ:

— Ինչի՞ յեր ծեծում:

— Հացի համար: Քաղցած կոտորվում եյին: Յերկու յերե-յուն մեռան, հուսահատված մտել եր ձուղուրենց տունը, դա-շույնը ձեռին հաց եր պահանջել:

— Յես մի կրնամ նրան տեսնելու, դու մյուսներին հավա-րիր:

Մյուս որը, մութն ընկնելուց հետո, իրաք հետեւից Ոհանենց Խոնքատանը հավաքվիլ եյին զեղի չքավորները և սպառում եյին Մուրադին: Նրանց հարցերին Նոյեմը պատասխանում եր.

— Զգիտեմ, կզա, կասի:

Քիչ ուշացած, յեկավ Մուրադը, ներողություն խնդրեց, վոր ուշացավ, բոլորի ձեռքը մեկ-մեկ սեղմեց, քեփհաւ հարցրեց ու-սուանց գես ու դեն ընկնելու՝ անցավ գործի:

— Դե՛, տղերք, լսեք...

— Ա՛յ Մուրադ, ախար մեռանք ահհայտության մեջ: Ես դաշնակ խմբավետը մեր հոգին հանեց, տղերքն ել՝ մառվերնե-րը կապած, ամեն մեկը մի զափլան, վոչ խոսել ելինում հետ-ները, վոչ քան: Ի՞նչ լուր կա Ենտեղից: յանի մի լույս, մի ճար դալո՞ւ յե, թե՞ չե: ել չենք դիմանում, կոտորիլիցինք:

— Մուրադ ջան, Մուրադ, ի՞նչ կա գրսերում:

— Դե լսեք, մեկ-մեկ կողատմեմ: Լսել եք, չե՞ վոր թաղա-վորին թախտից դցել են:

— Յանի դրո՞ւստ ե: Լսել ենք ու ականչներիս չենք հավա-ռում:

— Գցել են ... Փամանակալիոր կատաղարությունը չկարո-

դացավ իշխանությունը սպահել և սկսվեցին քաղաքացիական կոլիներ ... Գիտե՞ք ի՞նչ բան և բայլշենք:

— Վո՞րածովից ... Հեջ բան ել ու չգիտենք: Մանրամասն ամեն բանից տեղեկություն տուր:

— Բայլշենքը զա նա յե, վոր գյուղացու, բանվորի իշխանություն և սպահանջում, վոր հարուստ, տերտուր չշահագործեն իրան, վոր հողերը բաժանեն աշխատավորներին, վոր ով չաշխատի, նա չուտի:

— Եղ Հո մերն ե:

— Քսան ինչ կուղի — մի ջուխտ աչք:

— Դե՛, լսեցե՞ք ... գրանք գալիս են: Ասդ նուսասառանը բայլշենքել ե: Բանվոր ու գյուղացի խառնվել են զսրբին, ջարդ ու փշուր արել իշխանների, կալվածատերների, խաների ու թեղերի, տերտերների իշխանությունը: Բայլրը փախել, ծակեցն են մտել: Բազուն, Աղբրմջանը նույնպես բայլշենքեցել են, այսոր չե, վազը Վրաստանը, Հայաստանն ել կիսորհրդայնան. Դաշնակ, մենչեւիդ, մուսովաթ կիֆախչեն, վորովհետեւ կարմիր բանակի տուաջը վոչ վոք բանել չի կարող: Գալիս ե, ինչպես գարնանը տարերից թափվող հեղեղ, բան չի զիմանաւ նրա ուժի տուաջ: Կըա, կվազողի ամբողջ յերկիրը: Վերին դրուցերն արդեն պատրաստվում են ... Եղուցվանից ով տարձանակ, թվանք ունիթող հաղրի, կարող և պետք դալ, եղ չներին եստեղից քշելու համար ... Զգույշ յեղեք, շատ մէք խոսու, բայց ում վրա վոր վստահ եք՝ բացարեք, թող իրա բանը իմանա, թող պատրաստ լինի: Հիմա՝ կամաց, առանց ազմուելի կցրմիք: Ոհանի տամբը կլինի մեր հավաքառեղին: Ամեն գիշեր յեկեք տեղեկությունների: Դե՛, ցրվեցեք:

— Մուրա՞դ ջան, Մուրա՞դ, յանի զրուստ ե՞ն, յանի հույս կա՞:

— Շատ չի քաշել, կտեսնեք...

Մուրադի գյուղ զալու որից մի շաբաթ եր անցել: Նրա չուրջն ելին հավաքվել բոլոր չքամորները: Աղա Վոսկանի թելի դործարանի բանվորուհիներին նոյեմբ հասկացրել եր Մուրադի տառձները, նրանք ել պարագ չելին:

Նոյեմբ շատ զես ու զեն ընկավ, սրան-մըան հարցըեց, բայց վոչ մի տեղից կարմիր կտոր չպահպատ դրոշակի համար: Վերջի

Ահանի մայրը իր՝ չհագած շիլա շապիկը նվիրեց : Քանդեցին, կարեցին, զբան ել Մուրաղի ասածը առեղնաղործեցին . «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք» :

Դրոշակը պատրաստ եր, մնացել եր փայտի վրա ամրացնելը :

Նրանք թագցրին ու անհամբեր սկսեցին սպասել, թե յերբ նն դալու, վոր զնան ընդառաջ :

Մուրաղը մի քանի անգամ ձիով Ո. քաղաքը գնաց՝ իմանալու ենակդի թուրքերի տրամադրությունը և վերտարձալ ուրախայի լուրսի . ենակդ ել պատրաստվում են, թուրքերն ել են հասկացել :

Նրան շատ մտահոգություն եր պատճառում զենքի խնդիրը : Տներից հարվածած հնագարյան տարանակներով ու թվանքներով բան չեր դուրս գա : Մեկի մոտ չախմախլու կար, մյուսի մոտ՝ աշխալու, մեկն ել ատրճանակ ունի, բայց փամփուշտներ չկա և այլն — Պետք եր նոր սիստեմի զենք . վորան՝ զից ձեռք բերել :

Շատ մտածելուց հետո, Մուրաղը Հարումնեց Յեղիային կանչեց, վոր մի 15—20 տղա հավաքի, ուղարկի խմբավետ Վաղգենի մոտ՝ կամավոր դրուին : Այս խորամանկությամբ նրան հաշողվեց աղաներին դինել : Մեկին ել ուղարկեց Ո. քաղաքը, վոր հոսումի, թե ինչ կու—չկա :

Եերեկոյան Ո. քաղաք ուղարկվածը վերտարձալ և Ահանց տանը հավաքված մի քանի հոգու պատմեց, թե Ռահնիմ բեկը և մյուս հողառերերն ու հարուստները մուսավաթի զոչիների հետ միացած, ամեն տեղ լուր են տարածել, թե՝ բայլշեիկ, մենշեիկ չկա, հայերն են դալիս, դաշնակները, վորպեսդի թուրքերց վրեժ առնեն, կոտորեն ու թալանեն, կատաղի պատրաստությունների մեջ են . Բազմի վերցնելն ել, ասում են, սուսե, եղ ել հայերն են տարածել : — Գնացի Ահմաղի մոտ ... Լո՛վ տղա յե, հին աշնա : Ասի, ա՛յ տղա, ես ի՞նչ բանի յեք, նա յել, թե՝ բա ասում են իթողիքը, թե հայերն են դալիս՝ թուրքերին կոտորելու ...

— Սուտ են ասում, Ահմե՛դ ջան, ասացի .—եղ շան դարմերն ելի ուղում են ժողովրդին մոլորեցնել ու խարեբայությամբ յերկու հարեան ժողովուրդներին իրար դեմ հանել, վոր մեջ տեղն իրանք լվալան : Համատար բան ե՝ Այբոքշանը խորհրդայնացել ե, հառը-եղուց Վրաստան : Համատար բան ե՝ Այբոքշանը խորհրդայնան :

Մենք ել, յեկեք թուրք, հայ միանանք ու քշենք եզդ դաշնակների ու մուսավաթների շան սերունդը: Դրանք են սուտ ու մուտ լուրեր տարածում, վոր պղտոր ջրում ձուկ բռնեն ... Եղ յեկողները հայեր չեն, ոռուներ չեն, վրացի ու թուրք չեն, — սրանցից ել կան, սրանցից ել. Եղ յեկողները հայ, թուրք, մլթոնի չեն ճանաչում: Աղքանաների, չունեսորների համար են, հարուստների, մեր արյունը ծծողների հոգեհաները, աչք հանողները ... Ինձ լուր, Ահմադ, ձեր տղաներին առա՞ խելքները տանուլ չտան, ձեր դավողի տղաներին հասկացրու ... Մուրադը, Հովհաննեա փոշտարիոնը, եկեղեց և ենտեղից, սարերովն և յեկեղ, իրա աչքով ամեն բան տեսել և ու դիտի: Ասում ե, մի քիչ համբերեք, ամեն բան լուսվ կլինի ... Են թուրքերն սորած թուստիվներն ել սովի, վոր ցրի դավողում ու ամեն տեղ:

— Ասպիսո, մեծ դործ ես կատարել, — խրախուսեց նրան Մուրադը:

— Դե՛, տղերք ջա՛ն, դոչաղ կացեք, ամեն բան լուսվ կլինի:

Վաղգենը հասկացավ աղա Վոսկանի խորամանկությունը. Թօն նա մերժում ե աղջկա ձեռքը, բայց չի ուղում պարզ առի փիսին-օիխոին անելով և ուզում հասկացնի.

— Վաղգեն ջա՛ն, թող ես խառը ժամանակներն անցնեն, աղջիկն ել գեռ շատ և ջահել, Հովհաննեա մասն ժամանակ բանը բան ցույց կտա:

— Լավ, ասաց Վաղգենը և կատաղությունը զսպելու համար՝ կծեց մտրամի արծաթ կոթը — լավ, — կրկնեց ու արագ Հեռացավ:

Աղա Վոսկանը մնաց մենակ: Նա մաքերի մեջ ընկալ. ինքն ել չգիտեր, լավ արեց, թե՞ վատ, վոր մերժեց Վաղգենին: Մի քանի անգամ — հըմ—հըմ, — արեց ու գլուխը հենելով ձեռքերին՝ մնաց նստած:

Մակիչը մտել եր դրամներակ. տեսնելով աղա Վոսկանին գլուխը կախ, կծկվեց պատի մոտ ու լուռ, չունչն իրեն քաշած, անթարթ նայում եր նրան:

Աղա Վոսկանը գիրտիւլ բարձրացրեց, աչքն ընկալ Մակիչին, մի քանի գայլիկան լուռ նայեց ու քթի տակ մոմուց.

— Բա՞ն ես ասելու:

— Հրաման քեզ:

— Հը՞ :

— Ե՞ն Մուրաղն և յեկել :

— Ի՞նչ Մուրաղ :

— Ե՞ն վոստատուրը :

— Հետո՞ :

— Ասում են ... ասում են ... ասում և բայլշեիկները դա-
լու յեն ...

Ի՞նչ բայլշեիկ, դրանք ի՞նչ հորս ցավն են ...

— Հեղափոխականներ ... Սաղ Ռուսաստանը տիրել են ...
Այժմն առջ ժողովուրդը նրանց հետ է : Հիմի յել մտել են Կովկաս,
Ադրբեյջանն արդեն առել են :

— Գլխին զոռ և տալիս :

— Զե՞, ասում են ... ասում և՝ ճիշտ ե :

— Քեզ ո՞վ ասաց :

— Լուցի, խոսում են, վսիսում ... Շուն Գալուստը լսել եր
ու յեկավ ինձ պատմեց ... ելի շատ բաներ և ասում ...

— Ել ի՞նչ :

— Ասում են՝ տաճիկները ներս են մտել Հայաստան, Սարի-
զամիչ, Ղարս, Ալեքսանդրապոլ, բան առել են, դանակներին
հում ևն տվել : Մնացել և Յերևանը, են ել թե բայլշեիկներն
ուշացան, ձեռքից կերթա : Դաշնակները գյուկները կորցրել
են ...

— Վաղիր, մի խմբապետ Վաղվենին կանչիր : Հը՛ը :

— Ես սհաթիս :

Խմբապետ Վաղվենը նատած եր աղա Վոսկանի գրասեղանի
առջև՝ վոտը վոտի վրա զբած, գլուխը կախ՝ ծխում եր :

Մի կողմում կանգնած եր Սմբատը, մյուս կողմում, դռան
մոտ՝ վոտից-զլուխ զինված՝ յերկու մառզերիստներ :

Աղա Վորոնկանից լսելով, վոր գյուղում բայլշեիկ և յերեա-
ցել, մի քանի զինվոր եր ուղարկել, վոր Մուրաղին բերեն :

Բոլորն ել լուռ եյին : Յերբեմն լավում եր Վաղվենի մտրակի
ձայնը, վոր ինքն ել չզիտեր — ինչու՝ հասցնում եր յերկաթե
անդուկին :

— Գնա, աես ինչ յեղավ, — հանկարծ ուղղվելով աեղում՝ դո-
ւաց Վաղվենը :

Իւնչերում կանգնած աղաներից մեկն արագ գուրս վաղեց :

Մի քանի բոպե անց, սենյակ մտալ Մուրագը՝ յերկու զինվորի հետ։ Մուրագը լուր բարենց և մնաց տեղումը։

Վաղենը դիտեց նրան, չափեց վոտից-զլուխ ու հետ ընկնելով ամսորի թիկունքին, անուշաղիր թողնելով Մուրագին՝ դարձալ զինալորներին։

— Ի՞նչու ուշացաք։

— Զեյինք զմնում։

— Կո՞րել եր։

— Տանը չեր։

— Վորաեղ եյիր, — զարձագ Վաղենը Մուրագին։

— Բարեկամի մոտ։

— Ի՞նչ մարդ ես։

— Ես աեղացիք։ Առաջ վոստն եյի տանում-քերում։

— Վորաեղից ես յեկել։

— Հեռվից։

— Ի՞նչ հեռու, պարզ ասա։

— Ռուսաստան եյի, Բաղու, Թիֆլիս, Յերևան։

— Ի՞նչ ճանապարհով ես յեկել։

— Սարերով։

— Զանդեղուրով։

— Հա՛։

— Ի՞նչ գիտես։

— Ի՞նչ վոր զուք։

— Մենք ի՞նչ գիտենք։

— Չեմ իմանում։

— Բա խի՞ յես ասում։ Ի՞նչ մարդ ես։

— Ի՞նչ մարդ։

— Հա՛։ Բայլեմի՞կ ես։

— Բայլեմիկ չեմ ... Դաշնակցական ել չեմ։

— Դաշնակցական ել չեմ ... լսի, լսի ... Բա ի՞նչ ես։

— Ակի, ի՞նչ ... Գնացել եյի ոտարություն՝ մի կտոր հացի հետմափց, բայց ենուեղ ել հացի սով ե ...

— Զճարեցի՞ր։

— Ենքան ել հեշտ չի։

— Հիմա ինչի՞ յես յեկել ենուեղ։

— Հայրենիքս ե, ծննդավայրս, քաշեց-քերեց։

— Հա՛, եղ բավ ասացիր ... ամեն հայի, ամեն լավ հայի։

Հայրենիքը պետք և քաշի, թե չե զիտե՞ս, եղ շուն շան վորովի բայլչիկները վոչ հավատ են հարցնում, վոչ հայրենիք: Դավաճանն շներ ... յերկու կապեկով ամեն ինչ կծափեն:

— Ուր, յես զբանց... — Դաշյանը գուրս քաշելով ու ներս խրելով պատյանը, մոռած կուրս Խաչոն:

— Հա՞, բա ինձ ինչի՞ յես կանչել, են Ել զինվորներ ես ու զարդել հետեւյու:

— Մեկմեկ պատմիր ինչ դիտես:

— Բան ել ա չգիտեմ:

— Առա ես ասում:

Մուրագը մի վայրկյան լուս նայեց նրա վրա ու շուռ յեզօվ, վոր զէա:

— Տղե՛րք...

Դասի մոտ կանգնուծ յերկու զինվորները կտրեցին Մուրագի ճանապարհը:

— Ի՞նչ ես ուղում ինձնից, — Հետ զառնալով հարցրեց Մուրագը:

— Դու բայլչիկ ես:

— Ե՛, Հետո:

— Ասու, բայլչիկ ես:

— Զե՛:

— Ասա՛, յես ամեն բան զիտեմ: Եղ ի՞նչ ես դիմիդ հազար զեղացիներին: Ինչի՞ր ես զուրս տվել:

— Գլխիս մարդ չեմ հավաքել: Ինչ վոր տեսել եմ, ծանոթ, բարեկամի պատմել եմ:

— Դու հայ ես, չե՞:

— Ի՞նչ հայ: Աղքատ մարդ եմ:

— Աղքատ մարդն ել յա՛ հայ ե, յա՛ թուրք, յա՛ ժլթոնի:

— Մեկ ե, աղքատն աղքատ ե:

— Կոյս ... Մերա՞մ, ես զբաղան բայլչիկ ե:

— Բաենց ա յերեսում:

— Բահտարկիել:

— Ախար ինչի՞:

— Զայնդ:

Մուրագի ձերբակալվելու լուրը կոյձակի արագությամբ:

Յերեկոյան վարպետ Ռհաննենց թոնքատանը հավաքվել ելին
Մուրագի կողմնակիցները և մասմում ելին՝ ի՞նչ հարցով ազա-
տն Մուրագին:

Մի քանի բոպե բոլորը լուս ելին: Ճնշմած տրամադրություն
եր տիրում:

— Բայ ի՞նչ անենք, — ընդհատեց Հարումնեց Յեղիսն:

— Գիշերով վրա տանք, դուռը կոտրենք, յա պատուհանի
յմրկաթե ձողերը հանենք ու յալլա՛, առաջարկեց Փալանդուկնեց
Հաղոն, վորը նոր եր կաղզուրիկ Վաղենի տմարդի Ներից
Հետո :

— Աղա՛, Հաղոն, դու լոփ դիմ ես: Եղ Հո նշանակում և ինք-
ներս մեր վասով գնանք ու թալաք ընկնենք: Փոխանակ նրան
ազատելու, մենք ել ծուլակն ընկնենք, մի 10—15 հրացան ու-
նենք՝ են ել տանենք նրանց տանք ու դատարկ նստենք ... Քյալ-
բագյոպություն պիտօք չի, Հարկավոր և մի լավ չափենք, ձենք,
վոր խաթի մեջ չընկնենք: Մեր «կամավորներին» պետք չի դուք
տեղը վասնողի յննիւարկել:

— «կամավորները» թող իրանց տեղներումը մնան, յես իեր-
թառ: ո՞վ և զալիս հետո:

— Այ, Հաղոն, ախար հա նոր ես վեր կացել տեղաշըիցդ,
ուղում ես բանեն, տիկ հսնե՞ն:

— Հիմա տսերդ ի՞նչ ա: Զեռներս ծալմնք, նստենք ու ապա-
սենք, թե խմբապետ Վաղզենն ի՞նչ և բարեհաճելու: Մեկ ել տե-
սար մեկն ու մեկը մասուղերը քաշեց ու ... Սաղ որը լավկում են,
ի՞նչ ասես, վոր մեռներիցը չփա: Առանց են ել ենակն են դազա-
գել, ել հետեւրը խոսել չի լինեւմ: Բան ես տում: դուռում են ու
մորակով հասցնում, հոտ են առել:

— Աքենի լավ կլինի մի փորձենք մեկն ու մեկին ուղարկել
մստը, բալքի հենց առանց են ել աղատվելու յե:

— Խելքս բան չի կարում: Սաղ տունը խուղարկել, տակն ու
վրա յեն արել, թե մի բան ել գտած լինեն, հո ...

— Եսո իերթառ: Եղ լավ առաջարկ ե, մի փորձենք: — Նո-
յեմը, վոր մինչեւ այդ լուս եր, մի քայլ առաջ յեկավ:

— Դո՞ւ:

— Հա՛: Ի՞նչ կա վար ... Տղամարդ չուղարկենք, կատածդի
տեղիք շտանք, իսկ ինձ ի՞նչ պիտի անի:

— Մենա՞կ:

- Ի՞նչ կլինի :
- Արի՛ սկսուրդ ել դա, յա Ոհանի մէրը :
- Ինչի՞ համար :
- Կասեն աղքական ե :
- Բա աղա Վոսկանը մեռած ե :
- Հա՛, եղ ել կա :
- Զե՛, յես մնակ կերթամ : Թե բան դուրս չեկավ, Հոգո, ախպոր տառձն անենք, ուրիշ ճար չկա :
- Հւա մի եղ փորձենք :
- Փորձենք :
- Վորոշեցին վաղը Նոյեմը գնա Վազգենին խնդրեի, վոր բաց թողնի :
- Մեկմեկ դուրս յեկան, զգուշությամբ չորս կողմերը նոյենիվ, և ու են պատերի վրայից փողոց իջան ու ցրվեցին :

Առավոտը վաղ Նոյեմը մի քանի անգամ զնաց դաշնակների շառքի կողմը, բայց առացին, վոր խմբապետը գեռ չի յեկել: Մի տնօթամ ել յեկավ, կանգնեց փողոցում, դռան դիմաց, պատի տակ սպասելու:

Քիչ անց՝ աղա Վոսկանի տան դարպասից դուրս յեկան Վազգենը, կորու Խաչոն ու Սմբատը:

Նոյեմի սիրտը սկսեց արագ-արագ բարախել: Մաքերը խճընեցին գլխումը և կարծես մոռացավ, թէ ինչու և յեկել, ի՞նչ պիտի ասի:

Նրանք մոտենում եյին և արդեն դարպասից ներս եյին մըսնում, վոր Նոյեմը սիրտ արագ ու կանչեց.

— Պ. Խմբապետ :

— Ո՞վ ե, — Հարցրեց Վազգենն առանց կանգ տոնելու և ներս մտավ :

— Ի՞նչ ես ուղում, — Հարցրեց Սմբատը՝ վոտը դժմ տալով :

— Գործ ունեմ խմբապետի հետ :

— Ասա՛ :

— Խմբապետի հետ :

— Ինձ ասա՛ :

— Անձամբ եմ ուղում տեսնել :

Այդ բոսելին նրանց մոտեցավ աղա Վոսկանը, ծուռ-ծուռ նայեց Նոյեմին ու ժպտաց :

— Բարեւ ձեզ, ով, վոսկա՞ն :

— Բարի լույս ... հը՛, ի՞նչ և ուզում :

— Ամբապետին և հարցնում :

— Բա խի՞ չես թողնում :

Նա աչքով արեց ու ներս մտավ : Սմբատը վոտից դլուխ չափեց նոյեմին :

— Հը՛մ ... վոչինչ ... մի քիչ սովասիր, — ասաց ու շրթունք-ները լպատելով՝ ներս գնաց :

15 բռնի անց, մեկն յեկալ, թե ներս մտիր, կանչում են : Նոյեմը մի քայլ արեց, զինվորը կանդնեցրեց .

— Ի՞նչ գործ ունես խօմբապետի մտա ... Մարդուցդ ևս ուզում բաժանել, թագաւ մարդ ես ուզում, հա՞ :

— Զե՞նդ, թուլա ...

— Վո՞ւյ, ... հա՞-հա՞ ... լա՞վ, լա՞վ, անց կաց :

— Նոյեմը դիմեց գեպի գրասենյակ : Դուռը փակ եր : Կանգ առավ գուան մոտ, հիշեց այն որը, Մակիչին, գեմքը ծամածովեց զրվանքից ... կարծես ելլ Մակիչը պետք ե զուրս զա առաջը և նրանից պիտի խնդրի : Բայց սթափովեց, հիշեց, վոր Մակիչը չկա, խմբարես Վաղգենի մոտ և յեկել և համարձակ ներս մտավ :

Աղա Վոսկանն ու Վաղգենը աեղանի դանազան ծայրերին նստած, գլուխները կախ՝ նոյում եյին հատակին : Նոյեմը վոր ներս մտավ, յերիւսն ել միանդամեց կասես խոսքը մեկ եյին արել — բարձրացրին գլուխները և յերկար, լուռ, շեշտակի հայացքները հառեցին նրա վրա :

Նոյեմն սուած դիմացավ այդ հայացքներին, ապա կարմրեց, շխոթիլեց ու ակամա խոնարհեց աչքերը :

— Պ. Վոսկա՞ն, ճանչո՞ւմ եք ես կնոջը :

— Դիմում, — քմծիծաղով ասաց Աղա Վոսկանն ու մի պլուզ քմախոս քաշեց քիթը :

— Ինչի՞ համար ես յեկել :

— Պ. Ամբապետ, են խեղճ մարդուն ...

— Ի՞նչ խեղճ մարդ :

— Մուրաղը :

— Ի՞նչ Մուրաղ : Մուրաղ — բան չդիտեմ :

— Պ. Ամբապետ, մի քանի որ և, կանչել եք ու բանուար-կել : Ի՞նչ մեղք ե զործել, վոր քանի որ և բաց չեք թողնում :

— Հա՞ , հասկացա ... Բայլէնիկ ե :

— Բայլշենկը վո՞րն ե ... եղալիս բան չկա:

— Դու ի՞նչ դիմես: Քու ի՞նչն ե, մարդու ե՞:

— Զե՞:

— Բա խի՞ յես յեկել:

— Զահել, սիրուն աղա յե, վոնց թե ի՞նչն ե, ոլ. Վաղչեն, միամիտ հարց ես տալիս: Են մեկը շատ ուշացավ, մինչև յե՞րբ սորսի խեղճ կինը—ջահել, սիրուն ... Թո՞ղ, թո՞ղ զնա: Բաց ժո՞ղ, մեղք ե: Բարի վայելում: Մեջ մտավ աղա վասկանը՝ մի րդիք ժպիս գեմքին:

Նոյեմն ատելությամբ ու զայրույթով լի մի հայացք ձգեց վասկանի կողմը, վոչի՞նչ չասավ ու կրկին դարձավ վաղքենին.

— Ազդական ե, սրիչ մարդ չունի բեղումը:

— Դու դիտե՞ս, վոր մոտը թղթեր ենք բռնել, բայլշենիկ ե: Երան պետք ե կախեմ, յա դնդակահարեմ: Երան կհարցնեմ, թե վորն ե սիրում:

— Ամա՞ն, ոլ. խմբապետ...

— Զինարու տակ, հաւափարակում, աղբյուրի գլխին, վոր ժողավարդը տեսնի ու խրատիփի: Արդի, հայրենիքի զտվաճաններին խնայել չկա ... զուր ես յեկել:

Ասաց ու արագ դուրս դնաց, սովորն ել հետեւցին նրան ու դուռը փակիվեց:

Սենյակում մնացին Նոյեմն ու Ազա վոսկանը: Նոյեմն անշարժ կանգնած, հայացքը դեպի դուռը, վորտեղից անհետացավ վաղքենը:

— Հա՛ հա՛ հա՛ ... Հը՛, ի՞նչ կասես, Նոյեմ, աչքիս լուս:

— Սուս ե, նա եղալիս բան չի անի, ինձ ուզեց վախնցնել:

— Կանի, կանի:

Նոյեմը դարձավ ու հանկարծակիի յեկարդ, տեսնելով աղա վոսկանին, վորի գոյության մասին մոռացել եր:

Աղա վոսկանը՝ աթոռի վրա նստած, մի ձեռքով հենված ծնկանը, հոհուում եր:

Նոյեմն առանց նայելու նրա վրա, դնաց դեպի դուռը:

— Կաց, Նոյեմ, մի վուաղիր, կա՛ց, իմ ձեռքին չի՞: Կասեմ, կազմատի:

— Ազա վոսկան, մեղք ե, մի թողնի, գիտեմ քեղանից շատ բան ե կախված:

— Կախված ե, բաս: Կուղեմ՝ կթողնեմ, վոր կախի, չեմ

ուղի՝ չեմ թողնի ... Բա, եղանս ե : Մոտ արի, գիտեմ՝ նեղացել ևս ինձնից : Են հարամզադա Մակին են ի՞նչ դալաթներ ե արել : Իմացել եմ : Լավ կերցրի, ել չի համարձակվի : Նոյն՛մ, ախար եղ ասոված չի վերցնի : Ես ա քանի՛ տարի ե երջում, խորովում եմ քեզ համար, իսկ գու սկի այնումք ել չես դցում . թեկուզ սառկեմ, քեզ համար ի՞նչ թափավութ : Ուրիշ կնոնիք իրանց բախտավոր են համարում, վոր նայում եմ նրանց վրա :

— Ելի պնա, նրանց բախտավորացրու :

— Նոյն՛մ ... Նոյն՛մ ... ինչ ասես, ինչ ուզեղ կանեմ : Աւզում հս՝ պատակվենք ժամ ու պատարագով, որինավոր, կուղես՝ ենակես, սուս ու փուս, վոր սկի մարդ չիմանա : Կուզես ... մի խոսք ասա, ևս սահաթիս հրաժայիմ Մուրագին բաց թողնեն : Հախ ասաված, իմ մեղքս դալիս ա ... Ասա՛ ... ինչ սիրող տալիս ե՝ ասա՛ ...

Նոյնմը լուս նայում եր : Վաղքենի սպառնալիքը մեխի պետքվել եր գլխում, լսում եր՝ չեր հասկանում աղա Վոսկանի առածները, շշմածի պես կանզնած եր : Աղա Վոսկանը, խրախուս վեճով նրա ըսումբյունից և արդ համաձայնումբյուն կարծելով, տեղից վեր կացավ ու կամաց-կամաց գնաց դեպի Նոյնմը : Բանեց ձեռքը, քաշեց գեպի իրեն ...

Նոյնմը սթափվեց՝ կարծես խոր քնից . ոձի կծծածի ովեադուրս պրծառ ու մի կողմ ցատկեց՝ Թույլ ճիչ արձակելով, սեղանի վրայից մի բան վերցրեց, թազցրեց ծոցում :

— Զմոտենա՛ :

— Նոյն՛մ, Նոյն՛մ, մատա՛ղ, լոի՛ր ...

— Զմոտենա՛ :

— Ե՛յ, շան քած, հերի՛ք ե, ել չես կարող սպառավել : Ճանիս ևս բնկել, զուր ե ...

Նոյնմը վազեց գեպի դուռը, սկսեց չարչարպել, բայց դուռը դրամից փափված եր :

Վոսկանը հասավ, ուզեց գրկել Նոյնմին ... Նոյնմը հուսահամած, վոր փախչելու յելք չկա, հետ դարձալի ու ճշաց .

— Հետո, թե չե կիսինմ, ատրճանակը, վոր սեղանի վրայից վերցրել եր, գեմ տօնից աղա Վոսկանի կրծին :

Աղա Վոսկանը գունատ հետ-հետ գնաց ու կպայլ պատեմ :

— Ասա՛ — գուռը բանան :

Աղա Վոսկանը լուռ եր :

— Շու՛ռա:

Ասորճանակով նա սկսեց նրան հալածել դեպի դուռը: Աղա
Վոսկանն անթարթ նրան նայելով՝ հետհետ դնաց ու կպայ
դռանը:

— Ե՞ր, ո՞վ կա եկտեղ: — Նա մեջքով մի քանի անգամ դու-
ռը բաղիսեց:

— Աղա Վոսկա՞ն:

— Բաց, յիս եմ:

Դուռը բացվեց, աղա Վոսկանը դուռս յեկավ դռնից ու շեմ-
քի վրա իրան ապահով զգալով, կանդ առավ ու վորոտաց.

— Բոնհցե՛ք եղ քածին, ասորճանակ քաշեց վրաս...

Ամեն որ նոր, տաղնապալից լուրեր ելին հասնում Վաղքե-
նին:

Աղքենջանը խորհրդայնացել ե, Վրաստանը, հյու ասում են
Հայաստանն ել և խորհրդային դառել: Դաշնակների բանակը չի
կռվում բայլեվիմների դեմ: Փախչում են դիրքերից. շատերը
միանում են Կարմիր բանակին. դասալքությունը դարձել ե հա-
մատարած: Ամեն տեղ ժողովուրդն ապստամբում ե ... Նա չեր
համատում արդ լուրերին և աշխատում եր, վոր չտարածվեն.
դրա համար ել, բացի կոլոտ Խնչոյից և Սմբատից, մյուսներից
ծածկում եր ու Խնճավստահությունը չկորցնելու և անփույթ
յերեալու համար՝ խմում ելին, հարրում, հայոյում բայլէկիմ-
ներին, լուրպաղանում, թե «Ծող մի ոեիները ցույց տան, մոմեն-
տում կջարուենք»: Բայց վախն ընկել եր ջանները: Մրագրում ե-
լին, թե՝ բան ե, զալու լինեն, վոր կողմի վրայով փախչեն, ինչ
տանեն, ինչ թողնեն. աղա Վոսկանին ու մյուսներին ատեն, թե
սուս ու փուս ծլկեն... Վազգենին մի ուրիշ քան ել եր վրդովում
ու փշացնում տրամադրությունը: Քանի որ ե Վարսիկը կարծես
թե խուսափում ե իրանից, տեսակցության չի գալիս, իսկ Վաղ-
գենն ենակես տաքացնել եր, վոր մեկ ե, թե կամքով բան դուրս
չգար, վճռել եր փախցնել...

Իսկ աղա Վոսկանը թեև յերեսանց սիլի-րիլի յեր անում,
գլուխը շոյում, բայց մտքինն են եր, եսորեգուց դցելով՝ գլու-
խը թլորի, մինչև տեսնի. ինչ ե զուրս դալիս ... մինչև թաղա-

վորը թափափն նստի, մինչեւ պրիստավ, բան գան ու յափեն թափ տա դրանցից : Բաենց զյազաւուզաների նա աղջիկ չի տա...

Կտուկածն ընկել և Վաղգենի ջանը : Աչքին ամեն աեղ բայլ-չելիկներ են յերեսւմ : Փոզոցում շարունակ զես ու դեն եր հայում՝ տեսնի՝ հա մի վորեն քանդվածի պատի արանքից չեն խիելու : Վորտեղից եր զլուխը մտել, թէ իր կյանքի դեմ մահափորձ և սրատառապալում . և առանց կոլոսի ու Սմբատի փողոց չեր դուրս գալիս :

Բայլչելիկներ կան : Ես զյուղն ել, ձորի բոլոր զյուղերն ել վարակվել են : Բայլչելիկները են բաւն զրել, պետք և դունել դրանց բուն ու քար ու քանդ անել : Եղ նրանք են, վոր զողուում ու տոստամբության են դրսում, ժողովուրդն ել են չի, հանդատացել ե : Այ, մեկը հենց եղ Մուրադը : Նա նոյնմին վախեցնելու համար առաց, վոր պիտի կախի, բայց հանկարծ այդ միտքն այնքան զուր յեկավ, վոր վորոշեց իրազործել : Հա, հա, եղ մեկին պետք և կախել տամ՝ հրապարակում, բոլորի աչքի առաջ, վոր ւարդանդը մտնի ջանները, վոր յեթե մեկը կա, վորի միտքը ծուռն ե — հետ կանդնի, տեսնելալ, վոր Վաղգենը կատակ չի անում ազգի դաւաճանների վերաբերմաբ : Նա կարծես ուրախացավ այդ զյուտի վրա և թվաց, թէ Մուրադին վերջացնելով՝ վտանգն ել ընդմիշտ կոչներան : Կանչել ավեց կոլոս Խաչոյին ու Սմբատին, հայտնեց, նրանք ել հայանությունն ավին :

Գիշերը կեսից անց եր, բայց նրանք չեյին շտապում : Մի չիւ կոնյակ դատարկեցին, բարի գիշեր ասացին ու ցրվեցին :

Վաղգենը մնաց մենակ, շորերը հանեց ու պառկեց : Դեռ ու դեն շուռ յեկավ, բայց քնել չկարողացավ : Նրան ի՞նչ սպասահեց . հո՞րից և վախենում, թէ ի՞նչ ե ... հանկարծ նա մի այնպիսի կարոս դրաց, վոր չկարողացավ պառկած մնալ . վեր կացավ, մի քանի անդամ շապկանց անցավ սենյակի յերկարությամբ ու մի բան վճռելով՝ նստեց սեղանի առաջ, մի թուղթ վերցրեց, գրեց, ջնջեց, պատռեց, մի ուրիշը վերցրեց :

«Վաղը գիշերը թէ չի ջնեն տեսակցության — շատ կարեւը բան ունեմ տակու, — կնշանակի չես սիրում ինձ, և յեթե հնարավոր չեղավ, ընդմիշտ հեռանալու յեմ . ել չեմ կարող, տորմանակը վերցրեց, գրեց, ջնջեց, պատռեց, մի ուրիշը վերցրեց :

Մի քանի անդամ կարգաց ու զոհ մնալով, ժպտաց և պառկեց, մտածելով վաղը մի կերպ հասցնել Վարսիկին :

Նոյնիմի սկեսուրը և Ռհանի մայրն յեկան Վաղբենի մոտ իմանալու, թե ի՞նչու յեն նոյնիմին բռնել:

— Աղա Վոսկանի վրա զենք և բարձրացրել:

— Ի՞նչ զենք, ո՞վ և նրան զենք տվել:

— Ի՞նչ և պատահել վոր … առանց պատճառի ինչո՞ւ պիտի զենք քաշի:

— Սուտ բան և, մի հավատա՛, նա զենք չի ունեցել:

— Ինչո՞ւ թե սուտ և ձեռքին բռնել են, թե սուտ և, զենք չուներ. իմը տեսել եր սեղանի վրա, վերցրել և:

— Պ. Խմբաղը՛տ, անտեր, դժբախտ կին և, յեթիմների տեր, մի անի եղ բանը, հալրաթ մի պատճառ յեղել և, թե չե զուր տեղն ո՞վ ում վրա զենք կրարձրացնի: Տուր տանենք, ես ապիտակ մաղերիս խնայիր: Շատ դարդ ու ցավ եմ տեսել, եղ ել թող չովիլանա, աչքերս խալիսի դռներին թոնրի կրակից երլեզ ու քուացել եմ, իմ թոնրի ծուխը կտրվել…

Խնայի՛ր, դու յել մեր ունես, չե՞ … Նրա սիրուն, հիշիր նրան ու ինձ խղճա, ինձ չե, նրա յերեխոցը բաշխի. Թե մի զալաթ արել և, դու յել դիտես, վոր առանց պատճառի չի լինի: Նա ո՞վ, աղա Վոսկանն ո՞վ … Նա քեզ մոտ եր յեկել, աղա Վոսկանի մոտ ի՞նչ գործ ունի, չեմ հասկանում … խնայի՛ր ծերուաթյունս, տուր՝ տանենք, ախար մենք ել նամուտ ունենք, դետնով մի տա՛: Յերկու-յերկու պառակ յեկել, վոտներդ ենք ընկել…

— Բոլո, ել սրբա չունեմ դիմանալու, Սմբատ:

Ներս մատվ Սմբատը:

— Կոլոտին առա, են կնկանը տա ես պառավներին: Ասա՛, նրան չե, սրանց եմ խղճում ու ես պառավլ մայրիկների պատիվն եմ պահում: Հայ մայրեր են, վոտս են յեկել, բա կթողնե՞մ, վոր դուր անցնի:

— Բա … բա աղա Վոսկա՞նը, — կմկմաց Սմբատը:

— Ի՞նչ աղա Վոսկան, ինչ ասում եմ, արա:

— Աչքիս վրա՛:

— Աստված ումբրդ յերկար անի … աստված մորդ սիրան ենպես ուրախացնի, ինչպես դու մեղ …

— Շնորհակալ ենք, վոր խնդիրներս գետնովը չովիր … ապրե՛ս, զորանա՛ս, — ասաց Ռհանի մայրը:

— Գնացեք … Մայրերի խնդիրը սուրբ և ինձ համար …

Ե. Ֆանկւլան—Անուղատը կծաղկի—8

Գնացեց բարով ու խրատեցեք, վոր դպուց լինի, թե մի անդամ
և բռնվել ե, ել չեմ խնայի ... եղ Մուրադը գրա ի՞նչն ե:

— Ազգական ե ... բա են խեղճին խի՞ ես բռնած պահում:

— Խեղճ: Հա՛, Հա՛, խեղճ ... Նա չուն ե, աղջի դավա-
ճան ... Նրա դատը շուտով կանեմ ...

— Յանի մի բանի մեջ մեղալո՞ր ե, թե՞ ...

— Նրա մասին վոչ մի խոսք ... Գնացե՞ք:

Յերկու պառավները խորը զլուխ տվին ու որհնելով, դուրս
յեման:

Վաղենը նրանց գնալուց հետո ձեռները շփելով, ինչն իր
մեծահոգությունից հիացած՝ ժարուց հաղթական ու նաև սե-
ղանի առաջ: Տասը բռակ չեր անցել, վոր կատաղությունից, ու-
րագ չնչելով ներս մտավ աղա Վասկանը:

Նա լուռ նոտեց, մի քանի վայրկյան նայեց Վաղենին,
Նյարդային կերպով հանեց խթախտի ամանը, բացեց ե, իրեն
չիարողանալով զավել, ամուր փակեց կախարիչը, վորի յերավ
ու ատամների միջից, կատաղությունը զսմելով, վսաց.

— Բաց թողէր ... Խոռա, պատիս դեմույլ ավիր ...

— Պ. Վոսկան, դուք հո դիտեք, վոր եղ կին անմեղ ե ...
Հայ կինը պաշտպանել ե յուր պատիսը, նա հերոսուհի յե ...
Պահասել ե՞ն հերոսուհիները մեր աղջի միջից ...

— Հա՛ ... Խե լա՛վ ...

Նոյնմը բանտարկությունից ազատվելուց հետո ել հանդիսա-
ու դատար չուներ:

Յեթե կիսախելազարը, հարբածը հանկարծ ուղենա իրազեր-
ծել յուր սպառնալիքը ... Վո՞չ, այդ անելարիքի յն: Գետք ե ամեն
միջոցի դիմել՝ Մուրադին ազատելու համար: Արդեն հինգ որ
ե, ինչ նա բանտարկված ե թելի գործարանի նկուղներից մեկում,
վորը Վաղենը բանոի յեր վերածել:

Նոյնմն ամբողջ որը վազվղում եր սրաներս մոտ, հայտնում
Վաղենի սպառնալիքը և պահանջում, վոր ինչ ել լինի՝ ազատեն
Մուրադին:

Պարզեց, վոր այդ որը Մուրադի կամավոր աղաներից եր
պահանջ կանգնելու, վորոշեցին պիշտը հարմար առիթից ողովե-
լով, իջնի ու պատուհան ից հետո խոսի:

Հետեւյալ որը պահակը հայտնեց, վոր Մուրադն առայժմ արդեխել և զենքի ուժի դիմել, վոր շատ զբուցչ աղիտի լինեն, վոր պեսդի չմանմին: Մոտ ժամանակները շատ հարկավոր են դալու, այ, են ժամանակ թող քաջությունը ցույց տան:

Պատմիքել ե, վոր ըրջակա դյուղերի և Ռ. քաղաքի թուրքերի հետ կապ պահեն, չինի թե խարջեն պրովակատորներից և հայ ու թուրք իրար խառնվեն:

Գեաք ե զղուշացնել, քիչ ե մնացել, մերոնք կդան կհանեն ու եղ դաշնակ ու մուսավաթին խոփի կամ պապերի ծոցը...Ասավ, կամավորներին տառ՝ շատ զբուցչ լինեն, չինի թե բերաններիցը մի բան թոցնեն ... Կերակուրի համար, ասավ, շնորհակալ լինեմ ... զուր են նեղություն քաշում: Հաց, ջուր տալիս են:

— Կուա՞, թե չե՞...

Նու տեղը դադար չեր անում: Նստում եր, վեր կենում, մոտենում պատուհանին ու ճակատը ապակում սեղմած, հայացքը մթության մեջ սուզած՝ յերկար մնում եր կանգնած:

— Իսկ յեթե չդա՞:

Դեռ շուտ ե: Նորերում լուսինը մայր մտավ: Մառերը թանձր քողավ վաթաթվեցին՝ ճռիկները, կարծես հողնած, մեղմացրին իրենց մնասան յերգը մի գորտ առմի միջից ձայն տվեց, նրան սրասասիսնեց մի ուրիշ՝ բակի հակառակ կողմից: Խաղաղ, անդորր զիշեր եր: Ազբյուրը կարկաչելով թափում եր, և ջրի ձայնը, ինչպես մի հին, անպաճույց հեցյալ, բաներ եր պատմում:

Վաղքենը հանկարծ աղոկից լուսամուտից, լարեց լսողությունը, մի բուք պալատղական դրության մեջ մնաց քարացած, բայց հուսախռոված՝ նյարդային մոտեցավ սեղանին, մի գավաթ կոնյակ կուլ տալից, վառեց ծխախոտն ու իջավ բակը, վորակեսովի թարթ ողում մի քիչ թարթանա և կործի այս յերկար աղասողական ժամերը:

Նու հաղիս եր իջել, հաղիս յերկու քայլ եր արել, վոր մթան միջից մեկը դուրս սողաց ու վաթաթվեց նըա վզովը: Զեռքի ծխախոտը մի կողմ թռամ՝ լուսատակի նման շողալով, այնքան

արադ կատարվից, վոր նա ժամանակ չունեցավ այդ անսպասելիությունից վախճառալու:

— Վարսե՞կ, — շնչաց նա և այնպես ամուր սեղմեց նրան կըծքին, վոր կարծես ուղում եր ձուլել իր հետ:

Ցերկար նրանք անխոս ելին:

— Դու ինձ չես սիրում ... մոռացար: Ցեղե այսոր ել չպայիր ... շշուկով ընդհատեց Վազգենը:

— Եուու, — ասաց աղջիկը, շրթունքների միջից շնչում եր բերանը:

— Թող հայրս ինչ ուղում ե անի ... յես քոնն եմ ... Ա՛ռ ինձ ...

— Վարսե՞կ ... Վարսե՞կ ...

Վարսիկը կատայի նման դալարվում եր նրա պրկում: Ամուր գրիել եր պարանոցը և կիսաբաց շրթունքների միջից շնչում եր.

— Սիրո՞ւմ եմ ... Սիրո՞ւմ եմ ...

Վազգենը՝ գլուխը կորցրած՝ բարձրացրեց նրան յերկու ձեռների վրա, ինչպես վոքրիկ յերեխայի և կըծքին սեղմած՝ զնաց գեղի աստիճանները, բարձրացավ, մտավ յուր սենյակը ...

Աղա Վոսկանը կատաղած եր Վազգենի վրա: Այն որը, յերբ նա յուր կամքի հակառակ նոյեմին աղաստեց կալանքից, պատրաստ եր հարձակվել, բռնել բկից, սեղմել պատին ու խեղդել: Բայց նա, իհարկե, այնքան խելոք եր, վոր չարավ այդ, թեև ինքն իրեն ուստում եր և առիթի սովասում, վոր յերեսովը տա, վրեժը լուծի: Քունը կտրվել եր, ախորժակը վակըլել: Դրսից յեկած լուրերն ել մի կողմից ելին նրան անհանդստացնում: Տղայից ել վոչ մի լուր: Ի՞նչ յեղավ, վողի և, թե՞ մեռած: Վարսիկն ել որ-որի վրա նիհարում ե: Նա դուշակում եր աղջկա վլատի պատճառը, բայց ինչպի՞ն իր ձեռքով վերցնի ու Վազգենին տա այդ դանձը, մանավանդ հիմա, յերբ նրանց դրությունը այնքան խախուտ ե թվում: Աստված դիտե, յերկար կդիմանա՞ն... Այդ մտքերն ելին պաշտերել նրա ուղեղը:

Շատ դես ու դեն ընկավ. քունը չեր տանում: Վեր կացավ տեղից, գիշերային խալաթը հազար, մի անգամ անցավ սենյակի յերկարությամբ ու դուրս յեկատ պատշամք: Վո՞չ մի ձայն,

միայն աղբյուրն եր կտրկաչելով թափառում և ներդաշնակում այդ լուսթյան հետ:

Մի քիչ մեաց կանոնած՝ սպիտակ սյունի մոտ լուսինը դանդաղ սահում եր յերկնօքով: Մի սե թուզուն, ամուր թափահարելով թերը, անցավ նրա գլխի վրայով և անհետացավ պարսպի այն կողմում: Աղա Վոսկանի մարմնով սարսուռ անցավ: Նա խոժուց դեմքն ու սկսեց խառնել խալաթի գրապանը: Զգտնելով, նա մտավ սենյակ, անկողնի մոռի կլոր, ցածլիկ նստարանի վրայից վերցրեց քթախոտի տուփը և ինքն ել չղիտեր ինչու՝ դուրս յեկալ սենյառից: Մութ նախասենյակով անցնելով, սկսեց աստիճաններով ցած իջնել: Կանոյ առավ առաջին հարկի նախասենյակում: Վաղդենի սենյակում դեռ լույսը չեր հանգել: Նա մոտեցավ սենյակի դռանը, ուզեց ձայն տալ, բանալ դուռը, կրկին անգամ հայտնել նրան յուր գժուհությունը, հայտնել յուր կառկածները ... վերջապես մի ճիշտ բան լսել նրանից այդ բոլոր տարածված լուրերի առթիվ: Նա ձեռքը մեկնեց, վոր դուռը բանա, բայց սարսափած հետ-հետ գնաց ... ինչ վոր չարագուշակ շշուկ հասավ ականջին ... Նա չհավատաց յուր լսածին, նորից մոտեցավ դռանը ... նորից հետ-հետ գնաց ու կընկներ, յեթե դեմ չառներ դիմացի պատին: Մի բոլե մնաց լուռ, պատին կպած ու հանկարծ մոնչաց ահռելի ձայնով, մի ակնթարթում հարձակվեց Վաղդենի դռան վրա, յերկու բոռնցքով հրեց դուռը և մնաց չեմքում...

Աչքերը մթնեցին, դլուխը պտույտ յեկալ, ուզեց հարձակվել, տեղն ու տեղը վոչնչացնել, տրորել յերկուսին ել, բայց ուժասպառ ընկավ դետին, ծանր ու խորը սկսեց հւալ, ինչպես տասնյակ մղոններ մտրակի հարվածների տակ անցած, ուժասպառ յեղած ձի:

— Պապա' ... — Ծաց Վարսիկը և ընկավ ձնկաչոք հոր մոտ: Աղա Վոսկանը յերկու ձեռքով բռնեց աղջկա գլուխը, մի բոլե լուռ, անշարժ հայացքով նայեց նրա աչքերին, ապա հետ մղեց աղջկա գլուխը, ձեռները թուլացած ցած ընկան, կուչ յեկալ, զլուխը կախեց կրծքի վրա և առաջին անգամ կյանքում այդ ապառաժի պես կարծր մարդը հեծկլտաց յերեխայի պես ...

— Պապա' ... պապա' ... ների՛ր, ... ների՛ր. կամ սպահիր ինձ, կամ ... յես չե՞մ կարող առանց նրան ապրել:

Աղա Վոսկանը կարծես տասը տարով ծերացել եր: Քունքի մազերը մի քանի որում մերժակել եյին: Քայլավծքի մեջ առաջ վա ինքնախոռահությունը չկար: Առօսիս ճայնը դողում եր:

Նա ակամա եր քայլում, նա մտադիր չեր դնալու, բայց մի քանի անգամ ուղարկել եյին հետևից և ստիպված դուրս յեկավ տնից: Նա չեր ուղում հանդիսել Վաղրինին, չեր ուղում տեսնել նրա յերեսը, թեև զդում եր, այլևս ապաթուուն և զիմառել և դուր և տանջում իրան, պետք և համաձայնին, ինչքան ել դա տհաճ լինի իրեն ... Բացի այդ, շատ լուրջ պատճառներ կան, վոր նա պէտք և մոռացության տա յուր անձնական վիրավորանքը, շամբ: Վատանգ կա, տապալվում և յուր զառակարգը: Պետք և լարեն իրենց ուժերը, զրավնն, կաշառեն միջակներին, ընդհանուր ուժերով գեմ կանդնեն բայլչիլին և թույլ չտան, վոր նրանք զան ու տկարեների իշխանություն հաստատեն ... Նա չեր ուղում հավատալ, վոր դա հնարավոր և, բայց վաստերը դաժան եյին, իսկ յեթե ճիշտ և, ինչ համբաւին և պատմում, առա Վոտկանի և մյուսների յերդը յերդված և: Վատանգն այնքան մեծ եր, վոր նա չեր կարող անտարբեր մնալ, յուր անձնական վշտի հետ և մոռանալ պատճառըն չահը...

Այդ մտքերի մեջ խորասուցված՝ նա խորհրդակցության եր ընում Վաղգինի մոտ, վորին ուրիշ պայմաններում կտրոքեր, զետնին միջավառարեր, կմատներ ոլրիստամի ձեռքը և կտղատվեր այդ պառուտախոս, լրտած գյաղալից, վոր մեծ-մեծ եր ըրրդում, իսկ այժմ, յերբ վտանգ և սպանում, ճռւտ և զատել: Կղան, կղզնն այդ մեծամիտներին, իրանց ել կթալանեն և տկլոր փողոց կշպրտեն...

Նա ներս մտավ, լուս մոտեցավ և նստեց քահանայի կողքին: — Ուշացա՞ք, ու. Վոսկան, — զարձավ նրան քահանան:

Վոսկանը վոչինչ չպատասխանից: Նստած եր՝ դլուխը կախ, կարծես ամաշում եր բարձրացնել աչքերը, նայել մարդկանց յերեսին: Նրան թվում եր, թե բոլորը գիտեյին և մտքներում ծիծաղում, ծաղրում, նախառում եյին իրան, վոր պատիսվ գնունովը տվեց և դաշնույնը չխրեց այդ լակտի կոկորդը...

Վաղգինը նրա մտնելուց ընդհատեց ճառը, ծամովեց կանգնած տեղը և աչքերով հետեւեց՝ մինչեւ Վոսկանը գնաց ու նստեց:

— Պ. Վաղգին, շարունակեք, — լսվեց այս ու այն կողմից:

— Նրանք չեն խնայում վոչ ծեր, վոչ յերեխա, — շարունակեց յուր ընդհատված ճառը, — աստվածը մտացած, մինչև կոկորդները խրված անբորայականության ճահճի մեջ, նրանք ըլունաբարում են, Հոչոտում, կացիններով՝ գանդեց ջարդում։ Այդ վայրինների վոհմակը դալիս և վոչնչացնելու մեր կուլտուրան, մեր Հին փառքը, մեր Հայրենիքը և ավելքակների վրա ուղղում է կառուցել չլուսների իշխանության... Մեզ մոտ ել կան դրանցից։ Զիարողացնեք արդեմել, վոր վարակը ներս չսողոսկի մեր յերկիրը. ինչպես ժամանախակի թույն, նա կվարակի, և այլիս անհար կլինի կուլել նրա հետ։ Յանի ուշ չե, պետք և բնում ինդուկել, վոր ճուռեր չհանի այդ ոճը, ճուռը հենց սաղմի մեջ պետք են վոչնչացնել, արօքի հողի հետ։ Բայց վաստերն աղաղակող էն։ Այդ որիկան մորք և արել այսուել՝ վերէ դյուղերում, Ուում, բջիջներ կազմակերպել, զինել մի քանի դյուրահավատ անմիտների ... Բայց սրատես և մեր աչքը և դրանց դավակրական խարդախությունները չեն կարող թագնինել։ Մեր պանծալի բանակը, մեր կուռակցությունը, մեր Հայրենիքի արթուն ուղահակը ջնածչե։ Մի՛ Հավատաք այդ ուսւառ ու մուտ լուրերին. դրանք ել նրանց տարածածն ե ... Նրանք կանգ չեն առնում վոչ մի բանի առջև՝ իրենց նպատակները իրադարձելու համար, բայց մենք այդ տուրաքարչ, վաճակում, սինդրոմ, քաղցած գալիքին հետ կշըլրտենք դեպի հյուսիս, դեպի սառուցների աշխարհը, ուր՝ քաղցից վոռնալով՝ իրանց թաթերը կկրծնն ... Իսկ Հայ ազգի աղուրացներին, Հայրենիքի, Քրիստոսի, Լուսավորիչի դավաճանների գատը մենք մեր ճեռողով կանենք։ Այսպիսի մի ստոր դավաճանան այժմ մեր ճեռքին ե, թող վոչ վոք փորձ չանի նրան կրանք աղերսելու, վորովհետեւ անդառնալի կերպով վորոշված ե նրա մահապատճեմ։ Արդեն ապացուցված ե, վոր նա պատկանում է մեր թշնամի բանակին, և վաղը Սողոմոնի աղքայուրի հրապարակում, բարորի աչքի առաջ, իրեն որինակ այլոց, նա կզնդականարգի, կամ կախաղան կքարձրանա։ Այժմ նրանում չե հարցը, թե անենք այդ, թե չե, այդ արդեն վորոշված ե. մնամ և վճամել, թե վո՞րը դրանցից գործադրել — գեղակահարում, թե՞ կախաղան։

Մուրաղի տղաներից յերկուսը պատի տակ կանգնած՝ լսում եցին Վաղդինի վոգեռոված ճառը։ Նրա վերջին խոսքերի վրա այլայլեցին և նայեցին իրար. մեկը աեղմեղ մյուսի թերը, վոր

անշարժ մնա : Վաղգենից հետո խսուց կոլոտ Խաչոն , քահանան և մի քանի ուրիշները : Դատավճիռը հաստատված էր : Կանդ առան կախաղանի վրա և ցրվեցին իրենց տները :

Մուրադի յերկու կամավոր տղաները վագելով՝ հասցրին լուրի ընկերներին : Գիշերը հավաքվել եյին թոնրատանը : Փալանդուցնց Հաղոն պահանջում եր խոկույն և եթ Հարձակվել ու խլել Մուրադին այդ դահիճների ձեռքից : Երան միացալ Նոյեմբը , ավելացնելով , վոր յեթե չհաջողվի փախցնել , պետք և դիմել զենքի ույժի :

Վորոշեցին գիրք բռնել Կոճղաստրի վրա , թաղնվել քարտաճավում և այնտեղից պարզել ապստամբության դրոշակը . . . իսկ ցածի կամավոր տղայքը հանկարծակի բերելով նրանց ու խառնաշիթությունից ողտովելով , կփախցնեն նրան :

— Այնպես պետք ե անել , վոր ժողովուրդը պարապ չմնա : Կտորներում թող հող , մոխիր , կաթսաներով յեռացրած ջուր պատրաստ ունենա , — առաց Հարումենց Յեղիան , նյարդային կերպով ծիծաղելով :

— Մուրադին պետք և տեղեկացնել :

— Տղերքը կասեն :

— Նոյեմբ , դրոշակը պատրաստիր , կանանց դու կղեկավարես . . .

Ամբողջ գիշեր նրանք դես ու դեն եյին վաղվզում , պատրաստություններ եյին տեսնում՝ դիմավորելու վաղվա :

Մուրադին մի քանի անգամ բերել կանգնեցնել եյին Վաղենի առաջ հարցաքննության , բայց նա համառ կերպով լսել եր : Այդ լուրիթյունն ավելի եր կատարեցնում Վաղենին և նա հրամայում եր անխնա ծեծել , տանջել , քաղցած ու ծարավ թողնել նրան , բայց վոչինչ չեր ողնում :

Վաղենն ուղում եր Մուրադն ընկնի վուները , տղաչի , ճաշակ աղերսի՝ խնայել : Թող հայհոյի , ինչ ուղում ե . անի , միայն թե չլուի : Բայց զո՞ւր : Անգամ դատավճով լուրը նա լսեց լուր , և դիմքի վոչ մի մկանը չչարժվեց :

— Վոչինչ , թոկը վիզդ դցես , են վախտն ել չե՞ս լոի . շան

ողես կղողղողաս, կաղաչես, բայց ուշ կլինի ... Խոստովանի՛ր ...
— Խոստովանիկու բան չունեմ:

— Տարե՛ք:

Կրկին տանում եյին ծակը կոխում, մինչև վոր Վաղղենը յուր
սպառնալիքը վորոշեց ի կատար ածել:

Շուն Գալուստը, մի քանի ուրիշ գյուղացիների հետ և Փեր-
դայիների զեկավարությամբ Սոլոմոնի հրապարակի վրա կախա-
զանի համար սյուներ եյին տնկում:

Մի խումբ յերեխաները բերանները բաց, խաղը թողած՝ նա-
յում եյին այդ պատճառություններին և վախեցած հարցնում
իրար.

— Եղ ի՞նչ ես անում:

— Չդիմեմ:

— Հայրիկս ասում ե, բայլշեփկ են բոնել, ոլիտի կախեն:

— Բայլշեփկը վո՞րն ե:

— Դավաճան ե:

— Հա՞ , բայլշեփկ: Բայլշեփկ-մալշեփկ չկա: Մեր Սուրառն
է, դաշնակները բոնել են, ուղում են կախել:

— Վոր ի՞նչ:

— Վոր գաշնակցական դառնա:

— Վոր կախեն, կդառնա՞ :

— Բա չի դառնա:

— Բանի՞ որ են պահելու կախած:

— Ո՞վ գիտի ... մինչև մեղա գա:

— Բա հա՞յ, ջո՞ւր ...

— Եղենց բաներ չկա: Քաղցած, ծարավ ոլիտի մնա, վոր
խելքի գա:

— Բա վոր չգա՞ :

— Եղենց կախոված ել կմնա, մինչև մեռնի ու ազուավը դա
աչքերը հանի:

— Ազուավը:

— Բա՞ ...

Զըի յեկած կանայք, աղջիկները սարսափով նայում եյին այդ
կողմը, աշխատում եյին չուտ լցնել սափորները և վախեցած,
արագ հեռանում եյին:

կեսոր եր :

Փողոցներում մարդ չեր յերեւում :

Յերկու ճիւմուր, դլխարկները ծուռ դրած՝ անցան բարձր ողարիսալների արանքում ընկած նեղ փողոցով։ Զինուի վուները դիսլում եյին քարերին ու պատերի մեջ արձադանքում եյին սմբակների չարազուշակ դուխունը։

Մանր, ճնշող որ եր լուսացին։ Գյուղը կարծես մեռած լիներ։ Բոլորը մակված աներում, չըսկով եյին խոսում, ամեն տան մեջ կտրծես մեռել կար դրված։

Դեռ յերեկվանից Հայոնի յեր վաղենի գատավճիռը։ Բոլորը դիտեյին և մախինում եյին ձեն հանել, կրծքերի տակ ուղարկով զայրույթի և բողոքի ճիչը……

Հրապարակի վրա արգեն պատրաստ եր կախաղանը։ Նա յել լուռ, իր զոհին եր սպասում։ Հանկարծ արդ լուռթյան մեջ հնչեց յեկեղեցու զանդերի ձայնը։ Այդ ձայնի վրա մարդիկ դունաւիլեցին, նայեցին իրար։ Պառավ կահայք աչքերը դեղի առաստաղ դարձին ու լուռ աղոթք մրմնջացին։ Յերեխաներն ուղեցին փողոց վաղել, մայրերը բռննցին նրանց թեւք։ Այսոր զանգերի արձաթ Հնչուններում մահվան սարսափ կա։ Աղոթքի հրավիր չե, այլ ժանող աղոստի լոթարեր կոյինչ……

Գյուղի ցածի մասից լսվեց մի շան թախօսու վոռնոց։ Կաղկանձում եր, վոռնում, և այդ ձայնն ալինի եր խոտացնում տանց այն ել մնչող, թանձրացած մթնոլորտը։

Գյուղի մեծերը գուրս յեկան տներից և զնացին դեպի հրապարակ։

Նոյեմբերի տղաների հետ դեռ մութը-մթին սար եր բարձրացել, իսկ կամուխորներին հրամայիլած եր դեմքի վոչ մի շարժումով չարտահայտել իրանց մտքինը։ Նրանք աշխատում եյին անտարքեր ձեւանալ, ալիւի հնաղանդ յերեալ, հայհոյում եյին բայլիսկիներին, բայց հուզվում եյին նրանց հոգիները։ Վախենում եյին, վոր կարող ե անհաջողության մատնել իրանց ծրագիրը, վոր յեթե տանուլ տան, ել փրկություն չկա, պետք և մեռնել կովելով մինչև արյան վերջին կաթիլը……

Աղլանցանը տրվելու յեր սարից, այդ նշանի վրա ցածից պետք և բռնկվեր ապստամբության հրղեհը։ Բոլորը դինվել եյին՝ ով ինչով կարող եր, կացին, բահ, քար, մոխիր, յեռացրած

Ջրով՝ կաթսաներ կտուշների վրա... Արտասարուի սպասում ելի՛ց աղղանչանին, վոր տեսք և պայմանը՝ Մուրադին հրամարակ ըերեւոց...

Հրապարակին կից աների կտուշների վրա համաքվել են կլշու ու յերեխա: Հրապարակ յեխող վաղոցների ծայրերին յերևացին հատ ու կենա զիմիկոր մարդիկ: Յեկեղեցու զանդերն, ինչպես քաղցած շնագալքեր, կազկանձում են անընդհատ...

Տիրացուն բերեց խաչ, աշխատարան՝ մի դունավոր թաշկինակի մեջ փաթթաթած: Դրեց մի քարի վրա, կախաղանի մոտ:

Իրար հետեւից յեկան դյուզի մեծերը ... աղա Վոսկանը քահանայի հետ:

Կամաց-կամաց հրապարակը լցվում էր: Դանդաղ համաքվում ելին զիմիկոր մարդիկ և խեղճ-խեղճ վզերը ճկած, կանգնում պատերի տակ:

Ծերտենի ալեղարդ քահանան նոտեց այն քարի վրա, ուր տիրացուն խաչ ու աշխատարան եր դրեն: Մի քանի վայրկացն ըերբառ բաց ու խուփ արեց և վերջապես բարձրածայն հորանջեց, խոր չգենչ խաչեց, բարձրացրեց զլուխը, նայեց մի քանի վայրկամ կախաղանին և դառնալով մոռը կանգնածներին՝ հարցրեց.

— Կողահի՞...

— Բան չի ասի, պինդ և շինված:

Ճածից լսվեց ձիերի խրխնջոց:

Շուտով, սրբնից հասավ վաղքենն իր խմբով: Արագ ցաւակ ձիուց, սանձը տղաներից մեկին հանձնելով՝ շտապ մոտեցավ տերտուրին ու խմբին:

— Որհնայ տե՛ք, բռարե, պարոներ, — և նյարդային արագությամբ զնոց աջ ու ձախ, նայեց չորս կողմը և աչքը կախաղանին լինկնելով՝ մի բռքե սառավ, կարծես չհասկացավ, թե այդ լինչ բան և, կարծես մոռացել եր, վոր յուր հրամանով և կանգնած բայց իսկույն սթափվելով, թակ տվեց զլուխը և շինձու համարձակությամբ՝ բարձրածայն կանչեց.

— Աեչո՛, ... Բերել...

Տնքաց, մոլաց ժողովուրդը ... Բոլորի մարմնով սարսուռ անցավ ... Վաղքենը ցասմիեց մի քարի վրա, սրեց բեկների ծայրերը, հաղաց ու կանչեց.

— Տիրելի հայրենակեցներ, քույրեր և յեղբայրներ: Ծանք փորձության որեր և ապրում մեր սուրբ հայրենիքը: Մեղ վրա-

ծանր պարտականություն և զրված՝ խիղախորեն դուրս դալ այդ փորձությունից։ Վոխերիմ թշնամին գաղաղողի մաել և մեր մեջ, բուն դրել մեր ներսում և աշխատում և կործանել մեր գարերի յերազը ... Բուսիայից յեկած բայլչերկյան աղենաը, աղպուրաց, հալատուրաց, դավաճան մեկը նողոսկել և մեր շարքերը և փորձ և արել ալստամբություն բարձրացնել, բայց այդ դիմային դսրծը բացվեց և այսոր նա պեաք և պատասխան տայտը կյանքի դնուի ... Մենք գեռ չենք կարողացել հայու բերել նրա ընկերներին, կողմանակիցներին, բայց վատահ եմ, վոր շուտով նրանք ել մեր ձեռքը կընկնեն և նրանք ել չեն խուսափի ժողովրդի արդար վրեժից։

Այդ բովելին փողոցի անկյունում յերեացին մի խումբ սպառազինված մարդիկ, ձեռներին մասնազերները պատրաստ բռնած։

— Ահա նա՛, այն սրիման, այն աղջուրացը։

Հսկեց կրկին Վազգենի ձայնը։ Բոլորը բարձրացրին գլուխոները, նայեցին այն կողմն ու տեսան պահակներով շրջապատված Մուրադին։ Սկսվեց մի իրարանցում, մի ընդհանուր ժխոր, վորեց դժվար եր բան հասկանալ։

— Մուրադ, — կանչեց մեկը, — մի վախենա, մենք այսակ ենք։

— Նա անմեղ է, լավեց մի ուրիշ ձայն։

— Ո՞վ և այդ սրիկան, թող առաջ դա՛ ... Եյ, գանել։ Ո՞վ եր։ Թող դա ապացուցի նրա անմեղությունը և յես խոսք եմ տալիս աղատ արձակել։ Թող տսի, վոր այս թոռոցիկները, այս արգելված դրականությունը, ուսմբերը նրա մոտ չենք դուել։ Թող առաջ դա ...

Մի բոսկ տիրեց լոռություն և այդ լոռության մեջ լսվեց մի ձայն։

— Ո՞վ և դրան իրավունք տվել մարդիկ կախելու ... Իրան պետք և կախել, վոր խելքի դա ...

— Վազգենը զունատվեց։ Տղաները կանդ առան կեռ ճանապարհին և ատրճանակներն ուղղեցին Մուրադի վրա ...

— Տեղից չշարժվե՛ք ... ով մի քայլ անի, դետին կփռվի։ Ճուտ, կապեցե՛ք դրան ...

Մուրադի ձեռն ու վոտը կապեցին ու թողին դետնին։

— Զիերի վրա ... Մարշ, — լսվեց Վազգենի հրամանը։ Տղա-

Ներն արար ցատկեցին ճիերի վրա, մորակեցին և խուժեցին ամբոխի մեջ՝ մտրակելով աշու ճախ...

Պահակներն ուսերից առան հրացանները և շարուեցին վաղ-
քենի կողքին:

— Շուտ, ովքե՞ր եյին: Ջայն հանեք: Յես ճեր ... Սրբեա-
ներ: Մւսրութ, հասցրու դրան:

— Յես ի՞նչ եմ արել վոր....

— Զե՞նդ ... Թվանքի կոթով տուր, քյալամալան փըշ-
րիր...

Հանկարծ մի գնդակ, վորտեղից-վորտեղ, դիպավ չինարու-
հաստ բնին և կարկտահար յիղած, իշամեղմի պես լոեց...

— Կոտր-կտոր կանեմ ... Դավաճաններ, — ճշաց վաղենը՝
կատաղությունից խոպոտած ճայնով:

Դժմալով մի ուրիշ գնդակ ել հասավ ու կպավ պատին ... մէ-
ուրիշն ել...

— Վորտեղից են կրակում:

— Սարից ...

— Խաչո՛, մի քանի տղաներով հասիր և տեղն ու տեղը շան-
սատակ արա սրիկաներին: Տես ո՞վ ե համարձակվում: — Ո՞ւմ
վրա յեն կրակում ... Շուտ...

Խաչո՛ մի քանի տղաներով սրարշավ դիմեց դեպի այն կողմ,
վորտեղից կրակում եյին ... Հիսուն քայլ հաղիս եյին արել,
վոր կրիին թնդաց հրացանը և Խաչոյի տղաներից մեկն անձայն
կրացավ, ընկավ ձիու պարանոցի վրա և արյունը սկսեց կաթել,
ներկել մոխրակույն ճիռ պարանոցը:

Սմբատը տղաներով մի վայրկյան կանը առավ, տատանվեց
ու դուաց.

— Տասը հոգի Սմբատին միանալ — մա՞սը...

Ծնցվեց ամբոխը և մինչ այդ դսպված ճիչը պոռթկաց, մոտի-
վեց վոռնոցի.

— Աղատե՛լ Մուրագին, — լալեց մի ճայն: Մի խումբ մար-
դիկ հարձակվեցին դետին ընկած Մուրագի վրա և զանակներով
կտրտեցին թոկերը:

Մուրագը վեր ցատկեց տեղից, թափ տվեց դլուխը և ինչպես
կատաղած վարագ, աչքերը արյուն կոխած, խլեց մեկի ճեռքից
ճահակը ու հարձակվեց դեպի վաղենը:

— Համազարկ, պատրաստ ... կրա՞կ...

Թօղաց հրացանների համադարձը և լոկ … Մի քանի բողե
վոչ վոք տեղից չշարժվեց : Աւ հանկարծ — ողբ լցվեց ճիշերով …
Մուրազըն աղասողներից յերկու հոգի թափալվում եյին գետ-
նին, փոշու մեջ : Արյունը հոսում եր նրանց վերքերից : Մուրազը
չկար : Աւղեցին բանել նրան, անհնացավ ամբոխի մեջ :

Տերաերը, աղա Վուկանը և մյուսները գունատ, վախից կու-
եյին յեկել, կողեւ չինարու բնին :

Վաղցենը հրամայեց մի խումբ աղաների, սարով անցնել կըս-
վաղների թիկունքը :

Վերելից կրակում եյին : Սմբատի տղերքը ձիերը թողին ցա-
ծում և թաղնվելով քարերի, թիկուի արանքում՝ գեղի մեր սո-
ղացին :

Կին, յերեխա վաղեցին կոռուրների վրա, կուղեկուղ, խուճա-
սով ցած թափնեցին կոռուրներից … Ցղամարդիկ ցած թռան,
զինված՝ ով ինչով պատահել եր ու սկսվեց … Ավում եյին իրար,
ձեռ ու վոտ կոստում, զլուխ որատում : Գյուղը յերկու մասի
յեր բաժանվել : Խոփում եյին իրար քարով, բահով զաղանակնե-
րով …

Պատուած զլուխներով, կոտրած ձեռներով մարդիկ դուրս
եյին վազում ժիսրի միջից, արյունաթաթախ, ցամից վորնա-
լով … Ամբովը խառնվել եր իրար, այլևս զժվար եր իմանալ
ով ում հետ եր կուպում :

Քահանան փորձեց զապել :

— Որհնյա՛լ ժողովուրդ … — բայց նրան լսող չկար :

Վաղցենի ցածում կանգնած տղաներն աշխատում եյին հա-
մադարկերի արգելու .սարից իջնողների առաջ դայլը … Մի քանի
ձիավորներ քշեցին ձիերը, վոր ուժեղացնեն Սմբատի թևը, բայց
հենց առաջին կտուրին հասած՝ յեռացրած կաթսայով ջուրը շրր-
ջեցին նրանց վրա : Նբանք դեռ ուշքի չնյին յեկել, վոր հարեան
կտուրից տոպրակով մոխիր ու հող թափեցին :

Այրվածքներից մորմոքներով և աչքերը հող ու մոխիր լցված,
նրանք հետ գառան՝ ցալից տնօքալով, աչքերը տրորելով և անլուր
հայույանքներ թափելով …

Մուրազի մարդիկ սկսում եյին հուսահատվել : Արդեն վեր-
ջանաւմ եյին նրանց վամփուշանները .ուժերն անհամասար ե-
յին … կարմիր դրոշակը ծածանվում եր նոյեմի ձեռքին, նա
աշխատում եր խրախուսել տղաներին :

Վաղդենը նոր նկատեց, վոր կամալորները իր գեմ են կըռ-
վում : Կրծուացրեց ատամները և ավելի կտտաղեց ... Սարի վրա
յերեացին զիսլի թիկունքն ուղարկված տղաները : Վաղդենը հըրծ-
վանքից հռհռաց .

— Համապարհ, Համապարհ, մինչեւ վերջին մարդը կոտո-
րել...

Մուրազը հասավ ընկերներին այն ժամանակ, յերբ Վաղդենի
տղաները մյուս կողմից անցնում եյին դեպի թիկունքը ...
Մուրազին տեսնելով, Նոյնին ուրախացած ճշաց : Տղա-
ները նոր ուժ տուան : Եա բարձրացրեց ձեռքը և ոռումքը նե-
տեց զնողի վեր մաղլուղ խումբը ... Պայթեց ոռումքը, լեռան
կրծքից հնչեց արձագանքը . մի քանի վայրկյան ձայնը ժայռերին
եր խիսլում և հեշում ու զրնուում ...

Այդ բովանդին մեկը սարկից նկատեց, վոր մի խումք ձիավոր-
ներ բլուծի տակի, վերջին վուրապատույտից անցան հովհատը և
որարշավ զնողի զյուղը քշեցին ... Մի բողե բոլորի հայացքնե-
րը կանգ տուան այդ ճիավորների վրա :

— Կարմիր դրաշակ...

— Մերսնը են ...

— Մերսնը են ... մերսնը...

— Ռուսա՞...

Թնդաց ողը, և վողեմբորչած տղաները, զռտելոնդիած՝
պրուս ամին զիսլի ցած ... Թիկունքից լսվեց հրացանի ձայն :
Մուրազն տուած անցավ ու կանչեց .

— Իմ հետեւց — ու ձեռքն ուումքերը նետելով, նրանք
սկսեցին իջնել :

Հեռվից հրացանի ձայներ լսնելով, ցածից յեկող ճիավորները
մտրակեցին ճիերին, մի քանի բողեյում, հասան ու մեծ դար-
պասով գյուղ մտան :

Ցածից մի քանի տեղից լսվեց ուումքերի ովայթյուն :

Վաղդենը սարսափած՝ շուրջը նայեց : Սարկից տղաները սկսել
եյին հետ նահանջել :

— Բայլշեինարն են, — լսվեց ամբոխի միջից :

Վաղդենը կատաղած, մտրակեց յուր նժույզի կողերը, կար-
ծես դա յեր մեղավոր յուր անհաջողության մեջ : Ձին ծառս յե-
ղալ, սմբակներով քանդեց զետինը և սրտնելած խրին ջաց ...
Բարերից կայծեր թռան :

— Հասիր, տես ովքնը են ...

Մեկը սլացավ, մի քանի բոսի անց, դունատ հետ յեկավ, ինչ
վոր բան փսխաց Վաղղենի ամկանջին:

— Հասիր տղերանց ... թող ճղեն վերին գյուղը... շուտ...
ու բաց թողեց ձիու գլուխը, մարակեց և ճղելով ամբոխը յերկու
մասի, գլուխը կորցրած սլացավ...

Կամաց-կամաց նրան միացան աղաները և դնուակի պես դեռի
վեր սուրացին:

Կտուրներից հող, մոխիր, ջուր թափեցին և հրհուացին, իսկ
քարերը համում եյին նրանց հետևից: Նրանք հետ չեյին նա-
յում. վախչում եյին փոշու, քարերի ու քրքիջների տարափր
տակից:

Վերելից ու ցածից, գրեթե միաժամանակ, յերեւացին գեմ-
դիմաց յերկու կարմիր դրոշակներ: Վերելից նոյնմը՝ մի խումբ
կանանց հետ, իսկ ցածից նորեկները:

Ամբոխն իրար անցավ: Մի բոսի տիրեց լոռվյուն և հան-
կարծ պոռթկացին ուրախության, ցնծության աղաղակներ, զո-
րոնք յերկար ժամանակ կախված եյին ողում:

— Հալածե՛լ, — լուսինց Մուրառի ձայնը:

Մուրառի տղաները համազարկով ճանապարհ դրին Վաղղե-
նին և իր խմբին:

Տերտերը, աղա Վոսկանը և ունեռները դունատ, լուռ սպա-
սում եյին, թե ինչով և վերջանալու այս ամենը և ի՞նչ դիրք
պետք ե բռնեն իրենք այս բոլորից հետո:

Ոհանը և մյուսներն առաջ անցան՝ շրջապատված չորս կող-
մից: Հարցական հայացքներով կախաղանի մոտ կանդ առան:

— Այս ի՞նչ բան ե:

— Կախաղան...

— Ո՞ւմ եյիք կախելու:

— Ա՛յ, սրան...

Ոհան...

— Մուրա՞գ...

Նրանք նոր կարողացան իրար ճանաչել: Գրկախառնվեցին և
յերկար ժամանակ լուռ եյին:

— Ա՛գա, սա վարպետ Ոհանը չի...

— Նա յե:

— Ասես թե նա յե:

— Վարպետ Ոհան, դո՞ւ յես...

— Ես եմ, յե՞ս:

— Վարպետ Ոհան, վարպետ Ոհան, լսվեց ամեն կողմից:

Աւ շուտով շուկն աղմուկի փոխվեց: Ամեն մեկը հրելով, հրմշառ-լով մյուսին՝ առաջ եր ուղում դալ, վոր մոտիկից տեսնի վար-պետին:

— Վարպետ, մի բարձր տեղ կանգնիր, վոր բոլորս ել տես-նենք, թե չենք հավատում,—լսվեց հետի շարքերից:

Ոհանը բարձրացավ մի քարի վրա, սրբեց ճակատի քրածինքը և գաղնալով ժողովրդին, հուզմունքից դողացող ձայնով՝ ասաց.

— Այս գեղացիք, — բա մոռացե՞լ եք ձեր վարպետ Ոհանին... Են ժամանակ գուրք նրան չլսեցիք, ձեր ասածն արիք. ու լավ ա-րիք, վոր չլսեցիք. մեկ եր՝ Են կարգերում բան չեր դուրս գա: Իսկապես վոր յերադներ: Հիմա բանվորների հետ ապրեցի Բագ-վում, մասնակցեցի քաղաքացիական կոխիներին ու շատ բան առ-կորեցի: Հիմա լսեք ինձ, յես ձեղ համար աքչալուսանք եմ յերի: Ել չկան վոչ թաղավոր, վոչ դաշնակցականներ, վոչ մուսավաթի ոռչիներ, վո չել մենչեիկներ ... Այսոր մենք յեկել ենք ձեղ մոտ և հաստատելու ձեր իշխանությունը — բանվորի, զինվորի և ոյուղացու իշխանությունը: Ես ընկերները, վոր ինձ հետ յեկել են, վորոնց գուրք չեք ճանաչում, սրանք ել ձեր բարեկամները, ձեր ընկերներն են: Սրանք ձեղ կհասկացնեն, թե ինչ բան և կոր-հրդացին իշխանությունը: Տապալից ձեղ կեղեքողների, ձեր ա-րյունը ծծողների իշխանությունը ... Թուրք եք աշխատողը, ձերն և հողը ... Կեցցե՛ Խորհրդային իշխանությունը ուռուա՛ ...

— Ուռուա՛, — լավեց այս ու այն կողմից մի քանի ձայն ու լուեց:

— Ճանապա՛րհ տվեք... Թողե՛ք... Թողե՛ք... Ո՞ւր ե... ո՞ւր ե ... Ճանկարծ լսվեց մի կանացի ձայն ամբոխի միջից, վար ճանապարհ բանալով, շնչարդել դուրս պրծավ, կանգ առաջ կախա-ղանի մոտ, գրկեց ոյունը և ել չկարողացավ առաջ գնալ:

Ոհանը տեսնելով մորը, առաջ գնաց: Մայրը պոկվեց ոյու-նից և ընկալ վորդու գիրկը:

— Եեկած ճամբի՛դ մատաղ, Ոհան ջա՛ն: Ախար պառակ նա-նիդ աչքը ջուր կտրեց:

— Նանի՛ ... Նանի՛ ...

— Նանին մեռնի անունիդ, բայա՛ս:

Ուսանը գրկեց մորը: Մի քանի վայրկյան լուռ, աչքերը խուփ մայրը նվազած մնաց վորդու գրկում ապա աչքերը բանալով, հրճվանքով մի քանի վայրկյան նայեց, և ուրախության արցունքները մեծ-մեծ կաթիլներով գլորվեցին աչքերից:

— Նանի'...

— Անունի՛դ մեռնի նանդ, Ուսան ջա՛ն, — մոմշաց նա յուր պառաված ձայնով և գրկեց տղայի գլուխը, կողը կու կրծքին: — Յեկա՞ր, յանի, ելի յերազ չի՞ տեսածու...

— Ի՞նչ յերազ, նանի՛ ... Յեկել եմ, ա՛յ, տես՝ ես ել ընկերներս. յեկել ենք՝ քեզ համար, աղքատների ու խեղճերի համար կյանք ու արև ենք բերել:

— Արմեխդ մատա՛ղ...

Նոյեմը կանգնած եր նրանց մոտ, մի ձեռքում դրոշը բռնած, մյուս ձեռքով սեղմած շրթունքները, վոր ուրախությունից չըճշա...

— Նոյեմ...

Կանչեց Ուսանը, վորը յելավ, մի քանի վայրկյան լուռ-նայեց Նոյեմին՝ առանց ձեռքը բաց թողնելու... Ուղեց մի բան ասել, բայց ժպտաց ու վոչինչ չասաց: Նոյեմը քիչ գունատ, դողդոջուն շրթունքներով շնչաց.

— Ուսան ... ընկեր Ուսան ... ու ել բան չկարողացավ ասել:

Վոսկան աղայի խումբը լսեց, վոր յեկողն իրենց վարպետն ե, խրախոսվեց մի քիչ մոտ յեկան, բարի դալուստ մաղթեցին, մորն աչքալուսանք ասին: Տերտերն ավելի մոտ յեկան. ճանապահն տվին, գլուխը կախ, յերկու տակ յեղած՝ մոտեցավ, մի քայլի վրա կանդ առավ, մինչև այդ գետին խոնհարած դլուխը՝ կարծես ճիգ գործ դնելով՝ բարձրացրեց. մեջքը մնաց կորացած: Գալադանի վրա հենաված՝ նա ձեռքի խաչով խաչակնքեց ամենքին և անդրդերդղմանային ճայնով մրմնջաց անստամ բերանով.

— Խաղաղություն ամենեցուն... Բարի լինի ձեր դալը, զավակներս ... Ասածո որհնությունը թող անպակաս լինի վրաներիցդ...

— Վա՛, տերտեր, — դարմացած կանչեց Ուսանը: — Դեռ սա՞զ ես. աֆերի՛մ: Զեյի կարծում, թե մեկ ել կտեսնեմ:

Տերտերի հանդիսավոր տօնն ընկավ: Նա մի քանի վայրկյան նայեց Ուսանին, վիրավորլած՝ մի շարժում արավ, բայց իրան զստելով և կատակի տալով՝ շարունակեց.

— Հի՛ հի՛ հի՛, —կոտրտված ծիծաղով ծիծաղեց նա, ծամ-ծմեց լողերքը: Զմեռա, ձեր գալուն եյի սպասում: Լսեցի, վոր յեկել ես, ուրախացա, ասացի, յեկել ե, ասել ե՝ սարերէց ջուր կհանի, մեր չոլերը կջրի ... հի՛ հի՛ հի: Սաղ մնացի, վոր տես-նեմ ելի ի՞նչ բաներ եք հնարելու ջահելներդ ... Ծերության վրա չեն ծիծաղի, ասոված կպատժի, —լրջանալով նկատեց նա:

— Քեֆիդ նայիր, տերտե՛ր, ու լսիր նոր մարդկանց, —և թողնելով մորը՝ դարձավ ժողովրդին: Մի քանի պառավներ շրբ-ջապատեցին Ուանի մորը.

— Համազյուղացինե՛ր, միտինդը հայտարարում եմ բացված: Ընկեր Յեղեկը ձեղ կրացատի, թե ի՞նչու յենք յեկել, ո՞վ ենք: Խոսքը ձերն ե, ընկեր Յեղե՛կ:

Ամբոխը, վոր մինչեւ այդ լուս սպասում եր, նորից իրար անցավ: Ավելի մոտ սեղմլեցին իրար և ականջները չորս արած, վեր եյին ցցել զլուխներն իրար ուսերի վրայով:

Ընկ. Յեղեկը, վոր բեխ-մուրուք ածիլած, կարճ խուլած մաղերով, կարճահասակ, ակնոցներով, մոտ 28 տարեկան տղա յեր, հանեց հազի շինելը, տվեց ընկերոջը, բարձրացավ քարի վրա, մի քանի վայրկյան նրանց զլիսի վրայով հայացքը հեռու՝ տարածության մեջ, սուղած, կարծես չգիտեր վորտեղից սկսել և սկսելու ձեւ եր փնտում: Ազա մի քանի անդամ հազար ու ասեց.

— Ընկերնե՛ր, դուք յերեկի կցկտուր կերպով իմացել եք, վոր թաղավորը չկա, վոր կոխվը վերջացել ե: Բայց մարդիկ չեն հանդատանում և կոխվը չի վերջանում: Թաղավորը բուրժուա-ների, հարուստների զլուխն ե: Նա խեղճերին հավաքել ե, տա-րել, լցրել թնալանոթի բերանը, վոր նրանց արյունով նոր-նոր յեր-կլլրներ նվաճել, վոր շուկաներ ձեռք ձգի: Հիմար, վոչխարի նման մասսաները գնում եյին դեպի մահ, դեպի ուր քշում եյին նրանց թագավորի չները:

Դաշնակ, մուսավաթ, մենչեկի և բոլոր մյուս հակահեղա-փոխական կուսակցություններն աշխատում եյին այլ ծրագրի համար: Վերջատես հնչեց Լենինի հուժկու ձայնը, հնչեց այնքան ուժգին, վոր ցնցվեց աշխարհը: Մեր կուսակցությունը Լենինի բե-րանով հասկացրեց մասսաներին, վոր մեղ խարում են: Կրոն, հայրենիք — բոլորը հնարել են իրենց շահերի համար:

Յեղ այսոր այդ բորենիների ու դիշատիչների վոհմակը վո-

չընչացած ե : Զկա ցարը և յուր չինովնիկների վոհմակներ՝ ա-
շալնիկ, պրիստավ, ժանդարմ, գարադավոյ, ուրբաղնիկ — բոլո-
րը հաղթահարված են, ընկած մեր վոստների տակ : Մենք ջախա-
խեցինք արդ յոթ զլխանի վիշապի զանդը և մեր ձեռքն առանք
յերկրի իշխանությունը : Մենք կիսենք նրանցից հողը, վոր այս-
քան տարիներ ապօրինի կերպով յուրացրել, սեփականացրել ու
լավում եյին, կիսենք ու կտանք յուր իսկական տիրոջը — աշխա-
տավորներին ... Կեցցե՛ Խորհրդային իշխանությունը, կեցցե՛
բանվորների և դյուլացիների գաշինքը, թող կորչե՛ն բուրժուա-
դիան, տերտերը, կրօնը, վոր ինչպես թմբեցնող հաջը այսքան
յերկար տարիներ քննեցրել և մեղ...

Տերտերը դողալով ուղեց վեր կենալ, կրկին ընկավ, գունատ-
վեց մեռելի պես ... Հանկարծ արյունը դեսի դլուխը հոսեց . զեմ-
քը ծածկվեց կարմիր բծերով. բարձրացրեց գավաղանը, բայց
խոսել չկարողացավ և մտնելով ուղեկցի թեր՝ որորվող քայլե-
րով արագ-արագ շարժվեց մի քիչ առաջ, ապա նորից կանդնեց և
հուզված ճայնով ճաց .

— Աստված կպատժի սատանայից մոլորվածներին : Նզո՛վք
նրան, ով սրտից կհանի աստո սուրբ պատկերը : Հիսուս-Քրիստո-
սը կանի նրանց գիշանը : Ով չի ուզում զեհենի բաժին դառնալ, ով
չի ուզում, վոր ասածու ցասումը նրա յոթ սերունդների վրա
պայթի — հեռո՛ւ այս նզովյալներից, այս ժանդախտով վարակ-
ված մարդկանցից ... Դեպի՛ յեկեղեցի . աղոթենք մեր մեղքերի
քավության համար ... Տիրացո՛ւ, զանդերը ... Ժողովո՛ւրդ ...

Գյուղացիները վախեցած՝ մեկ նորեկների կողմն եյին նա-
յուռմ, մեկ տերտերի և լուռ եյին :

— Ի՞նչ եք մոլորել, ա՛յ խալիս, մեր ինեղձերի համար վրկու-
թյուն և յեկել, ևս մարդիկ որ ու արև են բերել, կանչեք՝ ուռ-
ուա՛ ...

— Ուռուա՛ ... ուռուա՛ ...

Ալելի բուռն հնչեց ուռուն և լսեց Մուրադի խոսքի վրա :

— Գեղացիք, հասկացեք ես ընկերոջ ասածը : Հարուստները,
տերտերն ու իշխանություն ունեցողները հալբաթ քի շատ քացի-
քացի պիտի անեն : Բա հե՞շտ քան է իշխանությունից դրկվելը :
Փալանդուզենց Հագոն լավ ասաց, վոր որ ու արև ենք բերել ձեզ
համար : Եդ հարուստներին տված ձեր վեքսիլների մեջ թող աղո-
վոսկանը, ձուղուրենց հարսեղը, աղա Պողոսը բանոթի վաթա-

թեն: Ել պրծավ՝ նրանց իշխանությունը, դուք ձեր պարտքը շատունց ե, վոր ավել, պրծել եք: Հիմա մեր բանվորը, գյուղացին իրանց համար կառավարություն կընտրեն, լավ չեղավ՝ ուրիշը կընարենք: Մկնորը դժվար է, սխալներ շատ կլինեն, պետք ե որ ու դիշեր աշխատենք, սովորենք... կսովորենք, վորովհետեւ խեղճի ցավը խեղճը լավ է հասկանաւ ու ցավին ճար կանի. միացած, ձևաք-ձեռքի տված կկառավարենք: Ես քարուքանդ յեղած աշխարհը կընենք և կսանձահարենք տղրուկներին, տերտերներին, վոր մեր արյունը ծեծլով են առղել ու կըառնանք մեր յերկրի, մեր աշխատանքի տերը:

— Աղա՛, Մուրադ, եղ ինչե՞ր ես դուրս տալիս, — կանչեց աղա Վոսկանը:

— Աղա Վոսկան, մենք քեզ հետ համ գործ շատ ունենք:

— Որհնյալ ժողովուրդ, հանո՞ւն Հիսուս Քրիստոսի, չգայ-թաղղվեք սատանայից, չընկնեք մոլորության մեջ: Տերն մեր Հիսուս Քրիստոսը չխարվեց սատանայի վորողայթներից: Մենք ել պետքեն զգույշ լինենք՝ ծուղակ չընկնելու ... ցրկեցե՞ք ձեր տները և տերն մեր աստված սմենակարող թող պահապան լինի ձեզ: Անրարտավանությունը և որինազանցությունը միշտ պա-տրժվել ե և կպատժվի...

— Ա՛յ, խալիս, ճանապարհ ավելի՝ եղ սեահողի ու սեազգեստ-ները հեռանան. դրանց տեղը չի, դրանց հետ հաշիվներս հետո կմաքրենք: Մենք եսոր դործ շատ ունենք: Միտինուր շարունակ-վում ե:

Տերտերն արագ մոտեցավ հարուստների խմբին ու հուղմուն-քից զողալով՝ դժուկյն շրթունքներով շնչաց.

— Հեռո՛ւ այս ժանդարմությունը:

Նրանք շարժվեցին դեպի յեկեղեցի, մի քանու միացան նրանց խմբին, իսկ զդիր Կարապետն՝ աչքերը ճպճպացնելով՝ մի քանի անդամ վաղեց նրանց հետեւյց, հետ յեկավ ու ժանդուսած ճայն ով ճշաց.

— Ա՛յ դեղացիք, անաստված իշխանությունը մեղ պետք չի, մենք մեր իշխանությունն ել ունենք, մեր կառավարությունն ել...

— Ե՛յ, քսոսու շուն ... ոադ յեղիր: Վաղիր թուլի պես, հա-սիր տերտերիդ: Մենք քո իշխանների գլուխները արորեցինք բայլէնեիների կրունկների տակ: Բա՛դ, թե չե դատարկ գլուխդ քո ձեռքի դադանակով կփշեմ:

Գղիրը վախեցած շուռ յեկավ և վազելով հասավ նրանց :

— Պարոն ջան :

— Ել պարոններ չկան :

— Ընկեր ջան, մի գրուտ ասա՛, յանի եղ ասածներդ յերա՞զ ե, թե՞ ականջներիս չեմ հավատում, թվում ե, թե մեղ եք ձեռք առել, վոր վրաներս ծիծաղեք : Ախար դա լինելու բան ե :

— Քեֆդ քոք պահի, յեղել-պրծել և : Թող մի քիչ կարդէ ընկնենք, եղ հարուստներին իրանց տեղը նստացնենք : Դրանից հետո յել կանցնենք ջրին, ջրի մասին հողալուն : Շատ չի անցեի՝ մեր գեղի տակի հողերը կկենդանան, շունչ կառնեն : Թոմայի ձորը մի հսկա լիճ կդառնա և եղ հսկա լեշը կյանքու կցվի ։ Կորչի՛ բուրժուազիան, կեցցե՛ մեր իշխանությունը :

— Ուռոա՛ ։ Ուռոա՛ ։

Ամբողջ ժողովուրդը, մեկի պես, թնդացրեց լեռներն ուռայի աղաղակներով :

Զյունը դեռ նոր եր սկսել հալվել :

Բնությունը սառույցների տակից տեղ-տեղ բարձրացրել եր գլուխը և սեխն եր տալիս : Գոլորչի յեր բարձրանում արևի տակ ջերմացած խաղողի գերեզմաններից :

Լեռների գագաթների ձյունը համառում եր, չեր ուղում տեղի տալ տաք արևին և ամուր կպած խոր ընկած ժայռերի կրծքին՝ չողլողում եր արևի տակ :

Տարափոխիկ առաջին թռչունները, վոր շտապել եյին տաք յերկրներից վերադառնալ, մոլորված այս ու այն կողմ եյին թուրչ-կոտում ու լալագին, վողորմելի ձայնով ճշում հուսահատ :

Գարուն եր դալիս :

Ավելի ուժեղ պայթեց ամրոցը և անձրել հորդ շիթերով տեղորրը, և լեռներն իրար ձայն տվին : Արձագանքն առաջ այդ ձայնը թների վրա, տարավ հեռու, կապտին տվող լեռներին, վորոնց գագաթների ձյունը, թվում եր՝ յերբեք չպիտի հալիք :

Ավելի ուժեղ պայթեց ամրոցը և անձրել հորդ շիթերով տեղաց : Զյունը, վոր կարծես դիմադրում եր արմին և չեր ուղում խառնվել սևացած հողի մերկությանը, այլևս անկարող դիմադրելու՝ զայրույթից լաց յեղավ, և առվակները խուճապով ցած նետեցին իրնեց, խոր ակոսելով լեռների կուրծքը :

Ցեխախառն վտակները, չանգուստելով լեռների կողերը, պըդ-

տորպղառը, արագահոս, վոլորապտույտ ճանապարհ բանալով, զլրսիցին և իրար միանալով, թափվեցին ցածում հոսող գետը:

Դեռև ել դուրս պրծավ ապառաժյա վանդակից և բաշը թափ տալով՝ մռնչաց:

Թոչուները պահվուեցին ժայռերի ճեղքածքներում: Գայլ ու աղվես, եղ ու արու իրար գտել, թագնվել եյին վորջերում: Յերկչոտ նապաստակը քարից քար եր ցատկուում՝ մի տեղ թագնվելու համար:

Այդ լեռների մեջ մի բլրի ստորոտում կուչ եր յեկել յերկամուղու վերջին կայարանը: Այդտեղ վերջանում ե յերկաթուղին, և լեռների միջով վեր և բարձրանում վոլորապտույտ խճուղին:

Անտարբեր բնության այդ հույղին, կայարանից հնչեց շոգեմերնայի սուլիզը՝ հանդուղն, համարձակ, և վագոններն իրար բաղխելով, կանդ առան՝ շղթաները դրնացնելով. իսկ անձրել վերեվից ծեծում եր վաղոնների կտուրը թափառ խշոցով:

Ենանյութերով բեռնավորված առաջին գնացքը կանդ առագ այդ կայարանում, և կրկին հնչեց շչակը՝ հաղթական, վորոտ ու կայծակ արհամարելով:

Ամպերը ծվենածվեն յեղած՝ լողում եյին գեղի հարավ: Ամպերի միջից տեղ-տեղ կապտին և տալիս պարզ ու հստակ յերկինքը, իսկ յերկիրը հանդիսաւ փուլել ե, մեկնել վոտները, չնչում և անդորր...

Անընդհատ, լեռներով գեպի վեր և բարձրանում խճուղին և կորչում և լեռների մեջ:

35 կիլոմետր ճանապարհը ճգված և լեռներով մինչև Դ. Գյուղը:

Լեռների միջի այդ կայարանը, խճուղին այդ լեռներում կենդանություն են ստացել: Ամեն որ մարդատար գնացքների պոչից կասրված 3—4 վագոն շինանյութ եր հասնում:

Ֆուրդոնների գլուխոցը, ուղտերի քարավանի անուշ զնդոցը չեր կտրվում այդ՝ մինչև այժմ վոչ բանուկ խճուղու վրա:

Կայարանում առավոտից մինչև ուշ գիշեր լսվում եյին բանվորների աղմուկը, ուելսերի դրնացը:

Վաղոններից կրում եյին ցեմենտի տակառներ, փայտեղեն, մեքենաներ, լայն խողովակներ:

Առավոտից սկսվում եր աշխատանքը : Կյանքը յեռում եր : Վագոնների ահաղին աղմուկով իջեցնում և ցած ելին գյում ծանր թուղի կտորները :

Մի քանի որ ե , ինչ փոշոտ , քարքարոտ խճուզու վրա դղբրդալով , ահաղին աղմուկով , ճուռալով բեռան տակ , քարերի վրայից ցատկոտելով վեր են բարձրանում շինանյութերով բարձմած և ձի լծած ֆուրդոններ : Զիերի վրայից կոլորչի յե բարձրանում . տնքալով նրանք քայլ առ քայլ առաջ են տանում ծանր բեռը , լարելով իրենց ուժեղ մկանների ամրող կարողությունը :

Բանվորների մի ստվար խումբ շտապ կարգի յե բերում ավերկած խճուզին , մաքրում գետաքարերից , վորոնց այնպես առատորեն քեն , բերել են սարերի անձրևաջրերը :

Մութ ե :

Անթափանցելի խավար :

Մուգ կապույտ յերկինքն այստեղ , այս լեռներում կարծես ավելի բարձր ե : Աստղերը կարծես ծակոտիններ են , վորոնց միջից յերեսում ե մի պայծառ լուսալոր աշխարհ և այլանսահման կապույտը մի վարագույր ե՝ մեր աչքերից թագնելու այն լուսավոր , պայծառ աշխարհը :

Հեռվում , շատ հեռվում , խավարի մեջ լավում և գետի թույլ ձայնը :

Ահուելի յե շրջապատը :

Զորս կողմից բարձրացող լեռները զարդանդ են աղղում :

Զորի բերանին լույս ե յերեսում փոքրիկ , աղոտ մի լույս : Մի քիչ հեռու մի ուրիշը պլարում ե , աչքով անում և կարծես ահա պիտի մարի :

Լուրջյունը կապարի պես ծանրացել ե այդ հովտի վրա :

Շո՞ւն ե , թե՞ գայլ ե վոռնում :

Զորի գլխից կարծ ընդհատումներով լավում ե այդ ձայնը , վոր մերթ մատենում ե , մերթ ավելի հեռվից լավում :

Վարտեղ լույսերն են , այնուեղից լավեց չների հաջոց և ըդթաների ձայն :

Քիչ անց՝ նույն տեղից թնդաց հրացանը : Արձագանքը փշրվեց լեռների մեջ ու լուեց :

Կարգից գայլի վոռնոցը , վոր հէջում եր այնողե՛ս թախծոտ :

Ծները հանդարտվեցին , ու կրկին տիրեց խոր լռություն :

Բայց ահա կրկին ...

Ավելի հեռվից լովեց քաղցած զայլի վողբաձայն վոռնոցը—
ավելի թախծոտ ու ճնշող :

Լույսը բացվում է :

Ահա մի վրան : Կիսամութիւն մեջ հաղիկ և նշմարվում : Մի քիչ
հետո ստվերագծված և մեկ ուրիշը :

Այսուղ, ուր թումայի վանքի փլատակներն եյին, յերեաց
տախտակներից շինված մի ընդարձակ ծածկոց, վորի տակ իրար
վրա դարսված են ցեմենտի տակասներ, տախտակներ, ուելսեր,
խողովակներ և այլ չընանյութեր :

Արեւ գեռ նոր եր զլուխը հանել կոճղասարի հետելից, յերբ
Ո. քաղաքից, Վասկեծորի զյուղերից, ամեն կողմից սկսեցին շա-
րան-շարան, խմբերով գեղի ծորը զալ բանվոր-գյուղացիներ : Կես
ժամ անց՝ ամբողջ հովիտը, ծորը լցվեց մարդկանց ձայներով :

Զնդաց քլունգը՝ զարնվելով կարծր դրանիտի ապառաժնե-
քին :

Աշխատանքի որը սկսվեց :

Չորի զիմին, ձորի մեջ մարդիկ մեղուների նման իրար ան-
ցած՝ վիսում եյին :

Դ. գյուղից, Ո. քաղաքից, ըրջակա գյուղերից ամեն որ նոր-
նոր բանվորներ են գալիս :

Տախտակից շինած դրասենյակը լիքն և նոր բանվորներով :

Ինժեներ Ղամբարյանը, վորը զեկավարում և աշխատանքները,
մտադիր և յերկու տարուց վերջացնել ելեքտրակայանի և ջրամ-
բարների գործը, ու անսպաս յեռանդով, ամբողջ որը վոտքի վրա՝
հսկում, ցուցումներ և տալիս :

Ջորի գլխին, գետից սկսած ջրանցքն են փորում, ձորի ավա-
զաններն են մաքրում, ցեմենտով են լցնում կամկածելի տեղերը,
չոր ջուր չղողանան : Ելեքտրակայանն արդեն մի մետր բարձրա-
ցել և գետնից :

Ամայի ձորը փոխվել և մի մրջնոցի, ուր մարդիկ ժրաջան մըր-
ջունների նման կառուցում են վարպետ Ռհանի ջրամբարները :

Միալար աղմուկի միջից մերթ ընդ մերթ վորոսում և գինա-
միտը, և լեռները թնդում են սարսափիած :

Վարպետ Ռհանը հաճախ զալիս եր գիտելու աշխատանքները
և հրճվանքից ժամանը չեր իջնում ըրթունքների վրայից :

Նա կատակներ եր անում, խրախուսում, թառիրի գցում, թե ո՞վ ալիշի յավ կաշխատի, իսկ ինժեներին հանդիպելուց՝ ծաղը բում եր ինքն իրան, վոր այնքան միամիտ եր, վոր կարծում եր, թե հնարավոր եր սեփական ուժերով, գյուղացիների հետ իրագործել այդ հակա ծրագիրը և սրտանց ծիծաղում եր յուր տղիտության վրա :

Որորի վրա արագանում եյին տեմպերը : Ինժեներ Ղամբարյանն ամբողջ որը բանվորների հետ եր. դրզում եր ծույլերին, խրախուսում աշխատանքներին, վոր յեռանդ չխնայեն :

Տեխնիկները, տասնապետները, բանվորները, գրասենյակային աշխատավորները հարգում, սիրում եյին նրան և միմյանց մրցման եյին հրավիրում : Աշխատանքներն արագ թափով առաջ եյին զնում : Բայց նա խնայել չգիտեր, թերացողների վերաբերումամբ անխնա եր, դաժան :

Խոհանոցից ծովա եր բարձրանում, վորտեղ 150 մարդու համար թեյ, նախաճաշ և ճաշ եր պատրաստվում : Իսկ խոհանոցից քիչ հեռու, աղբակույտի վրա գեսից-դենից հավաքված քաղցած չներ եյին զգղղովում — վոսկորի համար :

Բանվորակի խանութում գնորդներ չկային . վարիչը զրաղված եր հաշիմներով, իսկ գործակատարներն անդորձ եյին . նրանք սպասում եյին շշակի ծայնին, վորից հետո ել քիթ սրբելու ժամանակ չեր լինելու :

Ելեքտրական լույսերը ձորի գլխից իջնում են գեղի հովիտը : Գորշ ու մոայլ լեռների մեջ այդ լույսերը լուսատու հրթիռների են նման, վոր գեղի յերկինք են նետել և նըանք քարացել են տեղներում :

Հովտում ,ելեքտրական լույսերի տակ, յերեսում են սպիտակ տնակներ, իսկ ձորի գլխին հաղիկ նշմարվում ե ելեքտրոկայանի սովորագիծը :

Լույսը բացվում է : Հորիզոնը վարդագույն ներկվեց :

— Սուր ժանիքներով, մշուշի շղարշի միջից նշմարվում են հեռվում կապոին տվող լեռների գաղաթները :

Ավելի մոռ, հովտի վերջում գետն ե տեղաւոր բարձրացրել մեջքը քնից նոր զարթնած կատվի պես և դալարվում ե՝ նեղ ափերի մեջ կաշկանդված :

Ազուավների մի խումբ արագ անցավ ձորի վրայով և անձայն իջան աղբակույտի վրա :

Սարերից լսվեց կաքավների յերգը, վորոնք իրար ձայն տառվ, սիկաճեմ քայլում են գրանիտյա դղյակներում։ Ահա մի աղջես՝ թաղնվելով քարերի հետեւմ և մերժ դուրս դաշտով քարերի արանքից, զգուշությամբ, վոլորապտույտ վորսող անելով քարչ և տախիս յուր թափ պոչը։ Նա անցավ բլրի հետեւ, թաղնվեց։

Արեւելքը կաս կարմիր կտրեց։ Լեռների զագաթները շառագունեցին, եկեքտրական լույսերը միանգամայն հանգան։ Արեւ մի զունդ շիկացած յերկաթի նման յերեաց Կոճղ լեռան յերկու սրածայր զագաթների միջև։ Ամբողջ ձորագլուխը վողողվեց արեւի լույսով. աստիճանաբար ճառադայթները դեպի ցած սահեցին և լուսավորեցին թումայի ձորն ու հովիտը։

Զորի գլխին եկեքտրակայանի շանթարդելին կպած ծածան-վում եր կարմիր դրոշակը։

Պահակներ են կանդած բարձրում, ձորի գլխին և ցածում՝ ձորի բերանին։ Այդ հարյուրավոր տարիներով ամայի հովիտը կենտանացել է։ Փոքրիկ, սպիտակ տնակների առջև ծառեր են բոյ քաշել և խոտերի մեջ, չնկշնկացող աղբյուրի շուրջը, ծաղիկներ են բացվել և գլուխները զեպի արեւ դարձրել։

Վարպետ Ռհանի յերազն այսոր իրականանում եւ։

Վերին գետի զարավոր ընթացքը վոխվել եւ նրա ջուրն այսոր առաջին անգամ պետք և ջրանցքով անցնի և ջրվեժ դարձած, թափվի թումայի ձորը։ Այսոր գետի յերախը կաշկանդող Այսուլը պիտի բացվի։ Ձորի բոլոր շլյուզները պիտի բացվեն։

Կրցվեն բոլոր ավազանները, կծփան լճակները արծաթաշլրված լուսնի լույսից, ծփանքի հետ խաղեր կխաղան արեւի ճառագայթները։ Ամառվա տոթ որերին, վաղորդյան զովին լեռներից կեղնեն կաքավ ու յեղնիկ և նապաստակը՝ թափ տալով լայն ականջները . . .

Թուչուն ու դաղան, վոչխարի հոտ և նախիր այստեղ, այս ճակների մոտ կըսան հագեցնելու իրան ծարավը։

Գտղատու այդիներով կծածկվի ամբողջ հովիտը։ Բնեթե զեփուուը կշնչնկա ծառերի տերեւների մեջ։

Կթնլա տրակտորը, պատառելով կույս հողի կուրծքը։ Թունալուները, սարսափից ահաբեկված, կթաղնվեն բարձր ասլա-ռամբակի մեջ։

Կոլխոզի ու խորհրդային տնտեսության մեջ կծփան ցորենի և դարու արտերը, սպիտակ զանդակածաղիկների պես կկախվեն բամբակի փաթիլները, խաղողի այդիներում խնամքով կշարպեն

շարան-շարան խնձորի, տանձի, կեռասի ու բալի ծառուղիները. ծիրանը կժպտա տերևների միջից, նազլու գեղձն աշնանը կկաթի կանաչ խոտերի վրա, ինչպես մի անհայտ թուշունի սպիտակ ձվաներ, թազնված կանաչահյուս բնի մեջ: Ալիքուխարաբան կղեղնի հակինթի նման, և նշաճե կորիղը կփայլի նրա կրծքի մեջ, ինչպես ունտղենյան նկար: Յեվ ել ի՞նչ ի՞նչ պտուղներ չեն հասնի այդ յերեմնի ամայի անապատում, ուր ոճն ու կարիճն եր բազմանում. անապատը կփոխվի ծաղկած անդաստանի:

ՑՆԾՈՒՄ Ե ՀՈՎԼԻՄԸ:

Այսոր հաղթության տոն ե:

Վոսկեձորի բոլոր գյուղերից, Ո. քաղաքից, ամեն կողմից է շերով, ձիերով, ջորիներով զալիս են ու գալիս:

Ցածի գետից մինչև ձորաբերանն ամբողջ խճուղին բռնված և վոտավորներով: Կին, յերեխա, մեծ, փոքր — բոլորը շտապում են դեպի թոմայի ձորը: Ամեն մեկն աշխատում է մոտ կանգնել դրոշակներով զարգարված պատվանդաննին, վորի վրա գիրլյանդների ու ծաղիկների մեջ դրված ե լենինի կիսանդրին: Այս ու այդ կողմից դիլ ճշում ե զուտնան, զրմբում ե թմբուկը, և արձագանքը մի քանի կողմից կրկնում է այդ ձայները, վորոնք կարծեն չուղենալով հետ մեալ, իրենք ել լիաթոք միանում են այդ ցըն ծությանը:

Մի տեղ յալի յեն բոնել, մի ուրիշ տեղ, ըրջապատել են գոտեմարտողներին, մրգավաճառները քաղալակներով միրգ են իշեցնում էշերից:

Նրանք, վոր վաղ առավոտից սայլերով տեղ են հասել, ոջախ են արել. ծուկը բարձրանում ե, կաթսաների մեջ խլութում է խաշաման:

Սա աստվածածնի տոն չի, սուրբ Սարգիս չե, վոչ ել սուրբ Գեղորդ. սա հաղթության տոն ե:

Հաղթական կամարը, վորի տակից պետք է անցնեն կենտրոնից յեկող ընկերները, զարդարված ե ծաղիկներով ու դալար ճյուղերով:

Բանուրները հաղթական, բաց ճակատով՝ վերջացնում են տոնի վերջին պատրաստությունները:

Զորի աջ ու ձախ կողմերում կանդած պահակների դնմքին ել խաղում է ժաղիմը:

Այսոր, այս մեծ տոնին ամեն կողմից ուխտի յե յեկել աշխատավորությունը սրտի անհուն հրճվանքով, սրտատրով նա սպասում և տեսնելու, թե ինչպես տարիներով չոր ու ցամուք ձորն այսոր պետք ե հեղեղվի, և ցածում ընկած ճաքճաքած հսկա լիչն ազահորեն ծծի կենսատու հեղումը:

Կեսոր և: Գորչ ու մռայլ այդ շրջապատի մեջ տոնական զգեստներով, կանաչ, կարմիր հաղած կին ու աղջիկ՝ յերգ և յերգում, պար պարուժ:

Ոդը թնդում և հարյուրավոր մարդկանց գոռում գոչումով: Զուտնան և ճշում, թմրահարը այնքան ուժգին և հարվածում, գոր ասես հիմա կեռ գլուխ թմրափայտը՝ պատռելով չոր կաշին՝ ծվեն-ծվեն կանի ու այնպես կլուի:

Այդ ուրախ, յերջանիկ գեմքերի մեջ մի ժայռի տակ կուչ յեկած՝ կանդնած նայում են Մակիչն ու զղիր կարապետը: Նրանք մաս չունեն այդ ուրախությունից, նրանց գեմքի վրա ափսոսանք կա, նախանձ ու զայրույթ:

Նրանք ավելի կծկվեցին և աշխատեցին անձանաչելի մնալ, յերբ նկատեցին Նոյեմին մի խումբ կանանց հետ, վորոնք գրոշակով իրենց կողմն եյին դալիս: Ու քաղաքից ել յերեացին դրոշակավոր կանայք՝ շատերն առանց չարսավի պլոմանք ել չարսավով:

Նոյեմը իր խմբով մոտեցավ ու յերբ համասարավեց Մակիչին և զղիրին, մի քայլ արալ գեսլի նրանց ու ճանաչելով՝ մի արհամարտկան հայացք նեստեց նրանց կողմը և ծիծաղելով անցավ:

Յերկու կանանց խմբերը գնացին իրար ընդառաջ և թուրք ու հայ կանայք միացրին իրենց դրոշակները, ուռուա՛ կանչեցին և խառնվեցին իրար՝ ջերմ համբյուրներով:

Հանկարծ հեռվից լսվեց մի խուլ աղմուկ, վոր հետղհետե մոտենում եր:

Չորի գլխին յերեացին մի քանի հոգի: Նրանք ձորն եյին իշնում և նրանց առաջանալու հետ ուժեղանում եյին ուրախության բուռն աղաղակները: Ամեն կողմից մոտենում և շրջապատում եյին նրանց: Աստիճան-աստիճան նրանք ցած եյին իշնում: Բանվորներն ել ամեն կողմից վաղելով, միանում եյին իշնող խմբին: Ցընծալից աղմուկը քանի դնում, մոտենում եր: Նախկին խուլ, անորոշ աղմուկը մեծացավ, ուռացավ և պոռթկաց հրճվանքի վորելով որովհության ճիչը:

Չորի բերանին յերեաց բանվորների խուռն բաղմություն՝

ձեռների վրա բերելով ինժեներ Ղամբարյանին և վարպետ Ռհանին:

Ցածում մասսան իրար անցավ: Հուզված ծովի պես՝ այլայլ-վեց, որորվեց հետ ու առաջ և իրար սեղմված՝ դրոհ տվեց դեպի ձորը:

Մի քանի րոպե վողեռության բուռն արտահայտությունը, վորը գուրս ժայթքեց հարյուրավոր մարդկանց կրծքերից, թշն-դացրեց շրջակա լեռները:

Վարպետ Ռհանն ուզեց խոսել, բայց հուզմունքից վոչինչ չկարողացավ ասել և գրկելով ինժեներ Ղամբարյանին, հաղիկ կարողացավ արտասանել.

— Սա ... սա ... գիտությունը և ... — սրտի արագ զար-կից նա շնչարդել եր լինում: Մի քիչ հանգստանալով և մտքերը հավաքելով շարունակեց.

— Առանց սրան, առանց Խորհրդային աշխարհի, առանց ձեղ, առանց գիտության իմ յերազը միշտ ել ցնորք կմնար, անիրա-գործելի մի յերազ: Վոչ յես, վոչ մենք բոլորս միասին անկա-րող կլինեինք այսքան դժվարություններ հաղթահարել: Բուր-ժուական կարգերում հողն ու ջուրը մերը չեր, այլ նրանցը՝ աղա-Վոսկաններինը, իսկ նրանց պետք չեյին նոր ջրանցքներ, յե-ղածներն ել նրանց հերիք եյին, վոր տողեն, ճարպակալեն... Յես զառանցում եյի, այն կարգերում խելագարություն եր մտածել սրա մասին, իսկ Խորհրդային աշխարհը իմ յերազն իրականու-թյան փոխեց: Աշխատավոր գյուղացիությունը մի շունչ, մի հո-գի դարձած լծվեց գործի և այսոր նա պիտի վայելի յուր քրտնա-շան աշխատանքի պլուղը: Կեցցե՛ գիտությունը և մեր Խորհր-դային իշխանությունը, վոր լայն ճանապարհ և բացել գիտու-թյան առաջ ... Քիչ հետո պետք ե բացեն շլուզները, և վերին գետը կդա կյանք տալու այս գարավոր մեռելին...

Հեռվից լավեց ավտոյի թույլ դղչղոց:

Ղամբարյանն ինչ վոր շշնջաց վարպետ Ռհանին, Ռհանը բարձ-րացրեց գլուխը, մի քանի վայրկյան լուռ նայեց խճուղու կողմը, փոշու ամպի մեջ իրար հետեւից սլացող յերկու ավտոներին և կանչեց.

— Նրանք են ... Ընդառաջ մեր իշխանությանը...

Զորի զլիսից մինչև ձորաբերանը մեկը մյուսի հետեւից վեր ռարձրացան կարմիր դրոշներ : Քաղաքից յեկած յերաժշտախումբը նվազեց «Եւտերնացիոնալ» և ամրոխը գլխարաց, լուռ, աչքերը հասած պատվանդանին կանգնած քաղաքից յեկած հյուրերին ոպասում եր նրանց խոսքին :

Վերջին խոսողը գրավատեց ինժեներ Ղամբարյանի յեռանդը, վոր կարսդացավ նշանակված ժամանակից 15 որ առաջ իրագործել ծրագիրը : Շնորհակալություն հայտնեց բանվորներին, վոր ուժու առ յեռանդ չխնայեցին, իսկ վերջում անցավ վարպետ Ռհանին, յերկար խոսեց նրա մասին և հայտարարեց, վոր կառավարությունը նրան չնորհում և աշխատանքի հերոսի բարձր տիտղոսը :

Ձորը, հովիտը, լեռները թնդացին մասսայի բուռն վողջունից, և յերկար չեր ընդհատվում կեցցեների, ուռաների աղաղակը :

Ժամը 4-ից 15 բոպե անց ողի մեջ վեր սրացավ հրթիռը և պալիեց...

Յերաժշտությունը լոեց :

— Բանալ Այուղները ... — ելեքտրական կայարանի հեռախոսի մեջ լսվեց ինժեներ Ղամբարյանի հուզմունքից գողացող, բայց իշխող, ինքնավատահ ձայնը :

— Բանալ Այուղները ...

— Բանալ Այուղները ... բանալ ... ձայն տպին իրար Այուղների մոռ կանգնած բանվորները :

Հրթիռն ավելաց, վոր առաջին կոհակն անցավ ջրանցքը :

Հանկարծ լոեց ամեն ինչ ... Վոչ մի շուկա ...

Հարյուրամբոր մարդիկ շունչներն իրենց քաշած, լուռ, սրատարոփ սպասում են : Նրանք լսում են իրենց սրտերի զարկը ... Վայրի յաները ժամեր են թվում ...

Բոլոր հայացքները հառած են ձորին, մի վայրկյան յերադ և թվում այս բոլորը : Թվում ե, թէ զուր են սպասում, ծիծաղելի յին հրաշքի սպասել ...

Լարված ուշադրությամբ, գլուխները վեր ցցած, ամեն ինչ մոռացած, նրանք սպասում են, կարծես մոռացել են, թէ ինչի ձորը կարծես հիպնոսել ե բոլորի հայացքները ... Ամեն մեկն աշխատում և առաջինը ինքը տեսէի ...

Ինչ զանդաղ և անցնում ժամանակը : Մարդիկ հողնեցին լարված գրությունից, իրար սեղմած գլուխների ծովը տարբուքեր-մեց ... Ամբոխն սկսեց անհամբերության նշաններ ցույց տալ :


- Կամաց, վոտս...
- Սուս...
- Մի յերիխամոր գրկում սկսեց լալ:
- Ձենդ կտրիր, —կանչեցին այս ու այն կողմից:
- Կրկին տիրեց լոռւթյուն:
- Լսեցի՞ր...
- Հը՞...
- Ձուրն ե...
- Սուս, կամաց...
- Յես լսում եմ:
- Ղալաթ ևս անում: Ձենդ կտրիր:
- Վոտի տակ մի շուն ընկավ և չկարողանալով դուրս գալ անհամար վոտների արանքից, վնդստալով դես ու զեն եր դիալչում և վոտքերի հարպածներ ընդունում...
- Պչոլ...
- Դուրս արեք...
- Կորի՛ր, ա՛յ շուն...
- Աղա՛, մի ձեններդ կտրեցէք, ե՛...
- Սպասի՛ր, սպասի՛ր:
- Ասես թե լսում եմ:
- Եղակես թվում ե...
- Կրկին տիրեց լոռւթյուն:
- Ահ... հանկարծ դուրս թռավ հարյուրավոր կրծքերից Գլուխների ծովը հետ գնաց ու մի վայրկյան մնաց քարացած...
- Գետը ... գետը...
- Մեկը հիստերիկ հոհոաց:
- Զորի գլմից, ինչպես վանդակից գուրս պրծան առյուծ՝ պըղտոր, փրփրագեղ ալիքն իրեն ցած նետեց և փշուր-փշուր յեղավ Առաջին ալիքին հետեւց յերկրորդը, յերրորդը, և լայնաբերան ջրվեժը, անլոնդհատ հոսանքով զարկեց ձորի կարծր հատակին, ժայռերին սրսկեց մանրիկ կաթիլներ, ու ջրի փոշու մեջ փայլեց ծիածանը:
- Մի քանի ծերունիներ ուրախությունից արցունքներն աչքերին գետին ընկան և սկսեցին համբուրել հողը:
- Ճնծության աղաղակները խլացրին յերաժշտության ձայնը...

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028519

ԳՐԱՅ 2 Ռ. 50 Կ.



ՄԵԿ
ՕՐԻՆԱԿ

Մ. ՄԱՆՎԵԼՅԱՆ
ПУСТЫНЯ ПРОЦВЕТЕТ
ГИЗ ССР Армения Эривань